

ՄԱՍԻՍ


ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԻԵ. ՏԱՐԻ ԹԻ 48 (1248) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՄԱՐ 6, 2007
VOLUME 25, NO. 48 (1248) SATURDAY, JANUARY 6, 2007




Պաշտօնաթիւերժ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԱՄԷՆ ԻՆՉ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՋ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՅԵՏ, ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ» ԲԱՆԱԶԵԻԸ՝ ԴԱՌՆԱՅ ԹՈՂ 2007-Ի ԿԱՐԳԱԽՕՍԸ

«Գոհարանութեան Օր»ուան տօնական առիթով, ամբողջ երկրով մէկ տեղի ունեցած շնորհակալական պաշտամունքներու, համակրական նաշկերոյթներու, բարեսիրական նախաձեռնութիւններու ստեղծած հոգեյոյզ, այլ մարդասիրական ջերմամտուան, շուտով պիտի յաջորդէր նոր խոստումներով ծանրաբեռնուած Դեկտեմբեր ամիսը, որուն ամարտը պիտի բացուէր դէպի նոր, այլ անձանօթ յանձնառութիւններով հարուստ գալիքին, որ Նոր Տարին է:

Գալիքի Նոր Տարին դիմաւորելու ելած Դեկտեմբերը՝ գարդարանք կը դառնայ տուն ու շէնքերու, ծառ ու մայրերու, փողոց ու վանառատուներու: Շրջապատներու մէջ բարձրացող Ծնունդի հոգեգմայլ երգ ու մեղեդիներու, տարածուող ժպիտներու առթած սրտառուչ ապրումները իրենց ներսիդին՝ անցորդներ հոգեպէս կը լիցնաւորուին հանութեամբ ու խանդավառ լաւատեսութեամբ:

2006 թուականը իր լաւ ու բնդհանրապէս վատ յուշապատումներով անցան պատմութեան: Ափ առիթ 2007-ը տարին, որ նոր յոյսերով ու երազանքներով պարուրեց մեր էութիւնը:

Արդարեւ, մէկդի նետած 2006-էն մարդկութեան ժառանգ մնացած ամէն տարակուսանք, յուսախաբութիւն, մտահոգութիւն եւ անձկութիւն՝ հանութեամբ ու բարեյոյս տրամադրութիւններով աուլցուն, բարեմտօրէն, ուրախութեամբ դիմաւորեցին 2007 թ. Նոր Տարին, աշխարհով մէկ:

Բոլորուեցան տօնական փարթամ սեղաններու շուրջ:

Ամանորի մեծ ու փոքր նուէրներով մեր սէրն ու հոգեկցութիւնը ցոյց տուին իրարու:

Խանդավառուեցան ու գօտեպնդուեցան նորանոր, յոյսերով:

Բարի ու յաջող տարի մաղթեցին իրարու ու բոլորին:

Մեր համակրանքն ու բարեմաղթութիւնները յայտնեցին մեր ազգի բոլոր գաւակներուն:

Առաւել ուժ, կորով, բերքատա, առողջ ու ուրախ տարի մաղթեցին մեր գրող-մտաւորական, կրթանուէր ուսուցիչ, հաւատաւոր կղեր, մասնագիտութեան տէր օգտաշատ ազգակից մէն մի հայորդիի: Բոլորին՝ բոլորին՝ անխտի՛ր:

Չմոռցանք մեր համայնքը:

Մեր ազգային-հաղափական, գիտական, կրթական, մշակութային, գրական, բարեսիրական ու մարզական բոլոր կառոյցներուն մաղթեցին յաջող, վերընթաց ու բարգաւառ տարի:

Չմոռցանք մեր անխոհեմաբար երկփեղկուած Հայ Առաքելական Մայր Եկեղեցին:

Մեր Նուիրապետական Աթոռներուն ցանկացին միասնութիւն, նոր գարթօնք, բարգաւառ տարի, ու հիմնականը՝ վերադա՛րձ՝ դէպի Իրենց անանդական դերին՝ կրթական, մշակութային ու հոգեւոր կառուցողական սրբազան առաքելութեան:

Հայրենիքը նոյնպէս իր ուրոյն տեղը ունեցաւ մեր խորը գիտակցութեան մէջ:

Բազմերանգ դժուարութիւններու ենթակալ Հայաստանի Հանրապետութեան մաղթեցին յաղթական տարի: Մաղթեցին բարեյաջող ելքներին եւ արտաքին վերիվայրումներէ, ննշումներէ եւ վտանգներէ: Մաղթեցին, որ Հայաստան թօթափէ իր վրայէն թուրքու ազերի շրջապատումը: Հաստատե՛ ժողովրդավար վարչակարգ: Հայրենիքին ու ժողովուրդին շահերը գերակշռեն լուսանցֆային, անձնական ու հատուածական եպերելի, գցուց շահերու վրայ: Սանձուիւն անօրինութիւնները, սահմանադրական խախտումները, չարաշահութիւնները: Վերականգնի ժողովուրդի իշխանութիւն կորստեալ կապը: Հաղորդակցութիւնը: Վերընձիւղէ ժողովուրդ-իշխանութիւն փոխադարձ վստահութիւնն ու գործակցութիւնը: Հայրենիք-Սփիւռք կապերու առաւել սերտացումը: «Ամէն ինչ ժողովուրդին մէջ, ժողովուրդին հետ, ժողովուրդին համար» բանաձեւը՝ դառնայ թող 2007 թ. մեր նոր կարգախօսը:

Արցախը առօրեայ ներկայութիւն է մեր ապրումներուն մէջ:

Ամբողջական անկախութիւն ու բարգաւառում մաղթեցին Արցախին: Ուժ ու կորով՝ զանկա պաշտպանող ազգային բանակին: Իմաստու-

թիւն ու նուիրում՝ զանկա առաջնորդող ֆաղափական առաջնորդներուն: Հերոս կղերին: Աղիւս առ աղիւս հայրենի կառուցող հայ բանուորին: Հայրենի փառքը հիւսող հայ ստեղծագործող մտիկն: Կեցցէ՛ Ղարաբաղը, բացազանչեցինք:

Հայրենական մաղթանքներու զուգահեռ՝ չմոռցանք համայն աշխարհի ու ժողովուրդներու ապահովութեան սպառնացող վտանգները, որոնք տակաւ կը սրին անհամեմատելիօրէն:

Բացառաբար անդրադարձանք Միջին Արեւելի մասին:

Աֆղան ահաբեկիչներու՝ Նիւ Եորքի վրայ կատարած անարգ ու վայրի ահաբեկչական գործողութենէն ետք, միջնե օրս աֆղան աշխարհը թիրախ կը ծառայէ օտար ուժերու ռազմական գրոհներուն: Տակաւ կը շարունակուի ԱՄՆ-Թաիլանդ արիւնյայեղութիւնը: Խաղաղութիւն մաղթեցինք աֆղան ժողովուրդին ու հայրենիքին:

Իրաք՝ յանուն բոնաստիքական վարչակարգի գգտման ու այսպէս արդարացուած՝ ժողովրդական կարգերու հաստատման, ենթակայ դարձաւ օտար դաշնակից ուժերու արշաւանքին ու անբարեկամութեան եւ միջ-համայնային անզուսպ բաղիտումներու: Սպասուած ֆաղափացիական կոիւնքը սկսած կարելի է համարել: Իրաք կը միշտ անդամանալիօրէն: Ժողովուրդին մաղթեցինք եղբայրասպան կոիւնքու անմիջական դադարեցում, համայնքներու միջեւ հաշտութիւն եւ խաղաղութիւն:

Պարսկաստան, իր կորիզային ռումբի պատրաստութեան նախապարհին, կը պատրաստուի իր գոյութեան պահպանման անկիւնադարձային մարտահրաւէրին, որ ծայրայեղութիւններու պարագային բռնկուի մը անխուսափելի է: Մաղթեցինք որ բանակցութիւններով, որքան ալ ժամանակի կարօտին, առաջին առնուի ամէն գահավիժումի:

Նոյնն է իրավիճակը Պաղեստին-Իսրայէլ տասնամեակներու պատմութիւն ունեցող առնակատման մէջ: Նոր ֆանդումներ, գոհեր, որբեր ու ատելութիւններ՝ կը ծանրացնեն ռազմական ու ահաբեկչական հաշուեկշիռը:

Լիբանան, ներքինապէս երկփեղկուած՝ կը դիմագրաւէ անորոշ ապագայ: Բռնկում մը, անպայմանօրէն, իր ժխտական անդրադարձը պիտի թողու լրիւ տարածաշրջանին վրայ, ապակայունացնելով զանկա:

Մաղթեցինք անոնց ամէն բարիք: Փոխադարձ հասկացողութիւն եւ համերաշխ գոյակցութիւն:

Եթէ փորձուինք անելի տարածուիլ՝ պիտի տեսնենք անկայուն տարածաշրջաններ, նման՝ կառավարական օրինական ուժերու ու ծայրայեղականներու միջեւ շարունակուող ընդհարումներու պատճառաւ տարբարադրուող Սոմալիի, կորիզային գէնքերու պատրաստութեան հետամուտ Հիւսիսային Գորէլայի, որոնք կը պարզեն պայթուցիկ իրավիճակներ: Անոնք կը վտանգեն իրենց տարածաշրջաններու խաղաղութիւնն ու ապահովութիւնը:

Գերգոր պետութիւններ պարտին լաւ իմանալ, որ զինու ու նիւթի գերակայութեամբ եւ ոխակալ ոգիով երկիրներ ասպատակելը, գրաւելը եւ ստրկացնելը՝ խաղաղաբար լուծում չէ: Աշխարհի խաղաղութեան ու ժողովրդավարութեան հաստատման միջոց չէ: Ընդհակառակը՝ անոնք աշխարհը կ'առաջնորդեն փակուղի, ուրկէ դժուար թէ կարելի ըլլայ դուրս գալ:

Այնուամենայնիւ, մաղթեցինք, որ վրէժխնդրական հոգեվիճակներէ դուրս գալով, գերգոր երկիրներ վերջ տան իրենց ռազմաշունչ ֆաղափականութեան: Որդեգրեն բանակցութիւններու հաշտաբար ուղի: Գիտակցինք, որ ժողովրդավարութեան հաստատման նամար գինն ուժի ընտրանքն է: Զինու ուժը ոչ միայն աղետաբեր եւ անօգուտ է, նաեւ՝ ժամանցուած, կորստաբեր եւ միջնադարեան ռազմավարութիւն:

Այս շինարար, բարձր այլ հոգեհան տրամադրութիւններով, կրկնապէս ու բարձրաձայն՝ կը շնորհաւորենք նաեւ մեր բոլոր աշխատակիցները, բաժանորդները, ընթերցողները, բարերարները, դեկավար, շարժային եւ համակիր շրջանակները ու կ'ըսենք:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ա. Ծնունդ:

Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԿԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ

Տարի մը եւս անցաւ պատմութեան եւ համայն մարդկութիւնը կը պատրաստուի դիմաւորելու նորը:

Աւարտող տարին եղաւ վերիվայրումներով հարուստ ժամանակաշրջան մը, որու ընթացքին աշխարհ շարունակեց ակնատես ըլլալ «Ֆաղափակութիւններու պատերազմին» ու անոր գործած աւերներուն, որ եկաւ առաւել եւս խորացնելու ժողովուրդներու միջեւ յառաջացած անջրպետը:

Իրաքի վատթարացող վիճակը, Միջին Արեւելիի ընդհանուր տագնապը, աղատութիւն, համաճարակներ, ֆաղափակական պատերազմներ ու նաեւ միջազգային ահաբեկչութեան մնայուն վտանգը, հանդիսացան պետութիւններու առջեւ ծառայող գլխաւոր մարտահրաւերները, առանց սակայն հասնելու այդ հարցերու բարւոյ լուծման եւ դժուարութիւններու յաղթահարման:

Հայ ժողովուրդի համար եւս, տարին եղաւ ազգային մտահոգութիւններու շղթայ մը, որուն օղակները կ'երկարին սփիւռֆէն մինչեւ Արցախ եւ Հայաստան:

Արմատներուն կառչած մնալու եւ Ցեղասպանութեան միջազգային նախաձեռնման գծով իր հիմնական պայքարները մղող սփիւռֆահայութիւնը շարունակեց նաեւ ապրիլ Հայաստանի ու Արցախի մտահոգութիւններով:

Հայաստանի մէջ տիրող տխուր իրավիճակը, անոր ֆաղափական, տնտեսական, ընկերային եւ այլ երեսներով՝ եկան տկարացնելու եւ ջլատելու մեր ազգային դիմադրողականութիւնը:

2007 թուականը Հայաստանի համար կը հանդիսանայ վնասակար գործընթացներու տարի մը, որոնք կոչուած են բեկումն յառաջացնելու հայրենի ժողովուրդի կեանքէն ներս: Բոլորի ուշադրութիւնը կեղծոնացած պիտի ըլլայ տարուայ ընթացքին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն վրայ: Այդ ընտրութիւնները պէտք է դառնան Հայաստանի ֆաղափակներու ազատ արտայայտութեան եւ բուժաուսուրբի միջոց:



ցաւ իրենց ներկայացուցիչները կարողանալ որոշելու ձգտումներուն արտայայտութիւնը:

Ժողովրդավարութեան կիրարկման ուղիին վրայ վերջին տարիներուն արձանագրուած ետընթացը շրջելու եւ միջազգային չափանիշներուն համապատասխանող ֆաղափական յաջող գործընթացներու պակասով պայմանաւորուած է մեր երկրի ու ազգի ապագան: Անհատներու եւ կուսակցութիւններու միջեւ պարզ ընտրութիւն կատարելէ անդին անցնելով, պիտի վնասուի թէ ինչպիսի հայրենիք կ'ուզենք կառուցել: Առնականութիւնը թէ համագործակցութեան տնտեսական չարաչառումներու թէ արդար բաշխումի, կաշառակերութեան թէ պարկեշտութեան, ու ժի կիրարկման թէ արդարադատութեան, արտագաղթելու թէ հողին կառչած մնալու հայրենիք պիտի կարողանայ կերտել մեր ժողովուրդը: Այս է որ դրուած է նմարի վրայ եւ դժուար չէ կոսահել, թէ ուր կը կայանայ ազգի շահը:

Հայաստանի իշխանութիւնները կոչուած են նկատի առնելու կացութեան լրջութիւնը եւ ըստայնմ նշելու իրենց հետագայ քայլերը:

2007 թուականը կը հանդիսանայ նաեւ Հայ իրականութեան մէջ առաջին ֆաղափական-յեղափոխական կուսակցութեան՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 120 ամեակը: Յաջորդ 12 ամիսները Մայր Կուսակցութեան համար պիտի դառնան յոբելինական տարի, որու ընթացքին, սփիւռֆի եւ Հայրենիքի տարածքին, տարբեր բնոյթի միջոցառումներով պիտի նշուի այս փառապանծ տարեդարձը:

Ամանորի առթիւ կը մաղթենք, որ 2007 թուականը իր հետ բերէ Ձեր անձնական կեանքին մէջ յաջողութիւն եւ ֆալառողջութիւն, հայրութեան համար դառնայ նուաճումներով ու յաղթանակներով լի տարի մը, իսկ Համայն մարդկութիւնը բոլորէ խաղաղ ու բարեբեր ժամանակաշրջան մը:

**Ս.Դ.Հ.Կ
Կեդրոնական Վարչութիւն**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ ի Հայրենիս եւ ի Սփիւռս եւ բերում մամէնիդ Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը:

Նոր տարուայ շնորհ եմք, երբ նորի, աւելի լաւի սպասումով անդրադառնում ենք եւ՝ անցնող տարուան, եւ՝ յատկապէս՝ ապագայի մեր ծրագրերին ու յոյսերին:

Այս պահին գոհութեան աղօթք ենք բարձրացնում երկինք, որ Տէրը պարգեւեց մեզ խաղաղութեան մէջ մեր կեանքը կառուցելու, դէպի ձեռքբերումներ ընթանալու, հնարաւորութիւն՝ բարիք ստեղծելու, բարին գործելու եւ բարու մէջ հաստատուելու՝ յուրաքանչեւ քառանգին եւ բոլորս՝ իբրեւ քրիստոնէայ ժողովուրդ՝ Հայ Եկեղեցի, Հայոց պետութիւն:

2006 թուականն էլ ապրեցինք մեր Հայրենիքի ու համայն մեր ժողովրդի միացեալ ու յուսաւոր գալիքի հանդէպ հաւատով: Աստուծոյ օգնութեամբ նեղութիւններին ու դժուարութիւններին առջեւ չտկարացանք, մեծ ու փոքր փորձութիւններ յաղթահարեցինք, ձեռքբերումներ ունեցանք եւ դեռ նախապարհ պիտի անցնենք դէպի մեր ժողովրդի ցանկալի բարեկեցութիւն, դէպի մեր բոլոր յոյսերի մարմնաւորում:

Մեր յաջողութիւնները, ինչ որ ունեցանք Հայրենիքում եւ Սփիւռքում հնարաւոր եղան միայն մեր ժողովրդի համատեղ ջանքերով ու միասնական տեսիլով, առ Հայրենիքն ունեցած սիրով ու նուիրումով: Այսպէս, այս ոգով 2006 թուականին տօնեցինք Հայաստանի եւ Արցախի անկախութեան 15-րդ տարեդարձը: Մայր Հայրենիքում գումարուեց «Հայաստան-Սփիւռք» համա-ժողովը, Ռուսաստանում եւ Ֆրանսիայում անցկացուեցին Հայաստանի տարուան նուիրում միջոցառումները, կեանքի կոչուեցին հայրենաշէն ծրագրեր ու նախաձեռնութիւններ: Արցախի մեր ժողովուրդը իր ազատ, նոր կեանքը կառուցելու հաւատով ու վստահութեամբ ընդունեց Սահմանադրութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան:

2006 թուականը յիշարժան ձեռքբերումներով նշանաւորուեց նաեւ եկեղեցական մեր կեանքում: Հայրենիքում եւ Սփիւռքում իրենց դռները բացեցին վերանորոգուած ու նորակառոյց եկեղեցիներ, հոչակուեց Ֆրանսիայի Հայոց Թեմը, ծառայութեան կոչուեցին բազմաթիւ եկեղեցականներ եւ անուազ եղաւ ջանքը՝ հոգալու հոգեւոր կարիքները մեր ժողովրդի եւ արթուն ու գորացեալ պահելու հաւատը մեր կեանքում: Արդիւնաւոր եղաւ նաեւ համագործակցութիւնը՝ Քոյր Եկեղեցիներին հետ՝ ի սեր ժողովուրդների բարի յարաբերութիւնների եւ աշխարհում խաղաղութեան հաստատման:

Փառք երկնաւորին, որ պարգեւեց մեզ նորոգուած յոյս ու հաւատ: Նոր տարի է սկիզբ առնում, «ուրեմն, - ինչպէս առաջնալն է ատում, - քննէլ լաւը եւ թե ինչ է Աստուծոյ կամքը՝ բարին եւ հանելին եւ կատարեալը» (Հոով. 12:2), եւ քայլենք Աստուծոյ կամքով, բարին ընտրելով՝ կատարեալին ձգտելով եւ Աստուած պիտի օրհնի մեր ջանքերը՝ ստեղծելու եւ կառուցելու, բարոր ու շէն դարձնելու հայրենի մեր երկիրը, մեր հայրերի ժառանգութեամբ, գիտութեամբ ու մշակոյթով պայծառ ազգ մնալու եւ յարատեւելու:

Տարեմուտի խորախորհուրդ այս պահին աղօթք ենք բարձրացնում երկինք աշխարհասփիւռ մեր ժողովրդի գաւակներին համար: Աղօթում ենք Հայոց Բանակի ֆալառի գիւնուորների ու սպանների համար, ովքեր այս պահին մեր երկրի սահմանների պաշտպանութեան դիրքերում են, բոլոր

նրանց համար, ովքեր նոր տարին դիմաւորում են իրենց ծառայութեան մէջ: Աղօթում ենք հիւանդների, նեղեալների ու կարիքաւորների համար եւ հայցում Բարձրեալին օրհնութիւնը, ամենաառաջ նորին ու գորակցութիւնը մեր կեանքին:

Սիրելի հաւատաւոր գաւակներ մեր, թող հաստատուն ու գորեղ լինի հաւատը մեր սրտերում, եւ մեր գործերը յաջողութեամբ կեանքի կոչուեն ի սեր Աստուծոյ, ի սեր մեր Հայրենիքի ու մեր Սուրբ Եկեղեցոյ:

Թող Տէրը խաղաղութեան մէջ պահպանի աշխարհը եւ մեր Հայրենիքը, պարգեւի շնորհով, բարիքով եւ ուրախութեամբ լեցուն օրհնեալ տարի: Շնորհաւոր նոր տարի:

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ ԱՅՍ ԹԻՒՎ ԿԱՐԴԱՅԷ

- ԽՍՔԱԳՐԱԿԱՆ
- Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԿԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻ
- Տ. ՅՈՒՆԱՆ ԱՔԵՐԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ
- ՀԱՅ ԱՔԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՅՑ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ
- ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԽԹԵԱՆ «ԷԱԿԱՆԸ»
- ԲԺԻՇԿ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻԵԱՆ «2006 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ»
- ՈՒՐԲԵՆ ԽԱՆ-ԱԶԱՏ «ԻՆՉՊԵՆ ԿԱԶՄՈՒԵՑ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ»
- ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳԸ «ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ»
- ՎԱՅԱՆ ԲԱՅԱՐԵԱՆ «ՄՏՈՐՈՒՄԵՆ ԵՆՈՐ ՏԱՐՈՒԲՅ ՆՈՒԹԻ»
- ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՍՈՒԹԵԱՆ 85-ԱՍԵԱԿԻ ՓՈՒԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ
- ՏԵՐ ԶԱՒԵՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐՇԻՄԱՆԵԱՆ «ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ»
- ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻԼԿԵՐԵԱՆ «ՏԻԵԶԵՐԹԻ ՓՈՒՔԸ»
- ՆԱՅԱՊԵՏ ՍԵԼՔՈՆԵԱՆ «ԲԵԹԵՂԵՅՄԻ Ա. ԾՆՈՒՆԴԸ»
- ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱԳԵԱՆ «ԵՍ ԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ»
- ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ «ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՂԵՐ»
- ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ «ՆԱԲԱՍԱՐԴ»
- ՎԼԱԴԻՍԻՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ «ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍՈՒՄ»
- ՀԱՅԿ ՆԱԳԱՇԵԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԸ»
- ԼԻԻՍԻ ՍԻԼՎԱՅԵԱՆ «ՆԵՐԵԼ...»
- ԼԻԼԻԹ ՔԵՅԵԱՆ «ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՍԸ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ԷԱԿԱՆԸ

ՅԱՐՈՒԹ ՏԻՐ ԴԱԻԹԵԱՆ

Անձի մը ինքնութեան կազմա-
ւորման տարիներուն, շատ նշանա-
կալից է թէ ինչպիսի գաղափարնե-
րով կը ներշնչուի ան եւ ուրեմն
ինչպիսի համոզումներու տէր անձ
մը կը դառնայ: Երբ մեր մանկու-
թեան տարիներուն կը կարդանք
մըջիւնին ու մարտիս առակը, մեր
մէջ կը սերմանուի աշխատասիրու-
թեան բարիքներուն գաղափարը, ի
հեճուկս ծուլութեան: Երբ կը կար-
դանք կռուային ու նապաստակին
առակը, ինքնաբերաբար մեր նկա-
րագրի մէջ կը սերմանուի հետեւո-
ղական աշխատանքի արդիւնաւէ-
տութեան գաղափարը, ի հեճուկս
անփութութեան: Երբ կը կարդանք
ոսկիէ վանդակին մէջ բանտարկ-
ուած տխուր թռչունին պատմու-
թիւնը, մեր մէջ կը սերմանուի
ազատութեան գաղափարը, ի հե-
ճուկս օտարի լուծին, նոյնիսկ երբ
այդ մէկը ոսկիէ է: Երբ կը կարդանք
հացը տունը մոռցած դասընկերոջ
հետ իր հացը կիսող ընկերոջ պատ-
մութիւնը, մեր մէջ կը սերմանուի
բարեգործութեան գաղափարը, ի
հեճուկս յիսորտութեան: Մէկ խօս-
քով երբ կը կարդանք որ մենք
ստեղծուած ենք Աստուծոյ պատկե-
րով, մեր մէջ կը սերմանուի Անոր
նմանելու, միշտ բարիին ու զեղեցի-
կին, վսեմին ու ազնիւին ձգտելու
մարմաջը ի հեճուկս չարի բոլոր
տեսակներուն:

Բնականաբար ամէն մէկ ան-
հատ տարբեր չափերով կ'ընկալէ
վերեւի գաղափարները ու ըստ այնմ
կը դեկավարէ իր կեանքը: Ըստ
գերման փիլիսոփայ Եոհան Ֆիխ-
տէր, ազնուամիտ անձնաւորութիւնը
այս աշխարհի վրայ կը ձգտի ըլլալ
աւելին քան ժամանակային անցո-
ղակի երեւոյթ մը: Տարբեր խօսքե-
րով, երբ մարդ իր անձնական
կեանքէն անդին կը ձգտի բարելաւել
իր շրջապատի մարդոց ու գալիք
սերունդներու կեանքերը, ապա ան

կը դադրի անցողակի երեւոյթ մը
ըլլալէ ու կը յաւերժանայ:

Ահա այսպէս է որ կը ծնին
բոլոր ազգերու պատմութեանց մէջ՝
Մեծերը: Ու այս Մեծերն են, որ
իրենց աւանդած մնայուն արժէքնե-
րով կ'ազդեն ժողովուրդի մտածո-
ղութեան, զգացումներուն ու կենցա-
ղին վրայ, կը հիմնաւորեն զանոնք
ու կը նապաստեն ազգային նկարագրի
կերտման:

Տրդատ Գ. եւ Գրիգոր Լուսա-
ւորիչ Քրիստոնէական հաւատքը
ներմուծեցին մեր մէջ, մեզ գատորո-
շելով մեր շրջապատէն: Մեսրոպ-
Սահակ-Վռամշապուհ երբեակը սեպ-
հական գիր շնորհեց մեզի ու ազգաչ-
նացուց մեր քրիստոնէական հաւատ-
քը: Եղիշէ Պատմիչ ու Վարդանանք
Հայրենիքի ու հաւատքի սիրոյն
իմացեալ մահով անմահանալու հա-
մոզումը սերմանեցին մեր մէջ: Խո-
րենացին մեզ տանելով դէպի մեր
արմատները, Հայկի ու Վահագնի,
Անահիտի ու Աստղիկի, Արտաշէս
Աշխարհակալի ու Արքայից Արքայ
Մեծն Տիգրանի պատմութիւններով
պատմական ենթահող հայթայթեց
մեր ազգային նկարագրին: Նարե-
կացին ու Շնորհալին դէպի բարձ-
րագոյնը, դէպի Աստուած ձգտելու
մարմաջը սերմանեցին մեր մէջ:
Մխիթար Գոշը միջնադարեան խա-
ւար ժամանակաշրջանին իսկ օրէն-
քի յարգման, կիւարկման ու անոր
դաստիարակիչ դերի օգուտներ պար-
գեց մեզի: Այս մեծերը յաւերժացան,
որովհետեւ անցողակիէն անդին
ձգտեցան ծառայել յաւերժին: Անոնք
յաւերժացան, որովհետեւ իրենց ան-
ձէն անդին, ձգտեցան ծառայել հա-
տարակութեան, ժողովուրդի, ազ-
գին: Անոնք մեզի աւանդեցին, որ
երբ անձը կը հաշտեցնես ազգիս հետ
եւ կ'ապրիս անով, ոչ միայն զարկ
տուած կ'ըլլաս անձնականիդ զար-
գացման, այլ նաեւ ազգիդ: Բայց
երբ անձիդ զարգացման համար

կ'արհամարհես ու կ'անտեսես շրջա-
պատդ, կամ կը փորձես յառաջդիմել
ի հեճուկս հայրենակիցիդ ոտնա-
կոխման, նապաստած չես ըլլար ան-
ձիդ ու ազգի երկարաժամկէտ շահե-
րուն:

Անոնք մեզի աւանդեցին, որ
արուեստական պատկերներ պէտք է
բարձրացնել ազգի բաղկացուցիչ
մասնիկներու միջեւ, իշխանիկներ
դառնալու սիրոյն կտրատելով ազ-
գը: Երբ կը խոչընդոտուի, կ'արգիւ-
ուի մասնիկներու միջեւ փոխ-յա-
րաբերութիւնը, փոխ-ազդեցութիւնը
կ'արգելակուի ազգի յառաջխաղաց-
քը:


Անոնք մեզի աւանդեցին, որ
անհատը ինքզինք պէտք է տեսնէ
որպէս մէկ մասնիկը ամբողջին՝
ազգին: Անհատը, մասնիկը պէտք է
բունանայ կամ ինքզինք պարտադրէ
ամբողջին վրայ, ազգին վրայ: Երբ
անհատը կ'ապրի ազգին մէջ ու
ազգը անհատին մէջ, երբ այս մտայ-
նութիւնը կը դարձնենք մեր կենցա-
ղի հիմքը, այդ ժամանակ թէ՛ ան-
հատը եւ թէ՛ ազգը կը յառաջդիմեն,
կը զարգանան, կը հզօրանան:

15 տարիներէ ի վեր մեր պատ-
մութեան մէջ սկսած է նոր հանգր-
ուան մը՝ մեր նորագոյն անկախ
պետականութեան ամրակայման
հանգրուանը: Անկախութեան հռչակ-
ման նախորդող ու յաջորդող մի-
քանի տարիներուն յաջողութեանց
ու գոտեպնդից երեւոյթներէ ետք,
կարծէք աւարին տիրանալու մտայ-
նութիւն մը նէ որ եղբայր եղբօր դէմ
հանած է ու կը բզկտէ մեզ: Հայրենի
հողը աւար չէ: Ան մեր ոտքերու
տակի ենթահողն է, որ որքան միա-
կամ ու հաստատուն ըլլայ, այնքան
ապահով կ'ըլլայ ազգը: Մասնիկնե-
րու կողմէ հայրենիքի յափշտակումը
խախուտ կը դարձնէ այդ ենթահո-
ղը: Դժբախտաբար չունինք Մեծե-
րու օրինակին հետեւող առաջնորդ-
ներ, այլ միջակութիւններ ու պա-
տեհապաշտներ, որոնք բաժանում-
ներ յառաջացնելով իրենց մանր
տէրութիւնները կը հաստատեն, ի
վնաս ընդհանուրի յառաջխաղաց-

քին: Ժողովրդավարութիւնը եւ օրէն-
քի գերակայութիւնը, որոնք հիմ-
քերն են որեւէ հասարակութեան
զարգացման, չարաչար կ'ոտնակոխ-
ուին: Համագային գաղափարներ
ու կառուցներ, ինչպիսին է օրինակ
Հայաստան Համահայկական Հիմ-
նադրամը, կը խարխափին ու կը
զրկուին ժողովուրդի լայն խաւերու
թիկունքէն, որովհետեւ դեկավար
դիրքերու վրայ գտնուողները կամ
անգիտակ են Մեծերու աւանդու-
թեանց եւ կամ գուրկ զանոնք գոր-
ծադրելու տրամադրութեանց ու կամ-
քէն: Այս ընթացքով, փոխանակ
յառաջդիմելու կեդրոնացեալ, կա-
յուն ու հզօր պետականութեան իրա-
գործման ուղիով, կը նահանջենք
դէպի կեդրոնախոյս աւատապետա-
կան դրութիւն, պարարտ հող
հայթայթելով օտար
միջամտութեանց եւ հուսկ վտանգելով
մեր պետականութիւնը:

19րդ դարու երկրորդ կէսէն
սկսեալ ազգային ազատագրական
պայքար մղեցինք թօթափելու օտա-
րի լուծը, ազատագրելու մեր պատ-
մական հողերը եւ կերտելու անկախ
պետականութիւն: Մինչ նոյն ժա-
մանակաշրջանին շատ ուրիշ պե-
տութիւններ, Գերմանիայէն ու Իտալի-
այէն մինչեւ Պուլկարիա եւ Ռու-
մանիա յաջողեցան իրենց նապաստ-
ակին մէջ, մենք չարաչար պարտուե-
ցանք, դառնալով 20րդ դարու առա-
ջին Յեղապանութեան գոհերը: Նոյն
դարու վերջաւորութեան յաջողե-
ցանք վերականգնել մեր անկախ
պետականութիւնը եւ եթէ 21րդ
դարը իսկապէս պիտի դարձնենք
մեր շատ սպասուած Յաղթանակի
դարը ապա էական է, որ անսանք
Մեծերու պատգամներուն: Անոնք
յատակօրէն գծած են այդ ուղին:
Մեզի կը մնայ ցուցաբերել բաւա-
րար կամք ընթանալու այդ ուղիով,
որպէս զի անգամի մը համար եւս
կուլ չերթանք մեր տարածաշրջանի
պետութեանց ախորժակներուն, ինչ-
պէս նաեւ աշխարհով մէկ տարած-
ուած մեր համայնքներուն դէմ ցցուող
համաշխարհայինացման վտանգին:

**Նոր Տարուայ եւ Սուրբ Ծնունդի տօներուն առթիւ,
կը փոխանցենք մեր լաւագոյն մաղթանքները
2007 թուականը թող իր հետ բերէ անձնական կեանքին մէջ
յաջողութիւն եւ բազանողջութիւն, հայութեան համար
դառնայ նուաճումներով ու յաղթանակներով լի տարի մը,**



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԵՂՐԱԿ ԵՒ ԱԼԻՆ ԱՃԷՄԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

2006 ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԲԺԻՇԿ ԅՄՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆ

ՄՈՒՏՔ

Աւանդուծիւն է, ամէն տարի, թուրքիկ ակնարկ մը նետել պատմութեան անցնող տարեշրջանի մը վրայ, որու ընթացքին տեղի ունեցան բազմաթիւ իրադարձութիւններ՝ քաղաքական, ընկերային, տնտեսական, եւ այլևս ընդունուած դարձած, միջազգային ասֆէկտներէն բնագաւառներէն ներս: Այս իմաստով, 2006 թիւը չէր տարբերըր զինք նախորդող տարիներէն, եւ սակայն, անվարան կարելի է պնդել որ իր ծնունդով նախատեսուած բոլոր ակնկալութիւնները, համայն մարդկութեան համար դրական նկատուելիք, դժբախտաբար սխալ դուրս եկան եւ այսօր նոր տարուայ մը սեմին աշխարհ կը գտնուի իրապէս մտահոգիչ, չըսելու համար վախազուկացուած մը մէջ:

Մեր ակնարկը պիտի ընդգրկէ հետեւեալ բաժանմունքները.

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐԶ որ հասկնալիօրէն, կը վերաբերի ընթացիկ պրոցը եւ մտահոգիչ կացութեանց, Ամերիկայէն մինչեւ Մերձաւոր Արեւելք, Եւրոպայէն մինչեւ Ասիա եւ աւելի անդին: Ի հարկէ, քննուելիք հարցերը կ'ունենան կրկնակի հանգամանք, ներազգային եւ միջազգային:

2. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿ-ՉՈՒԹԻՒՆ

Հարցը կը մնայ թիւ մէկ մտահոգութիւնը ամբողջ մարդկութեան, մտահոգութիւն, որուն հիմնական եւ սկզբունքային դրդապատճառները, նոյնիսկ եթէ յստակ պատկերացումներ ունին, սակայն չունին անհրաժեշտ եւ գոհացուցիչ լուծումներ: Պիտի փորձենք անդրադառնալ այդ պատճառներէն հիմնականներուն մասին:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԶԸ կը մնայ սերտօրէն կապուած վերոյիշեալ կարեւոր, նոյնիսկ կենսական խնդիրներէն, եւ առանց անոնց բարձր կարգադրութեան, այս մարզն ալ կը մնայ խոցելի: Այլ խօսքով, քաղաքական ու տնտեսականը շատ մետրիմ աղերս ունին իրարու հետ:

4. ԱԼՅԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ

Այս խումբին մէջ կարելի է գետեղել քովստի եւ սակայն խիստ կենսական հարցեր, ինչպէս բժշկական, առողջապահական ծառայութեան հարցը, հոգեբանական եւ կենսաբանական մտահոգութիւնները, կրօնական նկատումներ, եւ այլն:

Կ'անցնինք ուրեմն վերոյիշեալ ցանկի տարբեր միաւորներուն քննարկման, անգամ մը եւս շեշտելու համար թէ այս քննարկումը կրնայ միայն թուրքիկ ըլլալ: Անոնց հանգամանաւոր եւ սպառիչ քննարկումը ալ աւիթներու կը սպասէ:

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ

1. ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ԻՐԱՔ

Կասկած չի կայ որ Ամերիկայի, եւ ոչ միայն Ամերիկայի, այլ ամբողջ աշխարհի համար ամենէն մտահոգիչ, եւ թիւ մէկ հարցը կը մնայ Իրաքի պատերազմը, որ շատերուն համար, երթալով կը նմանի 60-ական թուականներու Վիեթնամի պատերազմին, որ ինչպէս գիտենք,

հրմշտկող նոր մօտեցումներու մասին կը մտածեն Իրաքեան աւազախրումէն դուրս գալու համար: Այս նոր մօտեցումներու մասին խօսելի առաջ, նախ կ'արժէ քննարկել թէ, տեսական գետնի վրայ,

ա. Ո՞վ պատճառ դարձաւ Իրաքի կորուստին, եւ

բ. Ի՞նչ կրնայ պատահիլ եթէ Ամերիկա լքէ Իրաքը:



Իրաքի պատերազմի ընթացքին զոհուած 3000 ամերիկացի զինուորայինները խորհրդանշող խաչեր

վերջացաւ Ամերիկայի պարտութեամբ: Իրաքի պարագային, միայն վերջերս սկսան գործածուիլ «պարտութիւն» եւ «յաղթանակ» բառերը, առանց յստակ դառնալու, թէ ի՞նչ պէտք է հասկնալ, յատկապէս «յաղթանակ» բառով: Կացուած իրաքէն ներս այնպէս կ'ընթանայ որ, յաղթանակէ աւելի, պարտութեան մասին կը խօսուի: Միայն Ամերիկայի երազատես, եւ աւելի ճիշտ բացատրութեամբ, ցնորատես նախագահ Պուշն է որ տակաւին կը խօսի յաղթանակի մը մասին, որուն հաւանականութիւնները երթալով կը նուազին: Մանաւանդ Նոյեմբեր 7ի ընտրութիւններէն ետք, որոնց ընթացքին Պուշ եւ իր հակապետական կուսակցութիւնը, եթէ ոչ Չախշախիչ, զէթ պարտութեան մատնուցան, տեմոքրատի կուսակցութեան յանձնելով երկրի օրէնսդիր մարմինները - Ծերակոյտը եւ Ներկայացուցիչներու Տունը: Մինչեւ Նոյեմբեր 7ը Պուշ կը պնդէր «ընթացքը պահելու մասին», Իրաքեան պատերազմի գծով, հակառակ այն իրողութեան, որ սկզբնական, արագ «յաղթանակ» է մը ետք, Սատտամ Հիւսէյնի բռնատիրութեան տապալումով, Իրաքեան արկածախնդրութիւնը կը մտնէր իր աղիտալի ընթացքին մէջ, որուն ականատես կ'ըլլանք այսօր: Փաստօրէն, երբ այս տողերը կը գրուին, Պուշ եւ իր ամէն գոյնի կողմնակիցները, զիրար

Յոռետես թուացող այս հարցումը խորքին մէջ իրապաշտ հարցում մըն է: Երեք հիմնական ազդակներ պատասխանատու կը նկատուին այս հաւանականութեան:

1. Ամերիկայի գանգուածային լրատուական միջոցները:

Ասոնց մէջ կարելի է յիշել «Washington Post», «New York Times», «Wall Street Journal»-ը, «USA Today», «Los Angeles Times»-ը, եւ ուրիշներ: Իսկ թելեվիզիոնի կայաններէն «CNN»-ը, բացի «Fox News»-էն, ասոնց մեծ մասը, ըստ ոմանց, նախապաշարուած են Պուշի դէմ, եւ ունին գաղափարախօսական



Իրաքեան արկածախնդրութեան «հերոսները»

զիր քորոշում - «ազատական», «ճախակողմեան» նկարագրութիւններով եւ կարծեն որ Իրաքի պատերազմը «չահուելիք» չէ (unwinnable):

2. ՊՈՒՇԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՊԻԿԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երթալով կ'աւելնայ թիւը անոնց, որոնք Իրաքի աղէտը կը նկատեն Պուշի իշխանութեան գանգ-

ուածային եւ լուրջ սխալները, սկսելով պատերազմի շինծու եւ արուեստական պատճառներէն, հասնելու համար մինչեւ աշտօրուայ ամերիկեան բանակի անբաւարարութիւնը, իրաքեան «իշխանութեանց» անպատրաստութիւնը, իրաքեան ապահովական միջոցներու «դաւաճանութիւնը», միջ կրօնական հակամարտութիւնները, միջազգային ասֆէկտական ցանցերու ներկայութիւնը, Սուրիոյ եւ Իրանի ենթադրեալ միջամտութիւնները, Ամերիկայի երթալով աւելցող առանձնութիւնը, բացի անշուշտ Անվիտոյ իր հաւատարիմ վարչապետ Թոնի Պլէրէն, որը այս օրերուն Աֆղանիստանէն մինչեւ Մերձաւոր Արեւելքի մայրաքաղաքները կ'այցելէ Պուշի եւ իր «տեմոքրատական» համոզումները «ճախելու» մարդոց եւ կառավարութեանց, որոնք չեն կրնար արեւմտեան մտայնութիւնն եւ անոր շատագոյն ազատութեան եւ տեմոքրատի մտքերը կիրարկել, նոյնիսկ եթէ հասկնան: Այդ երկիրներու մեծ մասին մէջ հաստատուած են բռնատիրական ընթացքներ, Եգիպտոսէն մինչեւ Ս. Արաբիա, Յորդանան, եւ այլն: Վեց տարիներ, Իրաքի պատերազմի ընթացքը ղեկավարելէ ետք, Տանըլտ Ռամըզբեկտ եւ իր համախոհները հրապարակէն կը հեռացուին, եւ սակայն հարցերը կը մնան արուծելի: Իսկ Պուշ, գլուխը հոս-հոն կը զարնէ, նոր լուծումներ փնտրելու համար: Զարմանալին հոն է որ Պուշ, յամառ եւ յիմար ընթացք մը որդեգրելով, իր իսկ ստեղծած յանձնախմբի թելադրութիւնները անտեսելով, կը մտածէ նոր բանակայիններ ուղարկել Իրաք, իր փնտրած «յաղթանակը» ձեռք ձգելու համար:

3. ԴԱԻԱԳՐՈՒԹԵԱՆ «ՀԵՐՈՍՆԵՐԸ»

Վերոյիշեալ երկուքի կողքին, նաեւ կարելի է շարել հետեւները - քարիւղի մեծ ընկերութիւնները,

Տիք Չէյնիի «Halliburton»-ը Ամերիկայի զինուորա-ճարտարարուեստական կառուցը, եւ հրեայ «լոպպիինկ»-ը, որոնք Փոլ Ուլֆոուիցի նման, Պուշի իշխանութիւնը մղեցին իրաքեան արկածախնդրութեան:

Սխալ պիտի չըլլայ ենթադրել որ այս երեք ազդակները, եւ ուրիշ-



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՀԷ ԵՒ ՆՈՐՄԱ ԻՄԱՍՏՈՒՆԵԱՆ

2006 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ներ ալ, պատճառ դարձան իրաքի այսօրուայ անսխառունակ կացութեան: Մեծ հարցումը կը մնայ - արդեօ՞ք իշխանութեան նոր գլուխ անցնող տեմոքրատները պիտի կարենան հիմնական փոփոխութիւն մտցնել Պուշի իշխանութեան մէջ, տրուած ըլլալով որ Պուշ տակաւին կը մնայ նախագահ, եւ կը թուի աւելի քան երբեք կառչած իր անգիշող քաղաքականութեան:

4. ԻՐԱՆ ԿՐՆԱՅ ՊԱՏԱՀԻԼ ԵԹԷ ԱՄԵՐԻԿԱ ԼՔԷ ԻՐԱՔԸ

Տեսական հարցում մըն ալ այս մէկն է, թէեւ Պուշ, գէթ առ այժմ, երբեք տրամադիր չի թուիր այս հաւանականութեան: Պուշ եւ իր համախոհները, համոզուած կը թուին ըլլալ, որ իսկական աղէտ մը կը հանդիսանայ եթէ Ամերիկա պարտուի եւ Լքէ իրաքը: Ըստ Պուշի, այս կրնայ յանգիլ սարսափելի ահաբեկչական գերտէրութեան մը ստեղծումին, որ ձեռք պիտի դնէ քարիւղային հարստութեան, եւ փորձէ տապալել Մերձավոր Արեւելքի «չա-

մէն ետք: Միւս կողմէ, ամերիկեան ներկայութիւնը իրաքէն ներս առիթ տուաւ իրանն, եւ Սուրիոյ, ինչպէս նաեւ «Ալ-Քայիտա» ահաբեկչական կազմակերպութեան, ներկայութիւն դառնալ իրաքէն ներս: Առ այժմ, մէկ բան շատ յստակ է - կայ քաղաքացիական լուրջ պատերազմ, եւ ամերիկեան ոյժերու դէմ յարձակումներ, եւ անշուշտ մահեր: Կը մնայ անմիջական ապագան, անորոշ, եւ վտանգաւոր, եթէ իրաքցիները մնան այսպէս թույլ եւ Ամերիկան յաւելեալ ոյժեր չզրկէ իրաք: Նոյնիսկ այդ պարագային, ոչ մէկ բան ստոյգ չէ...

2. ԻՐԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Այս բոլոր վտանգաւոր գարգացումներու ընթացքին, հրապարակ ելաւ իրանի տակաւ աճող ներկայութիւնը, ոչ միայն իբրեւ բնական պաշտպան իրաքի շիրինքուն, այլ նաեւ իբրեւ ամբողջ Մերձավոր Արեւելքի ամենէն զօրաւոր քաղաքական ոյժը, իրաքէն



Լիբանանի պարտադրուած Հրգպալա-Իսրայէլ պատերազմը

կը դրժէ «հոլոքոսթի» պատմական իրողութիւնն իսկ, նոյնիսկ «հակահոլոքոսթ» համագոծար կազմակերպելով, իսկ կը մերժէ ՄԱԿի որոշումները, իր հիւլէական քաղաքականութեան դէմ: Կը մնայ սպասել որ Ամերիկա քայլերու դիմէ իրանի գաղթու համար, քայլեր որոնք կրնան պատերազմ հոտիլ, մանաւանդ որ Ամերիկան նաւատորմիդ կը գտնուի շրջանի ջուրերուն մէջ...

Արդէն ամերիկեան բանակը «կոտորուելու» վտանգին ենթակայ կը նկատուի, յստ Բոլին Փաուլի, իրաքէն մինչեւ Աֆղանիստան, Եւրոպա եւ Ասիա, եւ յստակ չէ թէ իրանեան արկածախնդրութիւն մը ինչ լուրջ հարցեր կրնայ ստեղծել Ամերիկայի եւ աշխարհի համար:

3. ԱՐԱՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

Իրաքի հարցը քննող յանձնախումբը, Պէյքըր-Հեմիլթընի ղեկավարութեամբ, լուրջ առաջարկներ կ'ընէր Պուշի իշխանութեան, իրաքեան տազնապի լուծման գծով, առաւելի «ուշադրութիւն» դարձնել Պաղեստին-Իսրայէլ փոխ-յարաբերութեան: Հոս սակայն կայ նաեւ Պաղեստինի ներքին հարցերը, «Փաթհա»ի եւ «Համաս»ի միջեւ, եւ ոչ միայն հարց, այլ նաեւ տեսակ մը քաղաքացիական պատերազմ: Այնքան ատեն որ Ամերիկա ենթական կը մնայ հրէական ազդեցութեան եւ նոյնիսկ «քոնթրոլ»ի տակ է, շատ ալ յոյս չկայ երկու անջատ եւ անկախ պետութեան խաղաղ գոյակցութեան, Պաղեստինի եւ Իսրայէլի, Մերձավոր Արեւելքի մէջ:

4. ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆ

Երբ աչքէ կ'անցնենք 2006 թուականը, ամենեւին կարելի չէ

անտեսել այն տագնապը, որ Լիբանանի վիճակուեցաւ տարւոյն կէսերուն, Հրգպալա-Իսրայէլ կարճատեւ պատերազմի ընթացքին: Անգամ մը եւս այդ խեղճ երկրին գլխուն եկածները արդիւնք են շրջանային հակամարտ ուժերու ընհարումներուն, եւ զոհը անոնց: Եւ հիմա, այդ ընդհարումներէն «յաղթական» ելած «Հրգպալա» շարժում կուսակցութիւնը, յենած Սուրիոյ եւ մանաւանդ իրանի, կ'ուզէ կամ երկրի իշխանութիւնը իր ձեռքը առնել, քանի որ Շիրինները արդէն մեծամասնութիւն կը կազմեն բնակչութեան մէջ, եւ կամ ալ կ'ուզեն Լիբանանը վերածել Իրան-Սուրիա առանցքի մէկ օղակին, պնդելով որ երկրի վարչապետ Սիւրանի Սինիորան հրաժարի եւ իրենք ձեռք առնեն երկրին ճակատագիրը: Բարեբախտաբար, այս տագնապը զուտ կրօնական հիմք չունի, քանի որ Սուրիամէտ եւ հակասուրիամէտ խումբերու մէջ տարբեր կրօնքներու ներկայացուցիչներ կան:

5. ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Աֆղանիստանի մէջ, Ամերիկան միտնուած է մէկ ուրիշ պատերազմի մը մէջ, որուն ճակատագիրը նոյնպէս կը մնայ անորոշ: Թէեւ հոն «ՆԱԹՕ»-ի ուժերն ալ մասնակից են պատերազմի, սակայն Ամերիկան է որ իր վրայ վերցուցած է բեռին ծանրութիւնը: Ներկայիս, այդ երկրին ալ ենթակայ է ներքին գալաւումներու, եւ նախկին «Թալիպան» ուժերը կը յաջողին երկիրը պահելու մտահոգիչ վիճակի մէջ: Կարեւոր է հոս չիշել որ նախկին Խ. Միութիւնը, շուրջ 10 տարիներ այդ երկրէն ներս պատերազմելէ ետք,



փաւորական» կառավարութիւնները, Ս. Արաբիայէն մինչեւ Լիբանան: Տեսակ մը նախկին Աֆղանիստանի «Թալիպան» կառավարութեան նման կառուց մը, որ լուրջ վտանգ է ոչ միայն շրջանի, այլ նոյնինքն Ամերիկայի: Ամերիկայի բազմաթիւ քաղաքական դէմքեր, յատկապէս տեմոքրատ կուսակցութեան մարդիկ, համոզուած կը թուին որ «անլուծելի» է իրաքի խնդիրը, շատ ալ հոգեբանին չէ ի՞նչ կրնայ ըլլալ իրաքը, Ամերիկայի մեկնու-

Պաղեստին եւ Լիբանան, իր հովանաւորած «Հրգպալա»-ի եւ «Համաս»-ի միջոցաւ: Իրան զօրաւոր է գինուրապէս, կրօնապէս եւ նիւթապէս, եւ կը ձգտի աշխարհի այդ շրջանէն ներս, տիրող եւ որոշող դեր մը խաղալ: Իրանի քիչ մը տարօրինակ նախագահը, Մահմուտ Ահմետինեճատ, յատակ ասպարէզ կը կարողայ թէ Ամերիկային, թէ Իսրայէլին, եւ թէ ՄԱԿին: Ամերիկան կը տաւապի իրանեան օգնութեանէն, իրաքի մէջ, Իսրայէլի դէմ, Ահմետինեճատ

ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԷԿ ԱՆԽՏԻՐ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԻՐԳՈՐ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻ ԶՈԼԱՔԵԱՆ



2006 ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ

պարտուած դուրս եկաւ, եւ այս շնորհիւ Ամերիկայի օգնութեան այդ օրերու մուճակներէն եւ Ուսամա Պըն Լատընի որ այս օրերու կը դեպքի Փաքիստանի սահմանային շրջանի, Ուզբիքիստան կողմէն նահանգին մէջ: Թալիպան ուժերը կողմէն յաճախակի յարձակումներ կ'ընեն նոյնիսկ մայրաքաղաքէն ներս, եւ երկիրը կը պահեն լման անապահովութեան մէջ: Հոս եւս Ամերիկեան ներկայութիւնը, ուշ կամ կանուխ, պիտի վերածուի գրաւման բանակի:

6. ԵՒՐՈՊԱ

Մնալով քաղաքական մարզէն ներս եւ Միջին Արեւելքէն անցնելով Եւրոպա, հակիրճ կերպով ակնարկ մը նետենք աշխարհի այս հին շրջանի վրայ:

1. Անգլիոյ մէջ, Թոնի Պլէրի իշխանութիւնը կը հասնի իր աւարտին: Եթէ պահպանողականները իշխանութիւնը իրենց ձեռքը առնեն Ամերիկեան շահերը կրնան վտանգուիլ: Անկախ ասկէ, միջազգային ահաբեկչութիւնը բաւական աշխուժ է Անգլիոյ մէջ, ինչպէս ցոյց տուին տեղի ունեցող ահաբեկչական գործողութիւնները:

2. Ֆրանսան կը տառապի մուսուլմանական փոքրամասնութեանց երթալով աւելի մարտունակ գործունէութեան, ժաք Շիրաքի իշխանութիւնը անգոր կը մնայ ընկերային եւ տնտեսական հարցերու բարւոք լուծումներ գտնելու:

3. Ռուսաստանի պարագային, այս երկիրը կամաց-կամաց կը ձգտի իր կորսնցուցած վարկը վերագտնել միջազգային գետնի վրայ, եւ կը փորձէ իր տրամադրութեան տակ գտնուող բոլոր միջոցները գործածել, սկսած ներքին կեանքի ազատութիւններու սահմանափակումէն մինչեւ իր անասման քարիւղային-կազալին «ըր-տուրներու» օգտագործումը: Կասկածներ կան որ Փուլթինի իշխանութիւնը նաեւ կարող է իր հակառակորդները ոչնչացնել հիւլէական միջոցներով, «Polonium 210»-ի միջոցաւ:

7. ԵՒՐՈՊԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Մեզի հայերու համար, յարաբերաբար լաւ լուրը այդ է որ Եւրոպական Միութիւնը, որ շրջան մը առաջ, կը թուէր քաջալերել Թուրքիոյ մուսքը Եւրոպական Միութեան ներս, ներկայիս աւելի դանդաղ կ'ուզէ շարժիլ 70 միլիոն եւ 99 տոկոս իսլամ երկիր մը իր շրջափակէն ներս ընդունելու: Անշուշտ, այս գրամադրութիւնը շատ ալ հաճելի է Թուրքիոյ համար, որ աշխարհիկ երկրէ մը կրնայ թուել իսլամ երկրի մը վերածուի, իր բոլոր անպատեհութիւններով: Քրէական օրէնքի

301 յօդուածը, որ կը պատժէ գրողները, լրագրողները, խօսքի ազատութեան ջատագովները, աշխուժօրէն կը կիրակուի: Հակառակ ստորասկայն, Օրհան Փամուքները կը գնահատուին Թուրքիան ձգել առաջ, արժէ յայտնել որ նախագահ Շիրաքի Հայաստան այցելութեան առիթով, պատուարժան հիւրը, Եղեռնի Յուշարձան այցելութեան ընթացքին, կը յայտարարէ որ Թուրքիա պարտաւոր է ճանաչնալ իր պատասխանատուութիւնը, հայկական Յեղասպանութեան մէջ, տրամադրութիւն մը որ միայն պատիւ կը բերէ Ֆրանսային, եւ Թուրքիան կրնայ արժանացնել միջազգային լաւելալ գնահատանքի: Խօսելով Ֆրանսայի մասին, արդէն աշխարհին ծանօթ է որ այդ երկրէն ներս կը շարունակուի Հայաստանի նուիրուած «Տարին» եւ համակրանքի արտայայտութիւններ տեղի կ'ունենան տարբեր քաղաքներու մէջ: Կը մնայ յուսալ որ նախագահ Շիրաքի յայտարարութիւնը պաշտօնապէս որդեգրուի ֆրանսական կառավարութեան կողմէ:

Բ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Այս բարդ եւ մտահոգիչ երեւոյթին քննարկումը մեզ կ'առաջնորդէ անդրադառնալ երկու հիմնական երեւոյթներու մասին.

ա. Կրօնքի եւ քաղաքականութիւն

բ. Արեւմուտքին եւ Արեւելքին միջեւ փոխ-յարաբերութիւններու հարցը:

ա. Խօսելով կրօնքի եւ քաղաքականութեան մասին, անգամ մը եւս կ'ուզենք մէջբերել 20րդ դարու մեծ փիլիսոփաներէն, Ալֆրեդ Նորթ Ուայթհեթի վկայութիւնը. «Կրօնները միշտ ալ լաւ բաներ չեն: Անոնք յաճախ շատ վատ բաներ են: Շատ աւելի պատերազմներ մղուած են կրօնքի համար, քան թէ որեւէ ուրիշ բանի համար»: Միջազգային ահաբեկչութեան ենթահողը կրօններն են, որոնք յաճախ բռնարարներու ձեւ կ'առնեն: Կրօնները բոլորն ալ, հիմնականին մէջ, խաղաղութեան, աստուածային պատուիրաններու ենթարկման մարդոց եւ ժողովուրդներու միջեւ խաղաղ գոյակցութեան եւ բարեգործութեան մղող ազդակներ են, առանձին-առանձին առնուած: Դժբախտաբար, սակայն երբ կրօնները կ'առնչուին քաղաքականութեան հետ, մանաւանդ երբ կայ ստեղծուի կրօնական մոլեռանդութեան եւ միջազգային փոխ-յարաբերութեան միջեւ, անոնք կը դառնան զէնք՝ անհանդուրժողութեան որ կ'առաջնորդէ բռնա-



Միջազգային ահաբեկչութեան դեմքերը

րարներու: Այսպէս է որ տեղի ունեցան Նիւ Եորքի երկնաքեռերու վրայ յարձակումները, անոնց ծնունդ տուող «Ալ-Քայիտա»-ի կողմէ:

Կրօնական ծայրայեղ զգայնութիւնը առիթ կու տայ, ինչպէս որ պատահեցաւ, բռնարարներու, նոյնիսկ մամուլի մէջ, իսլամ կրօնքի հիմնադիր, Մոհամմէտի մէկ ծաղրանկարի առիթով, ամբողջ մուսուլմանական աշխարհը, իր աւելի քան մէկ միլիարդ բնակչութեամբ, յատկանշուեցաւ կիրքով եւ բռնութեամբ: Բարկութիւնը, քանդումները, իսլամ կրօնքը պաշտպանելու կատաղի տրամադրութիւնը, իրենց դրսեւորումները ունեցան ցոյցերով, թշնամական արարներով: Իսլամ կրօնքը ընդունած մարդոց եւ կառավարութեանց մտքերն ու սրտերը լեցուեցան ատելութեամբ եւ մոլեռանդութեամբ:

բ. Արեւմուտքի եւ արեւելքի փոխ-յարաբերութիւններն ալ անխուսափելիօրէն ազդուեցան վերոյիշեալ տրամադրութիւններէն, եւ կրօնական պատերազմի - «ճիհատ»-ի արտայայտութիւնները յատկօրէն երեւցաւ, հակա-ամերիկեան եւ հակա-քրիստոնէական շրջանակներու դէմ: Նախագահ Պուշինի յայտարարած միջազգային ահաբեկչութեան դէմ պատերազմը, եւ անոր զանազան եւ զարմանազան դրսեւորումները, տեղակական եւ միջազգային շրջանակներու մօտ, հակադարձ են կրօններու միջեւ տեղի ունեցող անհանդուրժողութեան: Ամերիկեան բանակի հանդէպ թշնամական արարները, իրաքի մէջ թէ այլուր, յատկօրէն կը դրսեւորեն ճիհատական կրօնական պատերազմի զգացումները: Հարց է թէ ե՞րբ կիրքերը պիտի հանդարտին եւ կրօններու եւ անոնց ենթակա քաղաքակրթութեանց միջեւ խաղաղ գոյակցութիւնը պիտի վերաստատուուի: Մարդկային պատմութեան ընթացքը, մանաւանդ այսօրուայ տուալներու լոյ-

սին տակ, մեզ չի լեցնէր լաւատեսութեամբ: Ուսամա Պըն Լատընի ճակատագիրն ալ սերտօրէն կը մնայ կապուած այդ յոռետեսութեան:

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԶ

Այս յօդուածի մուտքին մէջ, ըսուեցաւ արդէն որ տնտեսական հարցերը մօտէն առնչուած են քաղաքական հարցերուն: Երբ միջազգային քաղաքական կացութիւնը մեծ մասամբ կը մնայ ձգտուած, ահաբեկչական գործողութիւնները եւ շրջանային պատերազմները տեղի կ'ունենան, առանց յստակ ճակատագրի, համաշխարհայնացման այս օրերուն, տնտեսական պատկերն ալ կը մնայ պղտոր եւ անորոշ: Խաբուսիկ են ամերիկեան շուկայի վարդապոյն նկարագրութիւնները, երբ երկիրը պատերազմի ճիւղներուն մէջ միարժուած է: Ամերիկեան, եւրոպական, ասիական եւ յարակից շուկաները, ուշ կամ կանուխ, պիտի ազդուին տեղի ունեցող պատերազմներէն: Երբ միայն իրաքեան պատերազմի համար կը յատկացուին միլիարդաւոր տոլարներ, եւ հորիզոնի վրայ յստակ տուեալներ չկան մօտալուտ դադարեցման եւ խաղաղութեան հաստատման, տնտեսական մարզն ալ կը մնայ գերի պատերազմի գալարումներուն եւ անոնցմէ բխող անապահովութեան:

Դ. ԱՅԼԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ

Հասկնալի է անշուշտ որ այս սիւնակի պատկանող հարցերը, թէ-եւ նուազ կարեւոր կը թուին քան քաղաքական հարցերը, եւ սկայն նոյնքան եւ թերեւս ալ աւելի կարեւոր են քաղաքացիներուն համար: Եթէ նկատի առնենք միայն Ամերիկայի բժշկա-առողջապահական դրութեան ներկայ վիճակը, պիտի համոզուինք աշխարհի ամենահարուստ նկատուած երկրէն ներս, շուրջ 46 միլիոն մարդիկ գուրկ են բժշկական ապահովութենէ եւ յստա-



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ա. ԾՆՆԴԻԵԱՆ ՏՕՆԵՐՈՒԻՆ ԱՌԹԻԻ ՍՐՏԱԳԻՆ ԵՒ ԶԵՐՄ ԾՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒԻՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԻՆ ԵՒ ՍԻՐԵԼԻՆԵՐՈՒԻՆ ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

2006 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԻՆ

կորէն կը տառապին այս վիճակէն: 1975էն ի վեր, այս երկիրը մտահոգ է իր առողջապահական ծառայութեան դրութեամբ, որ կը գտնուի բաժան-բաժան, անկապակից եւ անորոշ վիճակի մէջ, եւ ամէն անգամ փոճը կը կատարուի զայն բարելաւելու մասին, երկրի դրամատիրական դրութիւնը արգելք կը հանդիսանայ անոր: Եւ այսպէս, թէ գործատէր եւ թէ գործաւոր ստիպուած կը մնան իրենց «գիտ ճարին» նայելու եւ փնտռելու ձեւեր իրենց առողջութիւնը պահպանելու համար: Առողջապահական գետնի վրայ, հետեւեալ ընտրութիւնները կը ներկայանան Ամերիկայի քաղաքացիներուն:



Քաղաքական հայաձայններու նոր արշաւի ենթարկուած՝ Ժիրայր Սեֆիլեանի, Վահագն Զախալեանի եւ Արման Պապանեանի

1. Բարձր գումար (deductible) վճարելի առողջապահական ապահովման ընթացքին: Քաղաքացիները, այս պատճառով աւելի զգոյշ կ'ըլլան իրենց առողջութեան: Նաեւ կը զգուշանան յաւելեալ եւ ոչ անհրաժեշտ քննութիւններէ:

2. Հարկային դրութեան (Tax) մէջ զետեղել որոշ գումար, առողջապահական յատկացնելու համար:

3. Որդեգրել կենսաձեւ հիւանդութիւնները կանխելու համար: Պայքարիլ գիրութեան դէմ, ծխելու դէմ, եւ ապրիլ աւելի առողջ կեանք-մարզանք, քուն, եւ այլն:

4. Արձանագրուիլ ընկերութեան մը մօտ, որ կը փնտռէ եւ կը գտնէ ամենէն մատչելի ձեւ մը, առողջապահական ապահովութեան:

Այլազան հարցերու շարքին թուած էինք հոգեբանական եւ կենսաբանական մտահոգութիւնները: Ներկայիս բժշկութիւնը եւ գիտութիւնը կը փորձեն թափանցել մարդու մօտ միտք-մարմին-հոգի եռեւակի փոխ-յարաբերութեան եւ հոն պեղել նոր-նոր ճանապարհներ մարդու առողջութեան համար: Առ այժմ արդիւնքները քաջալերական են:

Ե. ՀԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ընդհանուր կերպով, կարծես հայութեան եւ Հայաստանի տաղտուկները իրենց չէին բաւեր, ասոնց վրայ անխուսափելիօրէն եկան աւելնալու միջազգային բարդ հարցերու ուղղակի կամ անուղղակի ճիւղաւորումները: Այս երեւոյթին ամենէն ցցուն արտայայտութիւնը եղաւ Հայաստանի «խաղաղապահական» ջոկատի մը ուղարկումը Իրաք: Ի հարկէ, խորհրդանշական «աքթ» մըն է եղածը, եւ սակայն իրաքեան պատերազմի ստացած պատկերացման շունչին տակ, այդ քայլը ապահովաբար պիտի նկատուի փրօամերիկեան կեցուածք մը, Հայաստանի կողմէ, բան մը որուն ամենեւին կարիքը չունենր Հայաստան:

Մանաւանդ որ այդ քայլին դէմ կեցան հայ ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութիւնը, Հայաստանէն ներս թէ արտասահմանի մէջ:

Այս մէկ քայլի ընդմէջէն կարելի է նկարագրել Հայաստանի ներկայ իշխանութեանց հետեւած քաղաքականութիւնը ներքին եւ արտաքին մարզերէն ներս: Ներքին կեանքի ցցուն եւ մտահոգիչ երեւոյթներէն կարելի է թուել համատարած աղքատութիւնը, 75-80 առ հարիւր, փտախտի ընդհանրացած երեւոյթը պետական, եւ ոչ պետական, ոչնիսկ բարձր կրթութեան հաստատութիւններէն ներս, ինչպէս նաեւ երկրէն ներս տիրող անիշխանական կարգերու, ընտրութեանց ապօրինական գործողութիւններու, ալան-թալանի անկասելի ընթացքը, եւ մանաւանդ ընդհանուր անբարոյութեան դրսեւորումները, իշխանական, պանքային, կրթական, տնտեսական եւ այլ բնագաւառներէն ներս: Երկիրը միւրձուած է «ազատ շուկայական» նկարագրուած, քափիթալիտական-դրամատիրական ամենէն բիրտ, ամենէն աղտոտ տնտեսական հասարակարգի մը մէջ, ուր առանց ամչնալու հրապարակային ցանկեր կը յայտարարուին երկրի միլիոնատէրներու անունները, նախագահէն, պատերազմի նախարարէն, պանքայի տնօրէնէն մինչեւ խորհրդարանի անդամները: Այս յիշուած մարդիկը ինչու՞ չեն հոգար սահմանային գիւղերու վերականգնումը, եւ Սփիւռք-Հայաստան անամէջ համագումարներէն կը յուսան արտասահմանի, երբեմն հայրենասէր, երբեմն ալ պիզնեսասէր հայերէն որ նիւթական ներդրումներ կատարեն Հայաստանէն ներս: Առանց ստորագնահատելու Լոս Անճելոսեան «թելեթոն»երու խորհրդանշական արժէքը, անոնցմէ հաւաքուած մեծ գումարներն ալ վստահաբար կը ծառայեն Հայաստանի իշխանութեանց յայտնի կամ ծա-

ծուկ ծրագիրներուն:

Անդին տակաւին կայ Ղարաբաղեան անլոյծ մնացած հարցը, որ հաւանաբար անլոյծ կը մնայ քոչարեանական իշխանութեան վերապրումը ապահովելու համար, քանի որ լուծումներու կարգին կը յիշուին գիշումներու հարցը, եւ այս մէկին իրականացումը, ենթարկուելով ժողովրդային զանգուածային ընդդիմութեան, կրնայ վտանգել նոյնինքն քոչարեանական իշխանութեան հիմերը:

Հայաստանեան մամուլի մէջ, ցաւով կ'անդրադառնանք այնպիսի յօդուածներու որոնց խորագիրները կ'ըլլան.

- «Օրէնքով պարտադրուող անօրինականութիւն»:

- «Թալանը բարձր տեխնոլոգիաներով»

- «Միջազգային ճգնաժամ՝ Զաւախքի մասին»

- «Քաղաքական հալածանքներու նոր արշաւ՝ Ժիրայր Սեֆիլեանի, Վահագն Զախալեանի եւ ուրիշներու նակտմամբ, որոնց մէջ Արման Պապանեանն է»:

- «Եւրոխորհուրդի անդամակցելէ ասդին, Հայաստանի մէջ ոչ մէկ ընտրութիւն արդար չէ եղած»

Երկար է շարքը ժխտական երեւոյթներու եւ զարմանալին հոն է որ տիրող իշխանութեանց հոգը իսկ չէ թէ ի՞նչպէս է կացութիւնը Հայաստանի մէջ... Ֆրանսայի Լուի 14րդ թագաւորը կը յայտարարէ - «Ինձմէ ետք ջրհեղեղ» Հայաստանի ներկայ իշխանութիւններն ալ նոյնպէս կը մտածեն: Այս բոլորին մէջ, Հայաստանի օրհներգի հարցը կը մնայ ջնջին մանրամասնութիւն մը: Աննշան «մարնրամանութիւն» մըն է նաեւ, Դեկտեմբեր 7ին գործուած յարձակումը «ՀՈՒԱԿ»ի ատենապետ Յարութիւն Առաքելեանի վրայ...

Հայութեան արտասահմանեան կեանքէն ներս, հակառակ առկայ

բազմաթիւ դժուարութեանց - ազգապահպանման, կրթութեան, քաղաքական, տնտեսական, ներգաղութային, եւ այլն, յիշատակելի եւ գնահատելի կը մնան ճիգերը անոնց, որոնք վարդգէս Եղիայեաններու նման, հետեւողական կերպով կը հետապնդեն ցեղասպանութեան զոհ գացած հայորդիներու իրաւունքները, որ կը նշանակէ նաեւ արթուն պահել Յեղասպանութեան ճանաչման կարեւոր հարցը: Այստեղ պէտք է յատուկ գնահատանքի արժանացնել թուրք մտաւորականներու եւ լրագրողներու «քաջութիւնը» Յեղասպանութեան թուրքիոյ կողմէ ճանաչման եւ ընդունման հարցին մէջ, ճանաչում, որ ուշ կամ կանուխ, անպայման կ'իրականանայ:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

2006 թուականի բախտորոշ իրադարձութեանց շարքն ու կարեւորութիւնը: Ի՞նչ կայ վերապահուած 2007 թուականին համար, որ կոչուած է ըլլալու նոյնպէս բախտորոշ տարի մը միջազգային թէ ներազգային տեսակէտէ: Մեր միակ մաղթանքն է որ այդ բախտորոշութիւնը ըլլայ դրական, եւ ոչ թէ ժխտական, որպէսզի խաղաղին մարդոց տագնապեալ հոգիները, եւ սկիզբ դրուի յարաբերական խաղաղութեան մը, պատերազմի ճիրաններուն մէջ զալարող մարդոց եւ երկիրներուն: Ի վերջոյ աստուածային պատգամն է «մարդոց միջեւ հաճութիւնը եւ աշխարհի մէջ խաղաղութեան ստեղծումը»:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՏԱ ԵԱՂՍՁԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՈՒԵՑ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒԲԻՆ ԽԱՆ-ԱԶԱՏ

Այն ժամանակից ի վեր, երբ Հնդկաստանցի Օրիի առաջարկութեամբ եւրոպական արքունիքների դռները բախող հայ պատգամաւորութեան ջանքերը՝ գոնէ Ղարաբաղի Մելիքների իշխանութիւնը վերականգնելով, մի ազատ հայկական հող ստեղծել՝ ի դերեւ անցաւ, Հայ ժողովուրդը այլեւս միանգամայն կորցրել էր իր յոյսը ազատ Հայաստան ստեղծելու մասին: Այնուհետեւ Հայութեան միակ բաղձանքն այն էր միայն, որ մի քրիստոնեայ տէրութիւն տիրի իրանց երկրին, եւ Հայ ժողովուրդը ազատուելով պարսկական եւ տաճկական-մահմեդական լուծից, գոնէ քրիստոնեայ պետութեան հպատակը դառնայ: Եւ հէնց այդպէս էլ եղաւ մասամբ. Ռուսերը տիրեցին Հայաստանի մի մասին եւ մեր հայրենիքն ու ժողովուրդը երեք մասի բաժնուեց ու երեք տարբեր կուլտուրաների տակ ապրեց:


Անկախ Հայաստան ստեղծելու յոյսից զրկուած, հայ մտաւորականութիւնը այլեւս իր հայրենիքի անցեալովն էր միայն օրօրում, նրա անցեալ փառքը փառաբանում էր բանաստեղծների բերանով, նրա վիշտը կոծում ու իր պլատոնական հայրենասիրութիւնը երգում:

«Հայաստան երկիր դարատավայր, եւ մարդկայնոց ցեղին օրրան դու եւ բնիկ իմ Հայրենիք, Հայաստան, Հայաստան», երգում էր բանաստեղծներից մէկը:

Մի ուրիշը երգում էր.
«Հայրենիք սրբազան իմ սիրուն աշխարհ, թռչում եմ դէպի քեզ հոգովս անդադար»:

Մի երրորդը երգում էր.
«Ո՛հ ինչ անուշ եւ ինչպէս գով, ծառոց մէջէն փչես, հովիկ, ծաղկանց վրայ գուրգուրալով, եւ մազերուն կուսին փափկիկ, բայց չես հովիկն իմ հայրենեայց, գնա անցիր սրտէր ի բաց»:

1887-ին, յեղափոխական գաղափարներով աչքի գարնոյ երիտասարդներէն Ռուբին Խան-Ազատ՝ ժրնեմ գտնուող նոյն գաղափարներով առաջնորդուող Աւետիս Նազարբեկեանի, Մարո Վարդանեանի, Կաֆեանի, Ղարաբեանի, Մանուէլեանի եւ Աֆրիկեանի հետ կը հիմնեն «Հնչակ» թերթը, որուն անունով ալ կը մկրտուի իրենց յեղափոխական խումբը, դառնալով Հնչակեան Կուսակցութիւն:



Եօթը հիմնադիրներէն Ռուբին Խան-Ազատին վիճակուեցաւ մեկնիլ Արեւմտեան Հայաստան եւ լծուիլ Կուսակցութեան անդամագրութեան ու մասնակիւղեր կազմակերպելու աշխատանքին, այդպիսով դառնալով Հնչակեան առաջին գործիչը: Կուսակցական կազմակերպչական աշխատանքներու կողմէն Ռուբին Խան-Ազատ փորձեց նաեւ մէկ դրօշի տակ համախմբել թրքական լուծի դէմ պայքարող հայկական բոլոր խմբաւորումները:

Հետագային, Ռուբին Խան-Ազատ գրելով իր յուշերը լոյս սփռեց Հայ ժողովուրդի պատմութեան այդ ցակատագրական ժամանակաշրջանի կարեւորագոյն իրադարձութիւններուն վրայ:

Ստորեւ, Ռուբին Խան-Ազատի յուշերը Հնչակեան Կուսակցութեան կազմութեան մասին:

ՄԱՍԻՍ

Եւ այդպէս անվերջ երգում էր հայ մտաւորականը եւ այդ եղանակով վճարում իր հայրենասիրական տուրքը:

Անցան տարիներ, ու յանկարծ ապստամբական հրդեհ է բռնկուած Բալկանեան թերակղզու վրայ եւ միմեանց յետեւից եւրոպական մեծ պետութիւնների, գլխաւորաբար Ռուսիայի, աջակցութեամբ, ազատ են յայտարարուած Յունաստանը, Սերբիան, Մոնտենեկրոն ու Բուլգարիան:

Այդ հանգամանքը միանգամայն ցնցում է ամբողջ Հայութիւնը, եւ նրա մէջ նորից ազատ Հայաստան ունենալու յոյսի կայծերն են բորբոքում: Եւ այդ շատ յարմար բոլորէին յանկարծ հնչում է

Հայոց ազգային երգիչ Գամառ-Քաթիպայի թնդազին կոչը.

«Բաւ է, եղբարք, վիզ ձկէլ, Ողորմելի երեւիլ, Ժամանկը հասել է Հայ դրօշակը ծածանել»:

Որպէս արձագանգ ազգային երգչի կոչին, հրապարակ է նետուած ազգային քերթող Բաֆֆին ու վիպական ձեւով, ծանօթացնելով հանդերձ հայ մտաւորականութիւնը թիւրքահայաստանի գանազան վայրերի, վանքերի ու կիրճերի հետ, մի ամբողջ ծրագիր է տալիս, թէ ինչպէս պիտի կազմակերպուին հայ յեղափոխականները եւ ինչպէս պիտի գործեն նրանք:

Բաֆֆին որ մի քանի տարի առաջ յուսահատ կերպով երգել էր.

»»



«Արդեօք գալու է մի օր ժամանակ Մասիսի գլխին տեսնել մի դրօշակ»,

Բալկանեան ազգերի ազատութիւնից յետոյ, համոզուած յեղափոխական էր դառել ու, իր հասկացած չափով, յեղափոխական գործունէութեան ծրագիրներ էր մշակում:

Ձգացումները բռնկուել էին, վառ յոյսերը բորբոքուել, անհրաժեշտ խօսքն ասուած էր եւ մնում էր միայն գործունէութեան սկսել:

Բայց հէնց այդ գործունէութիւնն էր, որ ուշանում էր: Եւ ուշանում էր այն պարզ պատճառով, որ թիւրքիայի հայկական նահանգներում, որոնք ազատ Հայաստանը պիտի կազմէին համաձայն Պերլինի դաշնագրի ճշգրտածի, լաւ պատրաստուած բարձր մտաւորականութիւն չկար, որը ընդունակ հանդիսանար յեղափոխական կազմակերպութեան գլուխն անցնելու ու նրան պատշաճ հիմքերի վրայ դնելու: Այդ նահանգներում եղած մտաւորականութիւնը կազմում էին միայն այնտեղի դպրոցական մի քանի ուսուցիչներն ու ընթերցասէր երիտասարդ արհեստաւորներն ու առեւտրականները: Սրանք հիմ-

Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առթիւ, մեր ջերմ մաղթանքները մեր բոլոր բարեկամներուն: Իսկ մեր սիրելի «Մասիս» շաբաթաթերթին բարգաւաճում:



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՇՈՒՇԻԿ ՄԿՐԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՈՒԵՑ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

նում էին տեղական փոքրիկ կազմակերպություններ, բայց միանգամայն անձեռնհաս լինելով իրանց անելիքները պարզորոշ կերպով որոշելու եւ ընթացք տալու, բաւականանում էին միայն, կառավարութեան կողմից արգելուած, Բաֆֆու Գամառ Քաթիպայի եւ նման հայ գրողների ազատաշունչ գրուածքները ձեռք բերելով ու գաղտագողի իրանց շրջանում տարածելով:

Տարօրինակ կերպով խիստ չէզոքութիւն էր պահպանում Պոլսի եւ Իզմիրի հայ մտաւորականութիւնը, որի սրտին, կարծես, շատ աւելի մօտ էին Եւրոպայում տեղի

տրամադրուած, այնուամենայնիւ նա էլ գործունէութեան ասպարէզ էր իջնում: Հայկական դատին նուիրուած մի ասպարէզ գրականութիւն էր ստեղծուել Ռուսահայերի ձեռքով ամէն տեղ եւ ամէն շրջաններում թէ՛ խօսակցութեան եւ թէ՛ ճառերի ամենասիրուած նիւթն էր դառել Թրքահայաստանում յեղափոխական կազմակերպութիւն ստեղծելու, ապստամբութիւն առաջացնելու խնդիրը, բայց եւ տեղից ոչ ոք էլ չէր շարժում գործնական քայլ առնելու համար: Յեղափոխականօրէն տրամադրուած Ռուսահայ մտաւորականը շատ աւելի սիրով գնում էր ռուս յեղափոխա-



Հնչակեան կուսակցութեան հիմնադիրները

ունեցող քաղաքական անցողարձաները, քան հայկական նահանգներում տեղի ունեցող կառավարական ու քրտական անիրաւութիւնները:

Ռուսահայ մտաւորականութիւնն էր որ ամէնից աւելի իր սրտին մօտիկ էր ընդունում հայկական հարցը: Քրիստոնէայ Ռուսի տիրապետութեան համը լաւ ճաշակած, նրա բռնաւոր, այլասերող կուլտուրական ճնշումներից յուսահատուած Ռուսահայի մէջ շատ աւելի մեծ էր՝ մի ազատ սեփական երկիր ունենալու եւ իր հարազատ լեզուով կուլտուրա զարգացնելու տենչը: Եւ հենց դրա համար էլ Ռուսահայ մտաւորականութիւնը շատ աւելի էր հետաքրքրւում ու զբաղւում Թրքահայաստանի ճակատագրով ու ազատ Հայաստան ձեռք բերելու խնդրով, քան Պոլսահայ կամ Զմիւռնահայ մտաւորականութիւնը:

Չնայելով այդ բոլորին, սակայն, եւ չնայելով, որ Ռուսահայ մտաւորականութիւնը, լինելով մտաւորապէս շատ աւելի պատրաստուած ու յեղափոխականօրէն

կանները հետ աշխատելու, քան անցնելու Թուրքիա եւ այնտեղ գործ սկսելու: Պատճառը անշուշտ այն էր, որ Թուրքահայաստանի միջավայրը – այնտեղի լեզուն, նիստ ու կացը, կառավարչական սիստեմը եւ այլն – լինելով միանգամայն օտար ու անծանօթ, չափազանց դժուարին էին թուում այնտեղ գործելու պայմանները:

Այդպիսով հայկական հարցի շուրջը տարիներով շարունակուող խօսակցութիւնը եւ ճառերը չափազանց շատ էին յիշեցնում յայտնի «Մկների ժողովը»: Բոլորն էլ համոզուել էին, որ անհրաժեշտ է կատուի վզից մի զանգակ կախել, որպէսզի հնարաւոր լինի նրա գալն իմանալ ու ազատուել նրա ճանկերից, բայց ոչ ոք այն համարձակութիւնն ու յանդգնութիւնը չունէր, որ յանձն առնէր կատուի վզից զանգակը կախելու:

Այդ յանդուգն քայլն առնելու դուրս եկաւ վերջապէս, «Հնչակեան կուսակցութիւնը», որ կազմակերպուեց Պուլկարիայի ազատագ-



«ԸՆԶԱԿ»Ի ՍՈՑ. ԴԵՄ. ԸՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԻՒԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

Երբ որ տեսնում եմ, ծանրացած թիրքի անարգ շղթաներով, աշխարհիս մէկ անկիւնում մենակ ու որբացած, հայ ժողովրդային մասսան, ընդհանրութիւնը դարերի ընթացում ողորմ, ճնշում, հարստահարում, հալածում. մի բուռն ցանկութիւն, մէկ անկեղծ միտք ծագում է մեր մէջ այդ ժամանակ. առաջացնել հայ ժողովրդի փրկութեան խնդիրը, փաստաբանել ու պաշտպանել այդ խնդիրը եւ պատերազմի այդ խնդրի համար:

«Ունենալ ազատ խօսք, իրքեւ միջոց ազատաբար դիտելու ու բնեւորութիւն հայ ժողովրդային ընդհանրութեան կեանքի կողմերը, հրապարակ հանելու այն բոլոր թշուառութիւնները, որ վաղուց դարձել են նրա միակ բաժինը եւ մատնանիչ անելու այդ ժողովուրդի կոչումը, որոշելու այն միջոցներն ու նպատակները, որոնք պիտի տանին նրան դէպի մէկ ապահով կեանք, դէպի մի կեանք, որ միջոց կ'ունենայ ազատ կերպով զարգանալու եւ ծաղկելու. ահա, ընդհանուր խօսքերով, այս հրատարակութեան շարժառիթները:

«Լինել միշտ ճշմարտի կողմը եւ դէմ ճշմարտի, արդարութեան պաշտպանութեան տակ անցնել, մարտնչելով անարդարութեան դէմ, ազատութեան անձնուէր եւ բռնութեան հալածող, լսող խելի ձայնին եւ թշնամի նախապաշարմունքներին, լինել զարգացող ժողովուրդների կողմը եւ դէմ փտած կառավարութիւնների, ահա մեր նշանաբանը, ուղղութիւնը ու պարտականութիւնը:

«Թիրքահայերի հայ ժողովուրդի վերաբերութեամբ մեմօ այն խորին համոզումն ունիմ, որ պէտք է անպատճառ շուտով ջարդուիմ նրա նառաջադիմել արգելող ամբապինդ շղթաները եւ նա ունենայ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՍՈՒԹԻՒՆ, իրքեւ անհրաժեշտ պայման նրա կեանքի ապահովութեան եւ նրա բազմադիմի զարգացման համար:

Սակայն ասելով քաղաքական անկախութիւն մենք դա չենք համարում այնպիսի վերջնական կէտ, որը կարող կը լինի բաւարարութիւն տալ նրա կեանքի բոլոր պահանջներին, որից աւելի իւր ողջ գոյութեան ժամանակ նա էլ պէտք է չունենայ: Ոչ. քաղաքական անկախութիւնը հայ ժողովրդի համար պիտի համարուի լոկ այն անհրաժեշտ պայմաններից մէկը, որի իրագործումից յետոյ միայն բացում է ասպարէզ հայ ժողովրդի քաղաքական ու սօցիալ-տնտեսական կեանքի մէջ մտցնելու համար մի երկայն շարք հիմնաւոր, արմատական վերանորոգումներ: Քաղաքական անկախութեան իրագործումից յետոյ հայ ժողովուրդը պէտք է դիմի դէպի կեանքի այնպիսի կերպերը, որոնց գոյութեամբ ամենքը եւ իւրաքանչիւրը ազատ լինի, ամենքը իրար հաւասար ու եղբայր նանաչեն, որոնց գոյութեամբ նշմարիտ ուղի բացուէ եւ հաստատ հիմք լինի ընդհանրութեան մտաւոր, բարոյական ու աֆֆէկտական լիակողմանի զարգացման համար:

«Թիրքահայերի անկախութեան իրագործումը լոկ դրսից չէ կարող լինել՝ այլ լոկ ներսից է նա կարող յաջողութիւն ունենալ: Եթէ եւրոպական տէրութիւնների միջամտութեանը սպասեմք եւ մեր ձեռքները ծալենք, հայ ժողովուրդը առաւել անտանելի թշուառութիւնների մէջ կը խորասուզուէ: Ճիշդ է, որ կարող են առաջանալ քաղաքական մեքենաների այնպիսի իրարանցումներ, որ եւրոպական այս կամ այն տէրութեան համար նոյն ժամանակին շահաւէտ կը լինի բարձրացնել հայկական խնդիրը եւ նրա բաւարար իրագործումն ուղղակի կամ անուղղակի կերպով պահանջել, սակայն այդպիսի առիթները մեզ աւելի կը հասկացնեն՝ ինչպէս արդէն եղել է, որ պէտք էր կանխապէս պատրաստ լինէինք՝ դրանից օգտուելու համար: Եւ այդու ամենայնիւ աւելացնում եմ, որ այժմեան քաղաքականութիւնը, դիպլոմատիան, նմանում է քամու ջրաղացին. այսօր այն կողմն է նա շրջում, որ կողմ որ քամին է իր շունչն ուղղում, իսկ վաղը ջրաղացը կարող է նոյն քամու քանակով լինել հակառակ կողմը պտտուել:

«Այդպիսի խարխուլ հողի վրայ մենք չենք կարող դնել այնպիսի սուրբ եւ ծանրաշիւք գործի աջողութեան հիմք, որպիսին ժողովրդական գործն է: Այդ գործին հարկաւոր է մի հիմք, որ յենում լինի հաստատ ու ամուր հողի վրայ. այդպիսի հող նոյն ինքը թիրքահայ ընդհանրութիւնն է, նոյն ինքը թիրքահայ ժողովուրդն է: Թիրքահայ ժողովրդի դրութեան հիմնական ու ծանր պարագաներում մասսային շարժումը, բունի, ստիպողական միջոցներն, ապստամբական, յեղափոխական սպառնալիքները թուրք կա-

Մեր բարեկամներուն կը մաղթենք առողջ, բաղդաւոր եւ երջանիկ Նոր Տարի եւ Շնորհաւոր Սուրբ Ծնունդ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹՈՐԳՈՄ ՓՈՍՏԱՃԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՈՒԵՑ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

րումից ճիշդ 10 տարի յետոյ՝ 1887 թուականին Ջուլիցերիայի ժընեբ քաղաքում:

Այդ առաջին հայ յեղափոխական կուսակցութիւնը կազմակերպուեց հետեւեալ պայմաններում.


1885 թուի ամառը, թիւրքական հալածանքներից ճողոպրելով, Մարսէլէ է ապաստանում վանի երբեմնի ուսուցիչ եւ «Մշակ»ի թղթակից Մկրտիչ Փորթուզալեանը: Սա ձեռնարկում է այդ քաղաքում «Արմէնիա»ի հրատարակութեանը, նպատակ դնելով իրան միջնորդի դեր ստանձնել զանազան երկիրներում ապրող հայ վաճառականների միջեւ ու այդպիսով զարկ տալ հայ վաճառականութեան:

Սակայն «Արմէնիա»ի շուրջը շատ շուտով համախմբւում են ոչ թէ հայ վաճառականները, այլ հայկական դատով սոցորոտող եւրոպական հայ ուսանողները: Սրանց համար ցենզուրական կապանքներից ազատ երկրում լոյս տեսնող հայերէն թերթը մի երկնային պարգեւ էր, որի միջոցով հնարաւոր էր անկաշկանդ կերպով արտայայտ-

եւայլն, սակայն ամէնից մեծ տեղ էին բռնում թերթում Մոնպելիէից, Փարիզից եւ մասամբ ժընեբից գրուածները:

Բաւական երկար ժամանակ «Արմէնիա»ի միջոցաւ թիւրքական յեղափոխական գործունէութիւն սկսելու միտքը արծարծելուց յետոյ, յօդուածագիրներից մէկը Մոնպելիէից թէ՛ Փարիզից՝ (չեմ չիշում) առաջարկ դրեց՝ մի ընդհանուր ժողով գումարել, եւրոպական քաղաքներից մէկում, յեղափոխականօրէն տրամադրուած մարդկանցից եւ հիմնել ցանկալի կազմակերպութիւնը, պայմանով միայն, որ ընկերութեան մէջ մտնող անդամներից ամէն մէկը պարտաւորութիւն ստանձնի անպայման թիւրքահայաստան գնալու եւ անձամբ աշխատելու: Իսկ այդ ժողովը գումարելու նախաձեռնութիւնը թողնուած էր Փորթուզալեանին:

Ըստ երեւոյթին արուած առաջարկութիւնը մեծ հաւանութիւն գտաւ ամէն տեղ էլ, բայց Փորթուզալեանը վարանում էր ժողովի նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելու եւ խնդիրը ձգձգուած էր:



Մարօ Վարդանեան-Նազարբեկեան, Աւետիս Նազարբեկեան եւ իրենց գաւակները

ուել հայկական դատի մասին, մտքերի փոխանակութիւն կատարել, շփման մէջ մտնել եւ վերջապէս խօսքից դէպի գործ անցնել:

Եւ ահա կարճ ժամանակի մէջ, վաճառականութեանը ծառայելու նպատակով լոյս տեսած «Արմէնիա»ն, կարմրում եւ յեղափոխական գոյն է ստանում: Իր ստացած բազմաթիւ ու բազմատեսակ յեղափոխական յօդուածների ազդեցութեան տակ կարմրում ու յեղափոխականի գոյն ստանում եւ ինքը Փորթուզալեանը: Իսկ այդպիսի յօդուածներ գրուած էին շատ կողմերից, Պուլկարիայից, Ռումանիայից, Եգիպտոսից, Ամերիկայից

Այդ ձգձգումը նկատելով եւ խնդիրը հաստատ հողի վրայ դնելու նպատակով «Արմէնիա»ի Փարիզի աշխատակից Լեոնեցը (Աւետիս Նազարբեկեան) որ 1886 թուի ամառը, իր նշանած Օր. Մարիամ Վարդանեանի հետ Ջուլիցերիայ էին եկել պտոյտի, մի նոր առաջարկ է ուղարկում «Արմէնիա»ին.

- «Նկատի առնելով որ ընդհանուր ժողով գումարելու խնդիրը ձգձգուած է, թող այժմէն դրամական նուիրատուութիւններ ուղարկուին կազմուելիք ապագայ յեղափոխական ընկերութեան օգ-

» »

«ԸՆԶԱԿ»Ի ՍՈՑ. ԴԵՄ. ԸՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԻՒԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

ոավարութեան դէմ, նպատակայարմար եւ միանգամայն անհրաժեշտ, եթէ միայն միլիոնաւոր ժողովրդի մօտալուտ կորուստը սարսափ չէ ազդում մոյն իրեն կորչող հայ ընդհանրութեան եւ գլխաւորապէս հայ կրթուած ու հասկացող դասակարգի վրայ: Եւ ահա դէպի այդ դասակարգ եմք մեմֆիզիմում եւ առաւելապէս դէպի այդ դասակարգի երիտասարդութիւնը, լինի նա ոուսահայ, քիւրահայ, պարսկահայ՝ ողջ մէկ է. դրանք ամէնքը եղբայր եւ մեմֆիզիանց մէջ ոչ մի գնազանութիւն չեմք դնում ժողովրդական գործի վերաբերմամբ. դիմում եմք դէպի այդ դասակարգը, յայտնելով որ ժողովուրդն առանց նրա աջակցութեան՝ թէ կապ, թէ կոյր եւ թէ տհաս է իր վսեմ դատը պաշտպանելու համար. դիմում եմք դէպի նրան, կոչելով որ լոկ նրա եռանդը, նրա խօսքը, նրա ոյժը կարող են բարձրացնել քիւրահայ ընդհանրութեան խեղդուած ոգին եւ ժողովրդի ոտներին տակ պատրաստել հաստատուն հող կարեւոր յեղափոխական գործի յաջողութեան համար: Այդ պատճառով իւրաքանչիւր մտածող, ազնիւ ու ժողովրդի սիրող հայի նշանաբանն ու գործունէութիւնը մեմֆիզիմում եմք՝ ժողովրդի մէջ, ժողովրդին հետ եւ ժողովրդի համար:

«Այդ նշանաբանն ու նեցող հայերի օրգանը պէտք է լինի մոյն հրատարակութիւնը, որի պարտքն է եւ որոշ ծրագիրը բացատրել ու հաստատել, որ հայ ժողովրդական գործը լոկ յեղափոխականութեամբ է կարող աջող ելլ ունենալ, ընտրել գործնական միջոցներ յեղափոխութիւն անելու համար եւ որոշել նրա մօտակայ նպատակները:

«Ընդհանրապէս հայերիս այժմեան դրութեան մէջ ազատ խօսքը մէկ անհրաժեշտութիւն, մի պահանջ է եւ միեւնոյն ժամանակ նպատակայարմար, միայն թէ այդ խօսքն ունենայ կենդանութիւն, թարմութիւն ու լրջութիւն: Մասնաւորապէս ազատ խօսքը մի պահանջ է այն հայերի համար, որոնց կեանքի նպատակը չէ ամենեւին բաւականաւ անճանկան կամ մի նեղ շրջանի շահերով ու ապահով կացութեամբ, այլ որոնց սրտում կայ մէկ ուրիշ իդ, մէկ ուրիշ յափշտակութիւն, այն է՝ գործել ու բանել ժողովրդի մէջ եւ ժողովրդի համար, տանջուել ու չարչարուել ժողովրդի տանջանքով ու չարչարանքով եւ ազատ խօսքը շրթներին՝ պահանջել ժողովրդի բարին, բողոքելով չարի դէմ:

«Այո՛, չարչարում եւ հալածում զգաւակներ չարչարում ու հալածում հայերի՝ մեմֆիզի, հայերս, ծարաւ ունիմք ազատ խօսելու, ազատ մտածելու, որ դեռ մանկութիւնից, յանուն բոնակալի օրէնքին, արգիլել են մեզ, աշխատելով գրկել մեզ իմֆուրոյնութիւնից եւ դարձնել բոնաւորների ու նեցողների ոտ լզողներ: Դժբախտ է այն հայը, որ հասել է այդ վիճակին, բայց նրանք, որոնք այսպէս կամ այնպէս կարողացել են խուսափել այդ թունաւոր պատուաստից, նրանք, որոնք զգալով հայ ժողովրդի ընկնում դրութիւնը, միանգամայն մտածել են այդ դրութիւնը յեղաշրջելու անհրաժեշտութեան վրայ, դրանք, իբրեւ արթուն, առողջ տարր հայութեան, բող բարձրացնեն իրանց ձայնը եւ խառնեն մերիմի հետ, եթէ նրանց ուղղութիւնն ու հայեացքները տարբեր չեն մերոնցից. սոյն հրատարակութեան թերթերը բաց են այդպիսիների համար:

«Հայերիս այսօր հարկաւոր եւ գործի եւ անկեղծ խօսքի մարտիկներ եւ այդպիսիներից ասպարէզ հանելու համար պէտք է նպաստել սոյն հրատարակութիւնը:

«Մեմֆիզիտներ թէ որպիսի մեծ դժուարութիւններ ու խոչընդոտներ կան եւ դեռ կ'առաջանան մեր հանդէպ այսպիսի հրատարակութեան ձեռք գարնելով. այդ դժուարութիւններից գլխաւորն այն է, որ ազատ խօսքն ունենալու համար մեմֆիզիտներն անհրաժեշտ են մի բացարձակ մուտք չէ կարող ունենալ ոչ ոուսահայերի եւ ոչ քիւրահայերի մէջ: Բայց մեր հայրենակիցների ցանկութեամբ ու եռանդով, լիայոյս եմք, այդ խոչընդոտը կ'անհետանայ, որք եւ անհրաժեշտ է:

«Թող «ՀՆՁԱԿՆ» անդադար հնչէ եւ կոչէ՝ եղբայրը եղբօրը ձեռք տայ եւ բող նրա հնչիւնը բշտամու ականջին հասնէ եւ նրան դողացնէ. բող նա հնչէ բացարձակ ու խրոխտ կերպով օտար տեղերից, եւ բող նա հնչէ, թէպէտ գաղտնաբար, բայց միշտ արդար բարբառով, մոյնիսկ հայրենի երկրում, մինչեւ որ հայ ժողովրդի վրայ տիրած խաւարը վառ արշալոյսին տեղ կը տայ»:

1887 - Նոյեմբեր ԺԸՆԵԻ

ԿԸ ԾՆՈՐՀԱԻՈՐԵՆՔ ԿՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԾԱՆՕԹՆԵՐՈՒՆ ՄԱՂԹԵԼՈՎ ԲԱՐՕՐ ԵՒ ԵՐՋԱՆԻԿ ԿԵԱՆՔ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՈՒԵՑ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

տին եւ թող Պրն. Փորթուզալեանը ժամանակաւոր գանձապահի պաշտօնն ստանձնի:

Մինչ այդ առաջարկի թերթում լոյս տեսնելը, Նազարբէկեանն իր նշանածի հետ արդէն ժընեւ էին վերադարձել: Ժընեւում այդ ժամանակ ընդամէնը երեք կովկասահայ ուսանողներ կային, Գաբրիէլ Կաֆեան, Մկրտիչ Մանուչարեան եւ տղերինս գրողը: Մենք շատ շուտով մտերմացել ու սիրել էինք նորեկ գոյգին, որոնք պատրաստուած էին Փարիզ վերադառնալու:

Ճիշտ այդ ժամանակն էր, որ լոյս տեսաւ Լեոնեցի վերոգրեալ առաջարկը «Արմէնիա»-ում որի տակ Փորթուզալեանը մի ծանօթութեամբ հրատարակեց ժամանակաւոր գանձապահի պաշտօնն ստանձնելուց, յայտարարելով միեւնոյն ժամանակ, թէ ինքը չէ կարող կազմուելիք յեղափոխական ընկերութեան մէջ մասնակցիլ, որովհետեւ ինքը արդէն մի այլ ընկերութիւն է հիմնում, որի ծրագիրն ու կանոնադրութիւնը մօտ օրէն պիտի լոյս ընծայի:

Փորթուզալեանի արած այդ volte-faceը սառը ջուր լցրեց ոգեւորուած երիտասարդներին վրայ եւ բուռն գայրոյթ առաջացրեց նրանց մէջ: Հարկաւոր էր ուրեմն գործը գլուխ բերել առանց Փորթուզալեանի մասնակցութեան եւ առանց «Արմէնիա»-ի միջնորդութեան: Ամէնից առաջ մենք խնդրեցինք եւ համոզեցինք Նազարբէկեանին ու Օր. Վարդանեանին՝ չվերադառնալ Փարիզ, այլ մնալ ժընեւում իրանց ուսումը շարունակելու: Յետոյ անսպառ եռանդի տէր Կաֆեանը, համարեա թէ կէս ժամուայ մէջ, որոշեց անձամբ գնալ Մոնպելիէ, ծանօթանալ, խօսիլ այն տեղի հայ ուսանողների հետ, եւ ապա անցնիլ Մարսէլ Փորթուզալեանին անձամբ համոզելու դիտա-

ւորութեամբ: Եւ անմիջապէս ճանապարհ ընկաւ նա: Հագիւ մի շաբաթ անցած, Կաֆեանը վերադարձաւ հետը բերելով Մոնպելիէյի հայ ուսանողութեան մեծագոյն մասին, - Մատթէոս Շահազիզեան («Արմէնիա»-ի ամենաուժեղ աշխատակիցը, Կօրան ստորագրութեամբ), Գէորգ Ղարաջեան, Քրիստափոր Օհանեան եւ Պօղոս Աֆրիկեան:

Կաֆեանը եղել էր եւ Մարսէլում բայց ոչ կերպ չէր կարողացել համոզել Փորթուզալեանին խիստ հիասթափուած էր վերադարձել նրանից:

Իննը հոգի այդպիսով համախմբուած ժընեւում մենք որոշեցինք այլեւս չսպասել, ոչ մի ընդհանուր ժողովի, որի իրագործումը առանց թերթի այլեւս անհնարին էր դառնում, ինքներս հիմնեցք բաղձալի յեղափոխական ընկերութիւնը, մշակենք նրա ծրագիրը եւ ապա կոչ անենք ուրիշներին մեզ հետ միանալու:

Սկսուեցին նախնական մտքերի փոխանակութիւնն ու անվերջ տաք վիճաբանութիւնները, որ մօտ 2-3 ամիս տեւեցին եւ որոնց հետեւանքն այն եղաւ որ ամբողջ խումբը երկու խմբակցութիւնների բաժանուեց, վեց եւ երեք հոգիներից բաղկացած: Անջատուող երեք հոգին էին՝ Մ. Շահազիզեան, Մ. Մանուչարեան Պրն. Աֆրիկեան:

Մնացած վեց հոգին ընդհանուր համաձայնութեան գալով, որոշեցինք ընկերութեան ծրագիրը կազմել եւ մեր սեփական թերթը հրատարակելու: Բայց դրանից՝ որոշեցինք մի պամֆլետով պոկել Փորթուզալեանի կեղծ դիմակը, որը մի տարուց աւելի իրան թուրք յեղափոխական էր ցոյց տուել, իսկ վերջում երբ անհրաժեշտ էր խօսքից գործի անցնելու, յայտարարել էր, թէ ինքը չէ կարող յեղափոխական ընկերութեան մէջ մասնակցիլ:

Պամֆլետը «Հայակեր Քամելիոն» վերնագրով, գրեց Ա. Նազարբէկեանը, որը մեր մէջ թէ ամենատաղանդաւորն էր եւ թէ՛ լաւ հայերէն գիտցողը: Չի սպասելով սեփական տպարան ունենալուն, «Հայկեր Քամելիոն»ը տպագրեցինք տաշիկրաֆ գործիքով:

Ծրագիրը վեցիս ընդհանուր համաձայնութեամբ մշակելուց եւ հաստատելուց յետոյ, երազուած հայ յեղափոխական ընկերութիւնը կազմուած էր արդէն: Մնում էր մեր սեփական մամուլն ունենալ, կարենալու համար մեր մտքերն արծարծել եւ նոր ընկերներ վաստակել:

«Soire'e Caucasiennne» անունով մի երեկոյթ կազմակերպեցինք ժընեւի ընդարձակ սրահներին մէկում եւ նրանից գոյացած գումարի վրայ աւելացնելով մեր կամաւոր նուէրները, ուղարկեցինք Վիեննա թէ՛ Վենետիկ (լաւ չեմ չիշում) տառեր ստանալու համար: Իսկ մինչ տառեր ստանալը, բոլոր ընկերներս սկսեցինք ուսու յեղափոխականների տպարանում գրաշարութիւն սովորիլ, որպէսզի հենց ինքներս շարենք մեր հրատարակելիք թերթը:

Մի մեծ խնդիր էր մեզ համար թերթի անունը որոշել: Մի շարք անուններ հոլովելուց յետոյ, վերջապէս կանգ առանք Նազարբէկեանի առաջարկած «Հնչակ» անունով վրայ, որի անունով էլ մեր հիմնած ընկերութիւնը անուանեցինք «Հնչակեան Կուսակցութիւն»:

Տառերը ստացուեցինք 1887ը թուի ամառը միայն: Այդ ժամանակ մեր ընկերներից երկուսը բացակայում էին ժընեւից. Կաֆեանը գնացել էր Լայպցիգի, Մանկավարժութիւն սովորելու, իսկ Օհանեանը Կովկաս, ամառնային արձա-

կուրդով: Մնացած չորս ընկերներս պիտի խմբագրէինք «Հնչակ»-ի առաջին թիւը: Ընդհանուր խորհրդակցութեամբ որոշելուց յետոյ, թէ ինչպիսի եւ ինչ բովանդակութեամբ յօդուածներ պիտի գետեղուին թերթի առաջին համարում, յօդուածների գրելը բաժանեցինք Նազարբէկեանի եւ Ղարաջեանի միջեւ, որոնք մեր ընդունակ գրողներն էին. Հոկտեմբեր ամիսն էր արդէն, դասախօսութիւնները սկսուած էին բոլոր համալսարաններում, եւ ես պատրաստուած էի գնալ Մոնպելիէ, նպատակ ունենալով գինեգործութիւն սովորիլ, որպէսզի վան գնալով հնարաւորութիւն ունենամ, որպէս գինեգործ այնտեղ ապրելու: Տիկին Նազարբէկեանը (այդ ժամանակ նրանք արդէն ամուսիններ էին) կասկածելով, թէ մի գուցէ պատրաստուած յօդուածների ընտրութեան ժամանակ լուրջ տարածաչնութիւններ ծագին, խնդրեց ինձ՝ փոքր ինչ ուշացնել գնալս, որպէսզի միասին կատարենք յօդուածների ընտրութիւնը: Ես զիջեցի, բայց եւ այնպէս տարածաչնութիւն տեղի ունեցաւ: Ղարաջեանի գրած մի ընդարձակ յօդուածի մասին, երբ որ դիտողութիւններ արեցինք, նրա ինքնասիրութիւնը սաստիկ վիրաւորուեց եւ նա հենց այդ օրուանից ընդմիշտ դուրս եկաւ մեր կուսակցութիւնից:

Ես գնացի Մոնպելիէ եւ «Հնչակ»ը թէ՛ խմբագրելու եւ թէ՛ շարելու ամբողջ ծանրութիւնը մինչեւ Օհանեանի վերադարձը, Նազարբէկեան գոյգի վրայ մնաց: Մոնպելիէյումն էի, երբ Նոյեմբերին լոյս տեսաւ «Հնչակ»-ի առաջին թիւը:

Թ.Ա.Ի.Ի.Չ 1927 Թ. Մայիս

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ Մեր բոլոր հարազատներուն, բարեկամներուն եւ գաղափարի ընկերներուն կը մաղթեմք քաջառողջ, երկար եւ երջանիկ տարիներ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ՔԱԹԻԱ ԵԱՂՍԸԶԵԱՆ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌԻ ՍԱՐԳԻՍ
Middle Eastern &
European Cakes
Delicious Pastry
For All Occasions
(Glendale, Anaheim & Pasadena)



ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

Գիտենք, դարը արագութեան, ճարտարագիտութեան եւ ուրեմն նիւթապաշտութեան անողորք ծաւալումին դարն է, ուր հոգեկան եւ իմացական արժէքներն ու դրսեւեւ ուսմանը մղուած են երկրորդ կամ երրորդ կարգի կարեւորութեան: Արտադրողականութիւնն ու տնտեսական զարգացումը առաջնահերթ պահանջներ են դարձած բոլոր հասարակութիւններուն համար, զգենալով շուկայական առուծախի խեղճ արշաւի բնույթ՝ ուր մարդն ու մարդկային առաքինութիւնները նահանջի մէջ են ամէնուրեք: Շուտ եւ ամէն միջոցի դիմելով հարստանալու անզգայնի տենչը հրապարակներու նոր «բարոյականութիւն»ն է: Դրամին գերապատուութիւնը, կը բացայայտուի ընկերային մեր բոլոր կառուցներուն, մտածողութեան եւ հոգեբանութեան մէջ, շրջելով բարոյականի մեր բոլոր նորմերը: Շահան Շահնուրի հնչեցուցած ազգային ուժացումն ու նահանջը կը շարունակուի տակաւին եւ նոր թափ ալ կը ստանայ, արտագաղթող բազմութիւններու նոր կարաւաններով: Հարենիքի եւ Սփիւռքի հայութիւնը կ'ապրի ահաւոր նոր տագնապ մը. կը կորսնցնէ մարդկային իր ինքնորոշութիւնն ու մաքրութիւնը: Կը նահանջէ Մարդը: Կ'եղծանուի հայ մարդուն բարոյական, ներքին դիմազինը ալ:

Այս մթնոլորտին մէջ, սուտը, կեղծիքն ու խարդախութիւնը, աճապարարութիւնն ու շուկայիկ ճարտարութիւնը սրիկայութեան հետ ձեռք ձեռքի՝ դարձած են ընթացիկ, «ընդունուած» երեւոյթներ, որոնց պատճառով մեր նահանգային բանտերը լեցուած են տանեակ հազարներու համող հայրերին բազմութեամբ:

Եւ տակաւին, դժբախտութիւնը հոն է որ այս եղծանումը միայն մեր գանգուածին իւրապատուէ չէ: Մեր «ընտրանի»ն ալ առողջ վիճակի մէջ չէ: Փոխանակ անբասիրութեամբ օրինակ հանդիսանալու գանգուածներուն, ան ալ, (բացառութիւնները միշտ յարգելով) վարակուած է փառքի, ցուցամոլութեան եւ չտեսութեան մոլուցքով մը նոր, որ կ'ուզէ, շատ անգամ, անարժանաբար, ձեռք ձգել տիտղոս ու պատուանշան, ցուցադրելու համար գանոնք բեմերուն վրայէն, դահլիճներու մէջ, փքու ուրջ կուրծքերուն վրայ, հրապարակով: Ե՞րբ ունեցեր ենք շքանշաններու այսքան առատութիւն, որմով այսօր կը պարգեւատրուին եւ կը պատուուին հազուադէպ արժանաւորներու կողքին նաեւ անարժաններու փաղանգներ:

Պետութիւն, եկեղեցի եւ կազմակերպութիւններ արշաւի ելած են

այս տուուչութեան մարզէն ներս, եւ ձախ ու աջ, փոխան չես գիտեր ինչ ակնկալիքներու, շուայօրէն եւ մրցակցաբար կը բաժնեն յարգամեծար եւ շլացուցիչ անուններով պատուանշաններ՝ այսպէսով արժեզրկելով իմաստն ու կշիռը այդ պատուանշաններուն՝ պարզապէս հասարակ զարդանշաններու վերածելով զանոնք: Կարծէք չբաւեր այս վհատեցնող երեւոյթը, երբ բաւական թիւով «մտաւորական»ներ ալ, տակաւին դժգոհ անարժանաբար ինքզինքնուն հազցուցած այդ պատմուճանէն, կը ձգտին աւելիին, այս անգամ, դարձեալ ինքնամատուց շուտիկութեամբ իրենց գլուխները զարդարելով նորատեսակ տիտղոսներու գլխարկներով:

Այսպէ՛ս, «Տիրոջ տաճար»ը ապականած է «փարիսեցիներով եւ վաշխառուներով»: Ո՞վ մտրակելով դուրս վտարէ պիտի գանոնք, մաքրելով մեր ազգային «տաճարն ու տունը», եթէ ոչ մտաւորականութիւնը: Որովհետեւ, սկզբունքով, միայն ան ունի բարոյական կշիռն ու գիրի եւ խօսքի հզօր զէնքերը:

Շփոթի եւ խեղաթիւրումի այս օրերուն սակայն «մտաւորակն»ի կոչումն ալ վտանգուած է եղծումով: Հասնող գրիչ շարժողին այդքան դիւրութեամբ կը շնորհենք մտաւորականի տիտղոսը, կը շուայլենք գայն ամէն փաստաբանի, բժիշկի, երկրաչափի, վարժապետի եւ կրօնաւորի, որոնք շատ յարգելի անձնաւորութիւններ ըլլալով հանդերձ, բնաւ մտաւորականներ չեն՝ բառին ճշգրիտ իմաստով:

Իսկ ո՞վ է մտաւորականը: Նախ եւ առաջ, բառին ստուգաբանական արմատը միտքն է, որմէ կը յառաջանայ մտածումը եւ մտածողը, ապա՝ մտաւորականը: Ա՛յն անձը՝ որ կը զբաղի մտածումով, այսինքն իմացականութեամբ: Իմանալ եւ մտածել: Ան գործ չունի նիւթականի, ձեռային կամ որեւէ արհեստակցական, նոյնիսկ արուեստի գործունէութեան հետ: Իրը՝ նախ իմանալ է: Ճանչնալ՝ մարդոց եւ հաւաքականութիւններու անցեալն ու ներկան, բարդ հոգեբանութիւնն ու մտածելակերպերը, անոնց արդի բոլոր հարցադրումները, ձգտումներն ու նպատակները, սիրանքներն ու սայթաքումները: Ապա այդ բոլորը համադրելով, վերլուծելով անցընելն է իր մտածողական բովին ընդմէջէն եւ լանգիլը չստակ գաղափարի եւ պատկերացումի: Այսինքն ըլլալ ատակ տիրապետելու տուեալ կացութեան եւ իրադրութեան, կարենալ ստանձնելու համար իրեն վիճակուած ուղեցոյցի եւ առաջնորդի դերը: Մտաւորականին հիմնական առաքելութիւնն է այս դերը, գործի

կատար ածելու համար, ան պէտք է, իր իմացական կարողութեան եւ ընկերափիլիսոփայական գիտելիքներու կողքին գիտուած ըլլալ մանաւանդ նկարագրի լայնեւանդ առաքինութիւններով եւ բարոյական բարձր սկզբունքներով: Քանի իրեն վիճակուած է մարդկութեան խիղճը դառնալու պարտաւորութիւնը: Արդարեւ, ան պարտի ըլլալ անշահախնդիր, ատակ՝ իր անձնական փառասիրութիւնները մոռնալու եւ ամբողջութեամբ նուիրուելու հաւաքականութեան (իմա՝ ընկերային, ազգային կամ համամարդկային) բարօրութեան եւ առաջընթացին իրագործումներուն: Ան դեռ պիտի դառնայ անբեկ պաշտպանը արդարին, գրկուածին, խոշտանքուածին ու կաշկանդուածին: Ախոյեանը մարդկային բոլոր տեսակի արդար իրաւունքներուն՝ ընդդէմ՝ բռնատիրական այլազան կառուցներուն, որոնք կը ձգտին խլել եւ իւրացնել աշխարհի հասարակաց բարիքները: Խօսքը, մտածումի, կարծիքի, խիղճի, հաւատամքի, եւ այլ ընտրութիւններու անշեղ ձայնատարը ըլլալու պատիւը իրեն կը վիճակուի:

Ինք պատրաստէ պիտի նաեւ մարդկութեան ապագան, յաջորդ սերունդներուն համար անեղծ ու ապահով պահելով մեր աշխարհի երկրագունտը: Այս առաքելութեան կարեւորութիւնը հետզհետէ կը շեշտուի, երբ ազան մարդիկ եւ պետու-

թիւններ, ընչաքաղցութեամբ, ծուխով ու մուռով, թունաւոր կազերով եւ հիւլէական ամպերով ու թափոններով, ծառահատութեամբ եւ ջուրերու ապականութեամբ անշնչելի կը դարձնեն աշխարհը եւ կը վտանգեն նոյնիսկ մարդկութեան, բուսականութեան եւ կենդանական աշխարհի ներկայի գոյութիւնն իսկ:

Տակաւին, մտաւորականին ընդգումին ու ձայնին պէտքը ունի մարդկութիւնն ու մեր ազգը, քաղաքագէտներուն անխիղճ սադրանքները մերկացնելու եւ դատապարտելու համար, ժողովուրդներու ինքնորոշման արդար դատերուն պաշտպանութեան եւ խաղաղութեան ամենուրեք հաստատման ի խնդիր: Անշուշտ այս մարզէն ներս, հայ մտաւորականին վիճակուած է միշտ արթուն պահել մեր ազգային պահանջատիրութեան ոգին, վառ պահել մեր մեծ նահատակներուն յիշատակը, եւ աչալուրջ հսկել մեր նորակերտ պետականութեան պահանջներն ու անաղարտութեան:

Ամփոփելով՝ մտաւորականը է ու պիտի մնայ մշտարթուն պահակը մեր ազգային եւ մարդկային բոլոր յատկութիւններուն եւ առաքինութիւններուն, միանգամայն ըլլալով անխնայ ձաղկողն ու մտրակողը՝ մեր յոռի բարբերուն եւ շեղումներուն: Ան պիտի ըլլալ վաղուայ հայութեան եւ մարդկութեան ռահ-վիրան:

ԶԳՈՅԱՏԵՒԵՆՔ ԱՅՆ ՇՔԵՂ ԱՊՐԵՆՔ	
ԱՐՄՆՆՈՒՀԻ	ԲՈՅԱՄԵԱՆ
Միշտ եկող տարին բերում է իր հետ	րիքներ,
Նորանոր իղձեր եւ նոր երագներ,	Մութ ու խաւարից նոր ծնունդ առած
Իսկ մեր բոլոր տարին սպասուած	Մեծ վերելքներով քայլի միմչել վերջ:
Թող արդարացնի յոյսերը սպասուած:	Թող ցնծայ հայարտ մեր աշխարհը հմ
Թող անցնի հանգիստ բոլոր դռներով	Հայարտ թող անցնի պատմութեան միջով,
Շենացնի շէները վաղուց մոռացուած,	Մոռանայ անցած օրերը դաժան վկայ իր կանգուն վանքերն հնամեայ:
Երբեմնի իշխող մութ ու խաւարը	Թող հնչեն մէկէն զանգերը բոլոր
Թող փոխարինուի դէմքերով պայծառ:	Թող խնկարկու մի բոյրից արբեցան
Թող առաջ գնան մեծ-մեծ քայլերով	Թող մանուկ ու ծեր ձեռք-ձեռքի տուած
Կառուցուեն գիւղեր, քաղաք, աւաններ,	Աղօթեն սրտանց գալիքիդ համար:
Դողդայ հողը մարդկանց ուտքի տակ	Եկենք մենք այսօր, բոլորս մէկէն
Ու ցնծայ ամբողջ հայ ազգը հայարտ:	Իսմենք կենացը մեր փոքրիկ ազգի,
Ցանկանանք, որ այս եկող Նոր Տարին	Ուր էլ կեանքում ապրելու լի-ցենք
Բերի մեր ազգին նոր-նոր բա-	Զգոյատուենք այլ շքեղ ապրեն:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով, Շնորհաւոր նոր Տարի եւ Ա. Ծնունդ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԱՌԹԻ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Եվ դու ո՞վ բարձեալ,
Ամբողջ աշխարհի
Միակ տիրակալ,
Չմոռանաս մեզ,
Մեր հայոց ազգին,
Յոյսերով եկող
Նոր Տարուայ շնմին:

«Սիրոյ Ղօղանջներ»-Վ. Բ.

2006 թվականը, որին շուտով հրաժեշտ ենք տալու, աշխարհում տեղի ունեցած տխուր իրադարձություններով լի տարի եղավ, որը մարդկանց ոչնչացման և աւերակուած շէն քաղաքների ցաւալի ու տխուր յիշողութիւններ թողեց պատմութեանը. պատճառը «քաղաքակիրթ» գերպետութիւնների կամ նրանց հովանաւորութեամբ ու թողութեամբ կատարուած անմեղ մարդկանց զագանային խոշտանքումներն ու յօշոտումներն էին ինչպէս Իրաքում և Աֆղանիստանում, կամ Իսրայէլի Լիբանանի վրայ յարձակման պարագային:

Չարագոցող քաղաքակրթութեան ներկայ դարում Ատրպէյճանի կողմից Նախիջևանում ոչնչացան համաշխարհային արժէք ունեցող հայերի հնադարեան քաղաքակրթութեան պատկանող բազմաթիւ մշակութային յուշակոթողներ: Իսրայէլի ուժակոծութիւնների արդիւնքում բազմաթիւ անմեղ մարդիկ, երեխաներ, մեծահասակներ զոհուեցին ու արդիական կոթողներ ոչնչացան Լիբանանում, որոնց հետեւանքով քանի-քանի ընտանիքներ գրկուեցին իրենց հարազատներից, նոյնիսկ կորցրին իրենց հաւատքը Աստծոյ հանդէպ, ու գալիք նոր տարին նրանց համար լինելու է սուգի Նոր Տարի: Չարագործների ձեռքը բռնող չեղաւ:

ՀՀ-ի և համայն հայութեան բազմաթիւ բողոքներից յետոյ, յուշակոթողների ոչնչացման փաստը ստուգելու նպատակով Նախիջևան ուղղուած միջազգային արդարութեան ջատագովներին Ատրպէյճանը արգելեց մուտք գործել այնտեղ, իսկ Պէյրութի ուժակոծման ժամանակ ԱՄՆ-ի նախագահ ձորձ Պուշը պատճառ բռնելով «Հրգպալը լայի հաբեկչական գործունէութիւնը», Իսրայէլին թոյլ տուեց երկու շաբաթ էլ շարունակել ուժակոծումները «Հրգպալը»-ին ոչնչացնելու համար...: Պուշի հաշիւները ճիշտ դուրս չեկան, «Հրգպալը»ն չպարտուեց, բայց, ինչպէս նշուեց վերեւում, բազմաթիւ անմեղ մարդիկ զոհուեցին ու հսկայական աւերածութիւններ եղան:

Այս նախաբանով շարունակենք մեր մտորումները 2006 թվականի նախօրեակին:

1. ԱՄՆ-ի նախագահ Պուշի նախաձեռնութեամբ (նոյնիսկ ան-

տեսելով ՄԱԿ-ը) սանձագերծուած պատերազմը Իրաքում յանուն ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական շահերի եւ Իսրայէլի ծաւալապաշտութեան, մեր օրերում կարծէք թէ վերածուած է քաղաքացիական պատերազմի՝ չնախատեսուած հետեւանքներով: Բազմաթիւ ամերիկեան զինուորներ ու տասնեակ հազարաւոր անմեղ մուսուլմաններ, շիիներ եւ քրդեր զոհ զնացին ու շարունակում են զոհ գնալ այդ սարսափելի պատերազմին:

Արդիւնքում թանկ վճարեց նաեւ ամերիկեան ժողովուրդը՝ թանկութիւնը անհաւատալի չափերի հասաւ, հազար ու մի միջոցներով բարձրացաւ ամերիկացու վճարումը քարիւղի, սիկարէթի և այլ ապրանքների, ինչպէս նաև ժողովրդի առողջութեան մասին յօրինուած խճճուած նոր ծրագրի համար, էլ չենք խօսում բնակարանների ու նրանց վարձերի աներեւակայելի թուիչ քի մասին:

Վերջապէս սոյն տարուայ Նոյեմբերին ԱՄՆ-ում կատարուած ընտրութիւններում դեմոկրատական կուսակցութիւնը յաղթեց ու նախաձեռնութիւնը վերցնելով իր ձեռքը, Պուշի կառավարութիւնից պահանջում է ելք գտնել ամերիկեան զօրքերը աստիճանաբար դուրս բերելու Իրաքից: Դրութիւնը Աֆղանիստանում համարեա նոյնն է:

Մերձաւոր Արեւելքի տարածաշրջանը չի է վտանգաւոր իրադարձութիւններով, որոնք թէ չսանձուեն գերպետութիւնների կողմից՝ Իսրայէլին պարտադրելով ազատել նրա կողմից բնակեցուած պաղեստինեան գրաւուած տարածքներն ու խաղաղութիւն հաստատել, կարող են առիթ տալ Իսրայէլին կատարել այնտեղ նորանոր վայրագութիւններ և Աստուած գիտի, թէ ուր կարող են հասցնել դրանք: Մենք կարծում ենք, որ Մերձաւոր Արեւելքի խաղաղութեան հաստատման բանալին Ամերիկայի ձեռքում է...:

Ներկայումս այնքան է բարդացել դրութիւնը Իրաքում, որ որոշ մեկնաբաններ տարբեր առաջարկութիւններ են անում ներկայ կառավարութիւնը փոխարինելու նորով, որոնցից մէկն է՝ այն փոխարինել զօրաւոր մի մարդու (նոր Սատամ ձիւսէյնի)՝ հետ, որպէսզի երկրում խաղաղութիւն ստեղծուի, թէ այդ առաջարկներից ո՞րը կարող է իրականանալ, ժամանակը ցոյց կը տայ, իսկ Իրաքի ժողովրդին անյապաղ խաղաղութիւն է պէտք օղի ու ջրի նման:

Հայաստանին եւ հայերին առանձնապէս է հետաքրքրում Մերձաւոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձութիւնները, քանի որ նախ

Հայաստանը կից է այդ տարածաշրջանին և երկրորդ՝ այնտեղ ապրում են Մեծ Եղեռնից մագապուրծ ազատուած հայ ժողովրդի մասունքները, որոնք ակտիւօրէն մասնակցում են իրենց ապրած երկրների տնտեսական, քաղաքական, մշակութային եւ այլ ասպարէզների զարգացման գործընթացներին՝ մեծ յարգանք վայելելով նրանց իշխանութիւնների մօտ, ու չենք ցանկանալ, որ որեւէ հայ քիթն արիւնի այնտեղ կամ վերջինս ստիպուած լինի թողնելու տասնեակ տարիների ընթացքում շինած իր բոլոր և տեղաշարժ կատարի դէպի այլ՝ հայակուլ քրիստոնէայ երկրներ:

2. Մեր հոգսերի հոգալը նաեւ Հայաստանն է: Իւրաքանչիւր հայ, անկախ Հայաստանում տիրող իրավիճակից, անվտանգութիւնից ու անօրինակութիւնից, նուիրուած է հայրենիքին և իր ուժերի ներածի մի մասով (լիովին չվստահելով իշխանութիւնների տարած քաղաքականութեանը) օգնում է նրան: Թարմ օրինակը սոյն թուի՝ 2006 թ. Նոյեմբերի 23-ին Արցախի զարգացման նպատակով իրականացուած թեյեմարաթոնի արդիւնքն էր՝ 13.7 միլիոն դոլար:

Չնայած յարաբերական կայունութիւն է տիրում Հայաստանում, բայց իշխանաւորների եւ օլիգարխների անասձանափակ իրաւունքների արդիւնքում բռնատիրական արաքները յաջորդում են մէկը միւսին՝ ճնշումներ են գործադրում առանձին անհատների, անցանկալի կազմակերպութիւնների ու նրանց ղեկավարների, նոյնիսկ Արցախեան պատերազմի ակտիւ մասնակիցների նկատմամբ: Կեանքից զրկուած են բազմաթիւ անհատներ, որոնք զոհ են գնում անօրինակութեան, որովհետեւ Հայաստանում գոյութիւն ունեցող իրաւական դաշտը չի գործում: Իսկ ընդդիմութիւնը օգտուելով իշխանութեան սեղանի փշրանքներից դարձել է նրա կամակատարը: Ոչ իշխանութիւնն է մտածում ժողովրդի մասին, ո՛չ էլ ընդդիմութիւնը, որովհետեւ իրենց կուսակցական և անհատական շահերը չեն պահանջում այդ. եթէ մի երկրում կան հարիւրաւոր կուսակցութիւններ և նրանց նշանակալի մասի ղեկավարներից իւրաքանչիւրը ձգտի նախագահ դառնալ, ի՞նչ կարելի է սպասել այդպիսի երկրից...: Միւս կողմից, Հայաստանում որոշ դրածոյ ղեկավարներ անօրինակութիւններով, իրենց անձնական շահերի համար կատարում են յանցագործութիւններ՝ սպանութիւններ և այլ արարքներ, որոնց վերջը չի երեւում ու բացառուած չէ, որ խորհրդարանական ընտրութիւնների սեմին աւելի

թեժանան դրանք, քանի որ պատժող ձեռք չկայ...:

Իբր եղած կուսակցութիւնները քիչ էին, ժողովրդավարութիւն ստեղծելու պատրուակով, յանուն եսասիրութեան ու փառասիրութեան ստեղծուած են նորերը՝ «Բարգաւաճ Հայաստան», «Այլընտրանք», «Քաղաքացիական նախաձեռնութիւն» և այլն, որոնք բացի վնասից ոչ մի լաւ բան չեն խոստանում Հայաստանի քաղաքական կեանքում, ընդհակառակը թուլացնում են ընդդիմութիւնը յօգուտ իշխող կոալիցիոն կառավարութեան: Վերջինս գիտակցելով այդ, ջանք չի ինսպում մասնատելու եղած կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները իր աթոռն աւելի ամրապնդելու համար, այնպէս, որ ոչ մի լաւատեսական յոյս չկայ ընդդիմութեան միաւորման եւ նրա միացեալ գործունէութեան նկատմամբ:

Լուս Անճելոսում ազգային-հասարակական գործիչներս երկար տարիներ թուղթ մրտսելով երազում էինք ՀՀԿ-ի նման կազմակերպութիւն ստեղծելու համար, բայց երկու հանգամանք՝ կազմակերպողների որոշ մասի փառասիրութեան և նիւթական միջոցների չգոյութեան պատճառով չկարողացանք իրականացնել այդ: Այդպիսի մի փորձ կատարեցինք 1990-ական թուականներին Հայրենակցական միութիւնների միացեալ մարմնի (ՀՄՄՄ) վարչութիւնում, երբ ես վարչութեան փոխ-ատենապետն էի: Այսօր Արա Աբրահամեանը միլիոններ ծախսելով ստեղծել է այդ կառուցը, իսկ մենք մեր փառասիրութեան և անհատական շահերի գերդաստնով անմիաբան ենք դառնում այդ կազմակերպութեան հետ ու ձգտում ենք չեզոքացնել այն: Ահա այս ձեռով ենք աշխատում միասնութիւն ստեղծել, որ չենք կարողանում պահել մեր հայրենիքը, նրան մաս-մաս դարձնելով օտար երկրների, առաջին հերթին Ռուսաստանի սեփականութիւնը, դառնալով նրա կամակատարը: Պէտք է արթնանալ նինջից, պետական ճիշտ ռազմավարութիւն վարել և տէր կանգնել հայրենիքին, թէկուզ չարժանանալու համար մեր ապագայ սերունդի նզովքին:

3. Մեր փոքրիկ Հայաստանը շրջափակել են մեր վաղեմի թշնամի թուրքիան ու նորելուկ Ատրպէյճանը, որոնց մէջքին կանգնած է քեռի Սեմը: Որքանո՞վ է կարողանում հանգիստ չնչել հայրենիքը: ՀՀ-ի կառավարութեան Հայրենիքի ցեղապանութեան հարցը միջազգայնացնելը արդեօ՞ք նպատաւոր էր շրջափակումը վերացնելու համար,

Շարք էջ 19

Մեր յանախորդներուն և բարեկամներուն կը մաղթեմք բարեբեր տարի



ՅՈՎՍԷՓ ԿԱՆԻՄԵԱՆ
ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ
300 W. Glenoaks Blvd. Suite 100
Glendale, CA 91202



ԿԻՐԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՐԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 3 Դեկտեմբեր 2006ի երեկոցան ժամը 5ին սկսեալ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուց Արեւմտեան Թեմի առաջնորդարանի «Գալաթեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հալէպի Կիրիկեան վարժարաններու հիմնադրութեան 85-ամեակը, նախաձեռնութեամբ Կիրիկեան Կրթական Միութեան Կեդրոնական վարչութեան, բարձր հովանաւորութեամբ թեմիս բարեջան առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ նախագահութեամբ ծանօթ ազգային բարերարուհի Տիկին Աշխէն Փիլաւճեանի:

Գեղեցկօրէն զարդարուած էր սրահը եւ տպաւորիչ էր բեմահարթակը իր աւուր պատշաճի լուսավորմանով ու տօնական ծաղկեկոթոններով, ժամանակէ առաջ արդէն սկսան ժամանել Կիրիկեանի շրջանաւարտներն ու բարեկամները, նախասրահին մէջ քօթէյլի պահուած միջնորդը ջերմ էր, երկար տարիներ ետք դպրոցական



85-ամեակի կարկանդակի հատման արարողութիւնը: Նախագահուհին շրջապատուած շխմշանակիրներով որ գնահատագրեր ստացողներով կ'երգեն բարի տարեդարձ երգը:

կին Աշխէն Փիլաւճեանի կենսագրութիւնը, յայտագիրը, 85-ամեակի առիթով մեծարեալ վաստակաշատ կիրիկեանցիներու ցանկը, նուիրատուներու ցանկը, ինչպէս նաեւ ցանկը բոլոր այն կիրիկեանցիներուն, որոնք անցնող տարիներուն թացքին արժանացած են, իրենց ապրած շրջաններու մէջ, նախագահական կամ կաթողիկոսական սրբատառ կոնդակներու, գնահատագրերու եւ կամ շքանշաններու: Հայաստանի, Ամերիկայի եւ Կիրիկեանի քայլերգները կատարեց, ծանօթ արուեստագիտուհի Տիկին Անահիտ Ներսէսեան, դաշնամուրի ընկերակցութեամբ երաժշտագէտ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:

Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելոսի նորանշանակ գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, հանդիսութեան հովանաւոր Առաջնորդ Սրբազան Հայր Տ. Յովնան Արքեպս. Յովնանեան, նախագահուհի Տիկին Աշխէն Փիլաւճեան, Վաչէ Արք. Յովսէփեան, Գառնիկ Ա. Քհնյ. Հալլաճեան, կղերականներ, կազմակերպութեանց եւ մամուլի ներկայացուցիչներ եւ տարբեր շրջաններէ կիրիկեանցիներ:

Կիրիկեան Կրթական Միութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Տիար Վարդան Եաղսրգեան ողջունելէ ետք բոլորին ներկայութիւնը, բեմ հրաւիրեց օրուան հանդիսավար ծանօթ մտաւորական Տօթ. Փրոֆ. Հրայր Տէքմէճեան:

Փրոֆ. Տէքմէճեան երկրպագու իր բացման խօսքին մէջ դրուատեց

Կիրիկեանի 85-ամեակ կրթական հայրենասիրական ուղին, բարձր գնահատեց անոր 85-ամեակ կրթական վաստակը, մեծ յարգանքով արտայայտուեցաւ անոր հիմնադիրներու, տնօրէններու, ուսուցիչներու եւ բոլոր աշխատողներուն մասին եւ պատմեց յիշարժան դրուագներ Կիրիկեան դպրոցի օրերէն:

Խաչիկ Թաշճեան ասմունքեց Ասատուր Կիւզէլեանի Կիրիկեանին նուիրուած բանաստեղծութիւնը «Այսպէս հրաշք ով է տեսեր... Իմ Կիրիկեան...»:

Հանդիսավարը հակիրճ կենսագրական եւ հասարակական գործունէութեան ծանօթացումէն ետք բեմ հրաւիրեց օրուան բանախօս հասարակական գործիչ Տիար Ասատուր Կիւզէլեանը:

Տիար Կիւզէլեան սրտառու էր իմաստալից բանախօսութեամբ մը նկարագրեց Կիրիկեանի հիմնադրութեան ժամանակաշրջանի քաղաքական ու ազգային իրավիճակը ու Կիրիկեանի մեզի կտակած հոգեւոր ժառանգութեան ուղին:

Ան խօսելով Հայ ժողովուրդի ջարդէն ճողոպրած մնացորդացիին եւ Կիրիկեանի 1921 թուականին հիմնադրութեան մասին ըսաւ.

On Saturday and Sunday nights, French organizers treated the international gathering of guests to two exciting musical events that underscored the organization's commitment to cultural excellence. During Saturday night's gala at the Grand Hotel Intercontinental, AGBU showcased the finalists of the inaugural Sayat Nova music competition, which sought out the most gifted young composers demonstrating an understanding and appreciation of the Armenian musical heritage. Juried by world-renowned composers and musicians, both Armenian and non-Armenian, the contest attracted entrants from France, Armenia, Argentina, Italy and the United States.

AGBU Board Member Aris Atamian introduced the evening's program and was joined by President of the Jury, Marie-Madeleine Krynen, to present the awards to the winning composers, along with a bursary to help support their growing interest in Armenian music. 2006 Sayat Nova award winners are Arthur Akshelyan of Armenia (first prize) for his composition "Pray," Grégoire Lorieux of France (second prize) for his "Mémoire Pleine Étoile," and Hernán Dario Palmieri of Argentina (third prize) for his "Suite Arménienne."

Guests were treated to a special performance of Akshelyan's winning composition and received a CD in their program booklet, which contained a recording of all three award-winning songs.

Sunday night's concert at Théâtre des Champs-Élysées—one of the city's

leading venues for classical music— attracted an audience of 1,200, which was a vibrant mix of the city's classical aficionados and AGBU members. Organized by AGBU France District, with the creative input of pianist Vahan Mardirossian, the program featured compositions from various European composers, including Arno Babadjanian, Claude Debussy, Manuel De Falla, Edward Grieg, Aram Khachaturian, Edward Mirzoyan, and Piotr Ilitch Tchaïkovski, and the debut of the Ensemble Maestria at Champs-Élysées. The evening's performance showcased four emerging soloists of Armenian descent who have been garnering a growing international reputation for their musical mastery: violinist Jean-Marc Phillips-Varjabédian, cellist Xavier Phillips, pianist Vahan Mardirossian and harpist Iris Torossian.

A PALATIAL GALA

Under the patronage of French President Jacques Chirac, Monday night's black-tie gala at the French royal palace of Versailles was one of the pinnacle celebrations that marked the first century of the world's foremost Armenian non-profit organization.

Armenian and French dignitaries, political, business, cultural and community leaders from around the world were among the over 600 guests that joined His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and His Excellency Vartan Oskanian, Foreign Minister of the Republic of Armenia, for the event hosted by AGBU.

Among the distinguished guests were French Armenian musical legend, Charles Aznavour; Patrick Devedjian, former French cabinet minister; François Rochebloine, deputy of the French National Assembly and president of the "France-Arménie" friendship group; René Rouquet, deputy of the French National Assembly and Mayor of Alfortville; André Santini, deputy of the French National Assembly, Mayor of Issy-les-Moulineaux and former French cabinet minister; Jacques Toubon, former French cabinet minister; Nelly Tardivier-Henrot, Commissioner General for the Year of Armenia in France; His Excellency Edward Nalbandian, Ambassador of the Republic of Armenia to France, Israel and the Vatican; His Excellency Viguén Tchitetchian, Ambassador of the Republic of Armenia to the European Union; Her Excellency Sylvie Fadlallah, Ambassador of Lebanon to France; Her Excellency Dina Kavar, Ambassador of Jordan to France; His Excellence Archbishop Kude Nakashian, Primate of Paris and the Pontifical Legate of Western Europe; Bishop Norvan Zakarian of Lyon; Alexis Govciyan, President of the CCAF (Comité de coordination des associations arméniennes de France); and a vast cadre of AGBU benefactors, donors and members from 17 nations.

Laurent Bili, Diplomatic Advisor of French President Jacques Chirac, delivered a special Presidential message on this important occasion applauding the devotion of so many AGBU members to an organization that continues to grow and help more and more individuals.



VREJ PASTRY

1074 N. Allen
Pasadena
(626)

1791 E. Route 66
Glendora
(626)

797-2331 914-1940

WWW.VREJPASTRY.NET



EUROPEAN
& MEDITERRANEAN

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ
ՁԵՐ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՏՕՆԱԽՄԲՈՒՄԸ
VREJ PASTRY ԱՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԱՅՅԵԼԵՑԷ՛Ք ՄԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՄԷԿԸ
ՁԵՐ ԳՈՀԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎ ՁԵՌՔԵՐՈՒ ՄԷՋ Է**

COMING SOON

TO GRANADA HILLS

COME AND TASTE
OUR DELICIOUS PASTRIES

11148 BALBOA BLVD.
GRANADA HILLS, CA

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ

ՏԵՐ ԶԱԻԻՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Հինի եւ նորի միջեւ եղած տարբերութիւնը փորձառական է, որուն միջոցաւ մեր անցեալի յուսահաբուծիչները ի նորոյ կը կենսաւորուին նորանոր ծրագրումներով: Նորը միշտ եւ բնականօրէն ըզձալի է, որոնելի է, եւ յաճախ գտանելի՝ եթէ արժանի ենք անոր, պայծառութեամբ ան ըլլալ չափանիշը բարիին ու գեղեցիկին: Հինը անցեալ ըլլալէ աւելի, է նաեւ շինիչ եւ վաւերական, որ քան ատեն որ հոն կը մնան որպէս ուսանելի յուշ մեր իսկական իրագործումներն ու սխալները, եւ կամ չիրականացած երազները: Ներկան, եթէ ուզենք գերազանցել, անցեալը հարկ է վկայակոչել զայն կերտելու համար:

Յիսուսի Ս. Ծննդեան աւետիսը միշտ բախտակից է եւ սրբացուցիչ Նոր Տարին: Յարակցութիւնը երկուքին՝ խորապէս իմաստալից է, եթէ աշխարհի հոգերն ու անարդարութիւնները չեղծանեն զայն: Աստուածաբար օրէնքին ու մարդկային երախտագիտութեան աստիճանները հակոտնեայ պէտք է ընթանան եթէ աշխարհն ու Քրիստոնէութիւնը Նոր Տարին դիմաւորեն Ս. Ծննդեան խաղաղաբեր աւետիսով: Ամէն ինչ կախում ունի մարդոց նախընտրութիւններէն ու չափանիշներէն, եւ ոչ թէ անպատասխանատու եւ սանձարձակ սահմանազանցութիւններէ որոնք միայն փորձութեան կ'առաջնորդեն մարդիկ: Որքան ճիշդ ախտանշանն է այս ներկայի կացութեան, որուն ականատեսն ենք բոլորս ամէն օր, քաջ գիտնալով որ եթէ տարբերութիւն մը պիտի ներգործէ անկէ ներս, այն միայն կրնայ գալ Ս. Ծննդեան աւետիսով:

Յիսուսի Ծնունդը Բեթղեհէ-մի մէջ անկրկնելի անկրկնադարձ մը եղաւ պատմութեան մէջ, Աստուծոյ մարդանալովը, որուն շնորհիւ մարդիկ ոչ միայն ճանչցան զԱստուած երկնքի մէջ ըստ հասանդ սովորութեան, այլ մանաւանդ տեսան զինք երկրի վրայ որպէս իրագործող Աստուած՝ մարդոց մէջ ու անոնց աչքին առջեւ: Այս պատճառաւ է որ Հայոց Եկեղեցին միայն Ս. Ծնունդը չի կոչեր զայն, այլ նաեւ Աստուածայայտնութիւն, որ իր հետ բերաւ խաղաղութեան աւետիսը ի նորոյ, Եսայի մարգարէի տեսածին համաձայն, Ս. Ծնունդէն դարեր առաջ, թէ «Իր անունը մեծ պիտի ըլլար, պիտի ըլլար Ան Բարձրալիւն Որդին եւ խաղաղութեան իշխանը»:

Եսայի մարգարէ աւելին եւս կանխատեսեց, յայտարարելով Յի-

սուսի առաքելութիւնը որ պիտի կաշանար բառնալու ազգերու եւ ժողովուրդներու ծանր բեռները, զորս ինք «Իր ուսերուն վրայ» պիտի կրէր. Բոլոր ազգեր իրեն պիտի վստահէին ոչ անպայման իբրեւ քաղաքական եւ աշխարհագրական միաւորներ, այլ իսկական իմաստով որպէս տիեզերական ազգ, որ իր սուրբ եկեղեցիով եւ Ս. Հոգոյ գորութեամբ բաժինը պիտի ըլլար Քրիստոսի բեռան զոր ինք պիտի կրէր ինչպէս կրեց խաչը զոր լուաց իր սուրբ արիւնով:

Նոր Տարուան առիթով մեր եկեղեցին «տաղանդներու» առակը կը կարգայ որ դաս մը կուտայ մարդկութեան, ինչպէս տուեր էր քսան դարեր առաջ: Ունեցածը քուկը չէ, այլ տրուած է քեզի, զայն պատուաբեր կերպով շահարկելու համար: Ազնուական մը կար, կ'ըսէ Յիսուս որ հեռաւոր երկիր երթալով թագ պիտի ստանար ու վերադառնար որպէս թագաւոր: Քաղաքացիները զինք չէին սիրեր, ու այս արդէն կը մատնէր թագաւորին ով ըլլալը՝ Յիսուս ինքը: Մեկնելէն առաջ իր ծառաներուն հաւասար դրամ տալով պատուիրեր էր զանոնք շահարկել ու վերադարձին տոկոսներով վերադարձնել:

Տրուածը դրամ էր, կամ լաւ եւս տաղանդ: Վերադարձին թագաւորը հաշիւ պահանջեց ամէն մէկէն: Մին հպարտութեամբ տասնապատիկ վերադարձուց իրեն վստահուածը, միւսը՝ հնգապատիկ, եւ երրորդը ապահով կերպով վերադարձուց ինչ որ տրուած էր իրեն, առանց տոկոսի: Առաջինները վարձատրուեցան, ու վերջինը պատժուեցաւ:

Տարեփակէն առաջ բծախնդիր կերպով կը կատարենք մեր հաշուեփակը, տալով անպայման մեր տուրքերն ու պարտքերը, սակայն կը ձախողինք յաճախ տալու մեր բարոյական եւ հոգեւոր կեանքի հաշիւը: Եղա՞նք շահաբեր մեր բարի կենցաղով ու մեզի տրուած շնորհները արժեցնելով: Այս է իսկական հարցումը: Մեզի վստահուած տաղանդները շահարկեցի՞նք, օգտակար եղա՞նք մեր ազգին, եկեղեցիին եւ համայնքին, տալէ ետք մեր լաւագոյնը մեր ընտանիքին:

Աշխարհ բռնկած է այսօր, վասնզի Աստուծոյ ներգործութիւնը բացակայ է մարդոց եւ քաղաքագէտներու ընտրութեամբն ու կամքով: Նոր Տարին թող վերանորոգէ մարդը, համայնքներն ու ազգերը,

Շար.բ էջ 27

ՏԻԵՂԵՐՔԻ ՓԱՌՔԸ ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻԻԿԻՐԵԱՆ

Վերոգրեալ խորիմաստ խօսքը, մեր մտածումին ու կեանքին կը բերէ Միածին Որդիին մարմնացումը երկրի վրայ:

Կը մարդանայ Աստուածորդին, որ մենք իրեն հետ աստուածանանք: Երկնային Այցելուն կը մատուցանէ բոլոր անհրաժեշտ պայմանները մեր վերածնունդին համար:

Ծնունդը եւ վերածնունդը, անմեկնելի ու անբացատրելի խորհրդաւորութիւն մըն է: Անկարելի է, որ բանաւոր արարածը, իր տկար ու անզոր մտածողութեամբ՝ բողբոջած էրկնային այս աննախադէպ երեւոյթին խորհրդասքող ծալքերը:

Չարմանալի չէ՞, ի՞նչպէս աներեւոյթ բարձունքներէն Աստուածութիւն մը կը խոնարհի եւ նեղ ու անշուք մտաւորին մէջ աստուածային կեանք մը կը ծնի:

Սրբազան նպատակը ծննդեան զարմանահրաշ խորհուրդին այն է, որ Աստուածորդուն ծնունդով երկրի վրայ, մարդը կը բարձրանայ երկինք եւ կ'ըլլայ ԵՐԿՆԱՔԱՔԱՔԱՔԱՅԻ:

Այս խորագոյն եւ մեծագոյն նշանակութիւնը կը յատկանշէ Յիսուսի ծնունդը, որ կ'ազատագրէ մարդը մեղքերու բռնատիրութենէն եւ կուտայ անոր իր անկաշկանդ ազատութիւնը եւ փրկութիւնը:

Ուրեմն, Փառաց թագաւորին ծնունդը կը նշանակէ մարդկային հասարակութեան համար ՆՈՐ ԿԵԱՆՔԻ մը ՍԿԻԶԲԸ, նոր թոնականով, հին եւ նոր աշխարհներու անջատումով:

Մեղքին շղթաները կը բեկանուին, ստրուկը կ'ազատագրուի դարաւոր կապանքներէն եւ վերածնունդով, կը կոչուի Աստուծոյ որդեգրութեան:

Ուստի, Երկնային Երախային ծնունդը աշխարհի բոլոր մարդոց համար կը նշանակէ նոր կեանքի մը արշալոյսը: Երկրորդ ծնունդ մը, որ պիտի ըլլայ հոգեւոր ու յաւիտենական:

Ի վերուստ ծնունդ մը, որ ոչ մէկ աղերս ու շփում ունի երկրի կապանքներուն հետ: Նոր մարդը իր ճակատագրին ուղղութիւնը եւ ներշնչումը պիտի առնէ երկնքէն:

Այսպիսի հոգեւոր վերածնունդ մը՝ մարդը կը դարձնէ ճշմարիտ քրիստոնեայ մը, առանց կառչելու հողին եւ ճահճանալու ցեխաջրերու մէջ:

Երկինքը կ'ըլլայ իր հոգիին սլացքներուն թիրախը եւ իր ազատաշունչ բաղձանքներուն նշանակէ-

տը: Կը քալէ ու կը շնչէ երկրի վրայ, բայց աչքերը ուղղած դէպի աստուածային բարձունքները, ուրկէ կը շնորհուին իր հոգեւոր անդառուութեան կարիքները:

Աներեկոյ կեանքի մը ձգտումը կը դարձնէ իր հոգին անմահ ու յաւերժալոյս եւ բարոյապէս բիւրեղացած՝ իր մէջ բրգացած մեղքին արատներէն:

Երկրի անցողական քաղաքացիութենէն հրաժարած, կ'ընդունի երկնաքաղաքացիութեան գերագոյն շնորհը Տիեզերակային Հովանաւորութեան ներքեւ:

Ասոնք գերբնական եւ բնականացական անհերքելի ճշմարտութիւններ են, որոնք անհաւատին առասպելական կը թուին:

Այն վայրկեանէն սկսեալ, որ մարդկային սահմանափակ կարողութիւնները ընդելուզեցան Աստուածային ամենակարողութեան հետ, մարդը մեղքին մահացու փորձութիւններու դէմ դիւցազնացաւ եւ դարձաւ անպարտելի ու յաղթական Հերքիւլէս մը, որուն հաւատքին դիմաց անբառնալի դժուարութիւնները հարթուեցան:

Քրիստոսի սէրը, իր սիրոյ նոր Պատգամը, իր մէջ հրաշագործեց ու պողպատեց իր կամքը: Այս անառիկ բերդին առջեւ խորտակուեցան սեւ ուժերու յարձակումները:

Այս նոր Հաւատքը, որ յաւերժօրէն կեանքի կը կոչէ քրիստոնեայ հաւատացեալը, պարզ պարտականութիւն մը չէ, անցողական բնոյթով: Հրամայական պահանջն է հոգիին, բոլորովին անկաշկանդ մեղքին շփումներէն, որ մարդուն գոյութիւնը կ'իմաստաւորէ ու կ'արժեւորէ մեղքին դէմ իր շղթայագերծած անվհատ պայքարով:

Կ'ըսեն, թէ ծնունդը մանուկներուն տօնն է: Մեծերուն տօնը չէ: Կ'ընդունինք որ այդպէս է: Ծնունդը միայն ու միայն մանկահասակներուն ցնծութեան օրն է, այն իրողութեամբ, որ Յիսուս իր կարճատեւ ամբողջ կեանքը մանուկներու մտերմութեան մէջ անցուց: Ծնունդը կը տօնեն անոնք, որ մանուկի մը պարզութիւնը եւ անմեղութիւնը կը բարացուցեն: Առաջին անգամ երկնային երեխային ծնունդը տաղերգեցին հրեշտակները՝ ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ:

Այն ժամանակէն մինչեւ այսօր՝ աստղերու թիւ կը կազմեն տաղերգուները: Մոգերուն ճանապարհը

Շար.բ էջ 27

Յացողութեան լաւագոյն մաղթանքներով կը շնորհաւորենք Նոր Տարին եւ Ս. Ծնունդը մեր բոլոր բարեկամներուն



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԿԱՐՊԻՍ ԵՒ ՇԱՔԷ ՊԱԼԸԳՃԵԱՆ



**ԼԱՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ԿԼԵՄԵՆՏԵՂ, ԳԱՄԻՓՈՐՆԻԱ
(818) 500-9997**

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան բարեբաստիկ
զոյգ տօներուն առիթով, ջերմագին
շնորհակալութիւններ եւ լաւագոյն մաղթանքներ
կը յայտնէ իր բոլոր հովանաւորներուն,
նուիրատուներուն, իր ձեռնարկները
ֆաջալերողներուն, բոլոր բարեկամներուն եւ
համայն Հայութեան, մաղթելով երջանիկ ու
բարեբեր տարի մը:

LARK MUSIAL SOCIETY
(818) 500-9997

*On this Christmas and New Year
we would like to thank all our sponsors,
supporters and wish them joy and happiness
for the new year.*



ԲԵԹՈՂԵՆՄԻ Ս. ԾՆՈՒՆԴԸ

(ՅՈՒՆՈՒԱՐ 19, ԸՍՏ ԸԻՆ ՏՈՄԱՐԻ)

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼԲՈՆԵԱՆ

Տարբեր է Բեթղեհեմի Ս. գիշերուան՝ «մեր Ս. Ծնունդը»: Մական ի՞նչ կայ տարբեր... մանաւանդ երբ աշխարհ տօնած ու վերջացուցած կ'ըլլայ արդէն Ս. Ծնունդը եւ Նոր Տարին: Յետոյ, չէ՞ որ նոյն Քրիստոսի Ս. Ծնունդը կը տօնակատարենք, նոյն շարականները ու աղօթքները կ'երգենք, նոյն ջրօրհանքի արարողութիւնը կը կատարենք ամենուրեք:

Այո՛, տարբեր, տարբեր համ կը ունի «մեր» Ս. Ծնունդի տօնը, հոգեւորոգ ու հոգեւոր քաղցրութեամբ մը լեցուն, տարբեր միւս բոլոր Ծնունդներէն:

Ընկալելով սովորութիւն է, որ Յունուար 18-ի առաւօտուն, երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ամբողջ աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, յատուկ պատերով մեկնին Բեթղեհեմ, դիմաւորելու համար Ս. Յակոբայ Միաբանութիւնն ու Պատրիարքը՝ ապա մանակից դառնան Ս. Ծնունդեան արարողութիւններուն:

Ուսումնական տարեշրջանի կիսամեայ «ծանր» քննութիւններէն ետք, աշակերտութեան համար բեթղեհեմեան արարողութիւնները, ապա վանքի տանիքի հաճելի ու յիշատակելի պահերը ու մանաւանդ դէպի Հոյունաց Դաշտ այցելութիւնը, հոգեկան մեծ բաւարարութիւն կու տային այն օրերուն, յատկապէս տեղատարափ անձրեւներէն ետք, երբ կապոյտ երկիրքը կը ժպտէր ուխտաւոր դարձած աշակերտութեան եւ ժողովուրդին:

Վարժարանի տեսուչ՝ Տ. Կիւրեղ Վրդ. ի հրահանգով տղոց երգեցի խումբը ոչ միայն պարտաւոր էր շապիկ հագնիլ ժառանգաւոր սաներուն հետ, այլ հարկ էր որ Բեթղեհեմ գիշերէր միաբանութեան հետ, կէս գիշերին Ս. Ծնունդեան Այրին մէջ փառաւորելու Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը, «Փառք Ի Բարձունս» եւ Ծնունդեան հոգեգմայլ շարականները երգելով: Խստապահանջ էր հայր Կիւրեղ: Եկեղեցիէն փախուստ տուողին վարքը՝ այդ ամիս կը հաւասարէր գերոջի:

Մենք անհամբեր կը սպասէինք բեթղեհեմեան այդ հոգեթով օրուան:

Յունուար 18ի առաւօտուն, մինչ Ս. Յակոբայ վանքի զանգերը կ'աւետէին Ս. Ծնունդեան եւ Աստուածայայտութեան տօնը, աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, երէտադէմի Դաւթի դուռէն պատերով կը մեկնէին Բեթղեհեմ:

Վախժանական թուականներուն, երբ Յորդանանի հաշիմական թագաւորութիւնը կ'իշխէր Ս. Քաղաքին վրայ, յատուկ արտօնութեամբ միայն, Եաֆայէն, Հայֆայէն ու Նազարէթէն հայ ուխտաւորներ

կու գային, որոնք Բեթղեհեմի Ս. Ծնունդեան տաճարին մէջ երկիւղածութեամբ մանակից կ'ըլլային երկօրեայ տօնակատարութեան, ապա տուն կը մեկնէին:

Երուսաղէմի Հայոց դարաւոր հաստատութիւնը, որ Ս. Յակոբայ տօնէն ետք, շքեղօրէն կը զգենու յատուկ տօնական երեւոյթ, յատկապէս Դաւթի Մարգարէին եւ Ս. Յակոբայ Տեառնեղբոր, Ս. Ստեփանոսի եւ մանաւանդ Որդիք Որոտման տօներուն առթիւ, առաւել արտակարգ երեւոյթ մը կը զգենու Սուրբ Ծնունդեան տօնին առիթով:

Վանքին դրան առջեւ, տասնեակներով ինքնաշարժեր շարուած, եռուզեր մը կը ստեղծեն: Բոլորը կը սպասեն հայոց միաբանութիւնն ու հաւատացեալ ժողովուրդը ուղեւորելու Բեթղեհեմ: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամը 9:30ին Պատրիարք հայրը, վանքի աւագ Թարգման եւ գաւազանակիր վարդապետներու եւ բարապաններու (ղաւաս) առաջնորդութեամբ, իջնալով Պատրիարքարանէն, միաբանութեան եւ ժողովուրդին հետ միասին, ինքնաշարժերու երկար թափօրով մը կ'ուղեւորուի Բեթղեհեմ:

Ճամբան, Բեթղեհեմ քաղաքի մօտ, հայոց միաբանութիւնը կանգ կ'առնէ Յունաց Մար Իլիաս (Ս. Եղիա) վանքին առջեւ, ուր կը հիւրասիրուի վանքի վարդապետներուն կողմէ եւ ուր Պատրիարք Հայրը դիմաւորելու եկած կ'ըլլան Բեթղեհեմի եւ շրջակայ գիւղաքաղաքներու՝ Պէյթ Ճէլէի եւ Պէյթ Սահուրի քաղաքապետերը:

Քաղաքավարական այս հիւրասիրութեանէն ետք, ինքնաշարժերու երկար թափօրը կը շարունակէ իր ճամբան դէպի Բեթղեհեմ, առաջնորդութեամբ հինգ ձիաւոր դրօշակակիր ոստիկաններու, որոնք որպէս պատուոյ պահակներ, տարբեր վեհօթիւն մը տալով թափօրին, կը շրջապատեն հայոց Պատրիարքին ինքնաշարժը ու կ'առաջնորդեն դէպի Բեթղեհեմի Ս. Ծնունդեան հրապարակ: Այստեղ՝ հրապարակին երկու կողմերը շարուած կ'ըլլան վանքի ժառանգաւոր սաները, Թարգմանչաց վարժարանի երկուսն աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, որոնք անհամբեր կը սպասեն միաբանութեան ժամանումին, սկսելու համար տօնակատարումը Ս. Ծնունդեան:

Մինչ՝ Բեթղեհեմ քաղաքի մուտքին, հայ արիներ եւ օտար սկառուական խումբեր նուազով ու սկառուական տողանքով, կը դիմաւորեն հայոց միաբանութիւնը, Բեթղեհեմի հայոց վանքի զանգակները կ'աւետեն

հայոց Ս. Ծնունդի տօնակատարումը, Դաւթի այս հին քաղաքին մէջ:

Ջանգալներու ղողանջին հետ, յանկարծ կը հնչէ, «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» Սուրբ Ծնունդեան շարականը, ժառանգաւոր սաներու ու հայոց միաբանութեան կողմէ, որոնք երգելով կ'անցնին Թարգմանչաց Վարժարանի աշակերտներու եւ հաւատացեալ ժողովուրդին մէջէն:

Հայոց Պատրիարքը, շրջապատուած Բեթղեհեմ քաղաքի եւ շրջակայքի պետական եւ զինուորական կառավարիչներով, ինչպէս նաեւ հայ համայնքի ազգայիններով, թափօրին հետ կը բարձրանայ Հայոց Վանք, ապա կարճ աղօթքէ մը ետք, վանքի տեսչարանին մէջ կ'ընդունի պետական եւ ազգային հիւրերու բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները հայոց Ս. Ծնունդի տօնին առիթով:

Կէսօրուայ դադարէն ետք, ժամը 2:30ին, հայոց զանգակները կրկին կը ղողանջեն, ու այս անգամ Պատրիարք Ս. Հայրը, ի գլուխ միաբանութեան, «Հրաշափառով» հանդիսաւոր մուտք կը գործէ Դ. դարուն Հռոմէական պալլիք տնով կառուցուած Ս. Ծնունդեան տաճարէն ներս, ու անցնելով եկեղեցւոյ սիւնազարդ գաւիթէն, տաճարի հիւսիսային թեւէն կ'իջնէ Ս. Այրը, ուր երկրպագութեամբ կը կատարէ իր ուխտի աղօթքը:

Ապա հայոց բաժնին մէջ կը կատարուի երեկոյեան ժամերգութիւն, իսկ Ս. Այրին մէջ կը մատուցուի ձրագալլոյցի Ս. Պատարագը: Ծնունդեան նախատօնակի արարողութեանէն ետք, միաբանութիւնը թափօր կազմած եւ Ս. Ծնունդեան շարականներ երգելով, կը բարձրանայ հայոց վանք: Այստեղ բակի կամարին տակ կ'ընթերցուի Ս. Ծնունդեան աւետարանը ու կ'երգուի «Փառք Ի բարձունս»-ի հոգեգմայլ աղօթքը: Այսպիսով վերջ կը գտնէ արարողութեան առաջին բաժինը:

Մինչ՝ ժողովուրդէն մաս մը կ'իջեանին վանքի իրենց բարեկամներուն մօտ, ուրիշներ բուրդէ ծածակիցներու տակ... կը հանգչին եկեղեցւոյ կամարներուն տակ, սպասելով գիշերային հոգեպարար արարողութեան: Երիտասարդ տղաք, վանքի մուտքի անցքի սենեակին մէջ, կրակարանի մը շուրջ հաւաքուած, Սուրբ Ծնունդը կը տօնեն երգով, նուագով ու կերուխումով: Քիչ մը անդին, վանքի ներքնայարկի կամարներուն տակ, հսկայ կաթսաներու մէջ, վանքի խոհարարները իրենց օգնականներով կը պատրաստեն աւանդական խաշլամայի նախաճաշը, միաբանութեան եւ ամ-



բողջ ժողովուրդին համար:

Գիշերուայ ժամը տասին, վանքի զանգակները կրկին կը ղողանջեն:

Տաճարի Հայոց բաժնին մէջ, հաւատացեալներու հոծ բազմութիւն մը աղօթքով ու խոկումով կը հետեւի արարողութեան:

Ժամը 11:30ին կը սկսի հոգեգրաւ այն պահը երբ միաբանութիւնը թափօր կազմած Պատրիարք Հօր գլխաւորութեամբ կ'իջնէ Ս. Այր, կէս գիշերային արարողութեան, որ կը ձայնասփռուի ուստիոկայանէն:

Այստեղ Պատրիարք Հայրը Ս. Այրի խորանին առջեւ կանգնած, կ'ընթեւնու Աւետարանը, ապա միաբանութիւնը ու ժառանգաւորք կ'երգեն «Փառք Ի բարձունս» եւ այլ Ծնունդեան շարականներ: Ս. Ծնունդեան Այրէն, Պատրիարք Հայրը նաեւ կու տայ իր պատգամը տարասփիւռ հայութեան: Ս. Այրի արարողութեան ներկայ կ'ըլլան նաեւ երուսաղէմի, Բեթղեհեմի եւ այլ շրջաններու քաղաքապետեր, բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնք ընդհանրապէս տեղ կը գրաւեն Պատրիարք Հօր մօտ հարաւային աստիճաններուն առջեւ:

Միժամեայ այս արարողութեանէն ետք, առաւօտեան ժամը 1:30ին, տաճարի հիւսիսային թեւի՝ հայոց բաժնին մէջ կը մատուցուի երկրորդ Ս. Պատարագը, մինչ Պատրիարք Հայրը անգամ մը եւս ընդունելէ ետք պետական մարդոց շնորանքները, կը վերադառնայ երուսաղէմ:

Ս. Պատարագի աւարտին՝ լուսարարապետ սրբազանի նախագահութեամբ կը կատարուի «Ջրօրհանէք»-ի նոյնքան հոգեգրաւ արարողութիւնը, որուն անմիջապէս կը յաջորդէ երրորդ Ս. Պատարագի մատուցումը, Ս. Այրին մէջ:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՄԻՆԱՍ ԵՒ ՍՈՆԱ ՄԱԼՃԵԱՆ
Happy New Year

ԲԵԹՂԵՐԵՄԻ Ա. ԾՆՈՒՆԴԸ

ՏԻԵՂԵՐՔԻ ՓԱՌՔԸ

Ս. Ծննդեան արարողութիւնները վերջ կը գտնեն առաւօտեան ժամը 6ին: Մինչ՝ վանքի գանգակները կրկին կ'աւետեն Ս. Ծնունդի տօնակատարումը հայոց, միաբանութիւնը թափօր կազմած, «Խորհուրդ մեծ ու սքանչելի» շարականի երգեցողութեամբ, կը բարձրանայ հայոց վանք, ուր բակի կամարին տակ, կրկին կ'ընթերցուի Աւետարանը ու կ'երգուի «Փառք ի բարձունս»ը:

Ապա՝ վանքի ճաշարահին մէջ, միաբանութիւնն ու ամբողջ ժողովուրդը կը հիւրասիրուին վանքի աւանդական խաչլամայով:

Առաւօտեան ժամը 8ին, միաբանութիւն ու հաւատացեալ ժողովուրդը կը վերադառնան Երուսաղէմի հայոց վանքը: Այստեղ եւս միաբանութիւնն ու ժողովուրդը «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականի երգեցողութեամբ, կը բարձրանան Պատրիարքարան: Ս. Ծննդեան Աւետարանի փոխանցումով ու Պատարիարք Հօր պահպանիչով վերջ կը գտնէ Ս. Ծննդեան հոգեպարար եր-

կօրեայ արարողութիւնը: Ապա ժողովուրդը կկարգով կը մօտենայ Պատրիարք Հօր Ս. Աջը համբուրելու, ու շնորհաւորելու Ս. Ծնունդը:

Աւանդութիւն դարձած սովորութեամբ, Պատրիարք Հայրը օրհնուած նշխար ու նարինջ կը բաժնէ ժողովուրդին, ըսելով «Ձեզ եւ մեզ մեծ Աւետիս, Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Ծանօթ. Լոս Անճելոսի մէջ, նախկին երուսաղիմահայեր կը պահեն Ս. Ծննդեան բեթղեհէմեան կէս գիշերային արարողութիւններու աւանդութիւնը: Այս տարի, Շաբաթ, Յունուար 13, 2007ին, (Հին տոմար) գիշերուան ժամը 11էն սկսեալ, Հոլովուտի Ս. Յովհաննու Կարապետ Մայր Տաճարին մէջ, պիտի կատարուի Ս. Ծննդեան կէս գիշերային հոգեպարար արարողութիւնը, ապա եկեղեցուց կից սրահին մէջ պիտի սպասարկուի նախաճաշ:

Սիրով հրաւիրուած է հաւատացեալ ժողովուրդը, հոգեզմայլ արարողութեան:

Շաբաթ օրը 25-էն լուսաւորող բազմաճառագայթ Աստղին երեւումը՝ երկու հազար տարիէ ի վեր կը ներշնչէ Քրիստոնեայ Աշխարհին մեծանուն բանաստեղծները, նկարիչները, քանդակագործները, արձանագործները սիրագործութիւններով:

Այսօր եւս, հնագոյն անցեալի ոգեւորութեամբ միլիոնաւոր հաւատացեալներ կը տողանցեն Յիսուսի Մտերին առջեւէն, ոչ թէ հասարակ երեխայ մը տեսնելու օրօրոցին մէջ, այլ՝ Աստուծոյ Միածին Որդուց փառաւորեալ ծնունդը:

Մանուկ Յիսուսի յայտնութիւնը երկրի վրայ, աննախադէպ ու զարմանահրաշ երեւույթ մըն է եւ խորհրդաւորութիւն մը, որ համաշխարհային պատմութեան մեջ պիտի ճառագայթէ, որպէս անմեկնելի ու անբացատրելի իՐԱՌԻՅՊ:

Ներկայ մզկոտած բարբերու մէջ, ուր մեղքին բռնատիրութիւնը կ'իշխէ մարդուն եւ մարդկութեան ճակատագրին վրայ՝ Հերովդէսի ոճրախանձ ատելութեամբ, կը մրճահարուին անխնայ այն բոլոր սրբագործուած արժէքները, որոնք ճշմարտութիւնը կը բացայայտեն երկնային շողարձակումով:

»Փոքրամանութիւն կը կազմեն անկեղծ աղօթողները, անսուտ քարոզիչները, ճշմարիտ քրիստոնեաները, որոնք բոցավառ հաւատքով կը պայքարին անխախտ պահել առաքինութեան ոսկեծոյլ գահը իր պատուանդանին վրայ:

Այս վարկ ու որակ ճառագայթող փոքրամանութիւնն է, որ քաջակորով կը մաքառի անբարիշտ ու ժերու դէմ եւ կ'առաջնորդէ Տիեզերնային Բանաւոր Հօտը երանութեան ու անմահութեան սահմանները:

Մեր ետեւ կը թողունք մեղքերով ծանրաբեռնուած հանգուցեալ տարուան աշխարհածաւալ դազաղը, կը յուղարկալորենք զայն, առանց ծաղիկներու, առանց աղօթքներու, առանց սգաւորներու:

Դազաղ մը, իր մէջ կ'ամփոփէ, ոչ թէ միայն բարեհոգի ննջեցեալներու աւետարանաշունչ մարմինները, այլ նզովեալ դիակները մարդկային կեանքը խոշտանքող՝ Աստուծոյ գոյութիւնը ժխտող շարագործներու:

Գողգոթայի Անմեղ Խաչեալը կտակեց բոլոր ժամանակներու հետեւորդներուն իր սէրը, իր յարութիւնը, իր աստուածութեան ծաղկալէտ ճանապարհը:

Երկրի վրայ՝ մեր կեանքին առջեւ կը բացուին բիւրաւոր ճամբաներ, որոնք անաբարիշտներու կողմէ կը նկատուին շիտակ ու ճշմարիտ: Մինչդեռ՝ իրականութիւնը կը փաստէ հակառակը: Զանոնք կը նկատէ վտանգալից ու մահացու:

Անհաւատները, գիտնալով հանդերձ, որ այդ ճամբաները գեհնի դարպասները կը բանան իրենց նախասիրութիւններուն առջեւ, կը նախընտրեն քալել այդ խավարակուռ արահետներէն, մերժելով քալել այն ծաղկալէտ ճանապարհին, ուրկէ քալեց Յարուցեալ Փրկիչը դէպի երկինք, իր աստուածային օթեւանը:

Ես՝ Աստուծոյ հաւատարիմ ու անարժան ծառան, որ սպիտակ թուղթիւն կը յանձնեմ այս մտածումները, միամիտ հաւատացող մը չեմ, այլ՝ հաւատքիս բոլոր եռանդով՝ կ'արտացոլայ հոգիէս ու գիտակցութեանէս ՄԵԾ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, որ Քրիստոսի սիրոյ յեղափոխութեամբ շնորհուցաւ մեզի: Դժուար է մերօրեայ մարդուն սահմանափակ մտածողութեան յուսալ, հաւատք մը, որ բարեպաշտական փարուծով տեսնէ Մտերին մէջ՝ տկարութեամբ անձնաւորուած աստուածութիւնը

Քրիստոսի ծնունդով, անկազմակերպ հեթանոս հայութիւնը գտաւ իր ազատութիւնը եւ փրկութիւնը ստրկութեան կապանքներէն:

Առանց Քրիստոսի սիրոյ եւ հաւատքի յեղափոխութեան՝ պիտի չ'ունենայինք, ո'չ հոգեւոր եւ մշակութային զարթոյն, ո'չ հայազիր Աստուածաշունչ եւ ո'չ հայախօս Աստուած, ո'չ Մեսրոպներ ու Սահակներ, ո'չ Ծնորհայիներ ու Նարեկացիներ, ո'չ տաղանդներ ու հանճարներ, ո'չ հայրենիք եւ հայ ժողովուրդ:

Քրիստոս եւ Ս. Մեսրոպ պաշտելի Փրկիչներն են, իրարմէ անբաժան, Մէկը իր աստուածութեամբ եւ միւսը Գրոց Գիւտի փառքով, որոնք յավերժութեան ազամանդեայ դարպասները բացին հայ նահատակ ժողովուրդին ճակատագրին առջեւ:

ԱՆՈՒՇԱՊՈՒՐ

ԱՐԱՔՍԻ ԹԱԹՈՒԼԵԱՆ

Տօնական այս օրերուն, Սիրոս թախիծ, վիշտ ու խիճ, Բոլորուել են շուրջս պար, Ու կը յիշեմ անցեալի, Քու սեղանդ տօնական:

«Սուֆրային» շուրջ բոլորուած, Զիր ու չամիչ քաղցրալի, Անհուն սէրդ բերկրալի, Աչքերուդ մէջ թաքցրած, Դին, անցեալի կարօտներ, Ստորումներ, անհատում, Որբանոցի քու կեանքդ, Քոյր ու եղբայր, Անհայր անմայր, Կարօտ յոյսի եւ լոյսի, Կարօտ սիրոյ ու խանթի

Սպասումով այն օրուան, Երբ կաղանդը պիտի գար:

Ափ մը չամիչ, կէս մը մարինջ, Մեծ յոյսերով ու երգերով կաղանդ պապան պիտի գար Բաշխելու սէր բիւր բարիք Տալու քնքուշ երազներ:

Ու մենք ուրախ ու զուարթ, «Սուֆրային» շուրջ բոլորուած, Անգիտակից անցեալէն, Նոր յոյսերով վառարուն, Զամիչ, ընկոյզ, Լէպլէպ չիր, Կը սպասէինք անձկանօք, Ուրախութեան ճիշերով, Զանգակներու դօղանջին, Դրացաններու տարափին:

Շնորհաւոր Նոր Տարի,

Դուռ պատուհան բաց առած, Դուռ դրացի երջանիկ, Թաղին կեդրոնն հաւաքուած, մազպար պարող աղջիկներ, Ծափ ու զուռնայ ածողներ, Անուշապուրն աւանդական համատեղներ շար ու շար Մեծ ու պզտիկ Փած ու ծիծաղ, Կաղանդ է կաղանդ:

Խաղաղութիւն աշխարհին, Խաղաղութիւն բիւր-բարիք երկիրն հայոց աշխարհին, Մայրիներու երկիրին, Ազգական ու բարեկամ, Դեռու ու մօտ սիրելիներ, Թող դադարին պատերազմ, Արցունքները սրբուին, Ժպիտն անոյշ թռթռայ Կեանք աւելի քաղցրանայ:

Մայր իմ, այսօր եկար դուն, Մտածումներուս մէջէն, Զիր ու չամիչ բերելու, Մաղթելու ինձ, Թողներուդ ու ծոռներուդ Շնորհաւոր Նոր տարի

Աշուշապուրն համադամ, Յիշեցուցիր ինձ նորէն, Որպէսզի ես ալ պատրաստեմ Նոր տարուան գիշերուան, Զանգակներու դօղանջին հետ Կանչեմ դուռ ու դրացի Ու բոլորին ես մաղթեմ, Շնորհաւոր Նոր Տարի:

Շաբաթ օրը 25-էն այս անգամ բարոյական եւ հոգեւոր նորոգմամբ, հին մարդը մերկացնելով ու նոր մարդը կերտելով: Այլապէս ինչ արժէք պիտի ունենայ նորը եթէ հինն է որ պիտի հիննայ,

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆՈՐ ԶԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ

Շաբաթ օրը 25-էն առաւել եւս բերելով փորձանք աշխարհին: Հիմն է կարեւորը, այսինքն, մարդը իր նորոգեալ կերպարանքով, իսկութեամբն ու կենսունակութեամբ: Ինչպէս Սաղմոսը կ'ըսէ, «արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցին»:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱԶԳԻՆ ԵՒ ՆՈՎԱ ԻՄԱՍՏՈՒՆԵԱՆ

«ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ»

ԼԵՒՈՆ Զ. ՍԻՐՍԵԼԵԱՆԻ «98.6» ՎԵՊԻ ՐԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՎ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի անգլերէնով գրած երկրորդ վէպը՝ որ կը կրէ «98.6» վերաառութիւնը՝ վերջերս թարգմանուեցաւ հայերէնի եւ լոյս ընծայուեցաւ Հայաստանի մէջ, Գրողներու Միութեան հովանաւորութեամբ:

Գրքին անգլերէն բնագիրը, որ կը բաղկանայ շուրջ 360 էջերէ, ամբողջապէս սպառած է ներկայիս:

Գրքին անգլերէն լեզուէ հայերէն լեզուի թարգմանողը՝ Արամ Արսէնեանն է, իմբագիրը՝ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանը:

Գրքի հրատարակութեան առթիւ կարեւոր նկատեցինք տալ կարգ մը լուսաբանութիւններ հեղինակի եւ վէպին մասին:

Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի անգլերէնով գրած առաջին վէպը՝ «I ask You, Ladies and Gentlemen» - «Հարց կու տամ ձեզի, տիկիներ եւ պարոններ» լոյս տեսաւ Ամերիկայի մէջ 1945 թուականին եւ արձանագրեց մեծ յաջողութիւն: Գիրքը արժանացաւ 4 յաջորդական տպագրութեանց եւ թարգմանուեցաւ 7 լեզուներու (ներառեալ հայերէնի եւ ռուսերէնի):

«Հարց կու տամ ձեզի, տիկիներ եւ պարոններ» վէպին նիւթը՝ 1915 թուի թուրք իշխանութեանց կողմէ հայ ժողովուրդի վրայ գործադրուած տեղահանութիւնն ու ցեղասպանութիւնն է, որուն գոհ դարձան նաեւ Սիւրմէլեանի ծնողները:

Այս վէպը՝ շուրջ տարի մը առաջ Լոս Անճելոսի «Cornerstone Theater Company» ընկերակցութեան կողմէ վերածուեցաւ թատերախաղի:

Թատերախաղը ներկայացուեցաւ Լոս Անճելոսի շատ մը թատերասրահներուն մէջ եւ գտաւ աննախընթաց յաջողութիւն:

Հաւանական է որ այն վերածուի նաեւ շարժանկարի:

ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱՃԵԱՆ

«I ask You, Ladies and Genetelmen» վէպին որպէս թատերախաղ՝ ամերիկեան բեմերու վրայ ներկայացուելը մեծ եւ արդար նպաստ մըն էր հայերու համար, որովհետեւ 91 տարիներ առաջ թուրք իշխանութեանց կողմէ գործադրուած ցեղասպանութիւնն է որ կը ցուցադրուէր հոն շատ իրապաշտ եւ սրտածալիկ պատկերներով:

«98.6» ՎԷՊԸ

«98.6» վէպը, պատմութիւնն է Դանիէլ (Daniel) անուն երիտասարդի մը, որ վարակուած էր հիւժախտէ (թոքախտ-tuberculosis):

98.6 թիւը մարդկային բնական ջերմաստիճանն է (ֆէրընհայթ): Հասկնալի է անշուշտ, որ հիւժախտէ տառապող երիտասարդը՝ միշտ ջերմութիւն ունէր: Յաւերու մէջ կը գալարուէր յաճախ, նաեւ արիւն կը թփնէր:

Դանիէլ անուն այս հիւժախտաւոր երիտասարդին տիտուր պատմութիւնը, որ նիւթն է «98.6» վէպին, իրականին մէջ՝ պատմութիւնն է Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի, որ իր՝ Արմերիկա հասնելէ ետք՝ Քէնզըս նահանգի Երկրագործական համալսարանի ուսանողական տարիներու ընթացքին, կը վարակուի հիւժախտէ:

Բժշկական եւ ութթիկնեան քննութեանց արդիւնքը կը հաստատէ Զաւէնի գոյգ թոքերուն հիւժախտէ վարակուած եւ հիւանդութեան շատ յառաջացած ըլլալը:

Հիւանդանոց կը տարուի ան: Կը մատնուի հոգեկան տուայտագին վիճակներու: Վերահաս մահուան վտանգը կ'ընկճէ գինք: Ապրիլ կ'ուզէ ան: Ապրիլ եւ յաջողիլ: Իր միակ մտասեւեռումը կ'ըլլայ, վերագտնել իր առողջութիւնը: Պայքարիլ այս մահացու հիւանդութեան ճիրաններ-

րուն դէմ:

Գիշեր մը հիւանդանոցի իր մահիճին մօտ տեսիլք մը կ'ունենայ: Կիսամութին մէջ ստուեր մը կը յայտնուի: Լուսաւոր ճիւղերով ծառի նման ստուեր մը կը մերձենայ մահիճին: Կը պարզուի որ այդ լուսաւոր պատկերը նոյնինքն Յիսուս Քրիստոսն է, որ հիւանդին կը յիշեցնէ իր աստուածատուր պատգամը - «Ես եմ Յարութիւն եւ Կեանք»:

Զաւէն Սիւրմէլեանի կեանքին մնայուն բնաբանը կը դառնայ միշտ Քրիստոսի այս պատգամը՝ «Ես եմ Յարութիւն եւ Կեանք»:

Այսպէս է որ ան «յարութիւն» առաւ եւ «պարեցաւ» թուրք իշխանութեանց գործադրած ցեղասպանութենէն:

Ան «յարութիւն» առաւ եւ «պարեցաւ» իր կեանքին սպառնացող ամէն կարգի դժուարութիւններէ: «Յարութիւն» առաւ եւ «պարեցաւ» նաեւ հիւժախտի մահացու հիւանդութենէն:

Այս է պատճառը որ Ուիլքըմ Սարոյեան կ'ըսէ, թէ «Զաւէն Սիւրմէլեան մէկն է այն բազմաթիւ որբերէն, որ յուսախաբ ըրաւ թշնամին (թուրքը) եւ չմեռաւ»:

Ու արդարեւ, Եղեռնէն վերապրած այս որբ տղան ոչ թէ միայն «չմեռաւ», այլ պարեցաւ եւ թողուց անկորնչելի ժառանգութիւն մը, որ պիտի անմահացնէ իր անունը:

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

Եղած են շատեր, որոնք մեղադրած են Զաւէն Սիւրմէլեանը, որովհետեւ լքած է հայերէն լեզուով գրելը:

Ահա թէ ինչ կ'ըսէ ինք այս մասին.

«Ես կորսնցուցի հայ լեզուին

կոիւր, որպէսզի շահիմ կոիւր հայ հոգիին...»:

«Գրականութիւնը խստապահանջ գործատէր մըն է, որ շատ մը գոհողութիւններ պահանջած է ինձմէ: Այդ գոհողութիւններէն մէկն է հայերէն չգրելս եւ նուազագոյն չափով միայն հայերէն լսել եւ կարդալս: Անգլերէնը մայրենի լեզուս է: Ու դեռ անգլերէն կը սորվիմ, քանի որ ստիպուած եմ այդ լեզուով մրցիլ միլիոնաւորներու հետ, որոնց մայրենի քարքառն է ան: Անոնց որ կը մտահոգուին հայերէն չգրելուս մասին կամ կը բնադատեն զիս, այս է ըսելիքս.- Մեծապէս ուրախ եմ, քանիկանք, եւ շատ աւելի կը յարգեմ ձեզ: Բայց թոյլ տուէ՛ք որ յիշեցնեմ ձեզի, թէ ես այլ մէկն եմ անոնցմէ, որ ետ դարձան մահուան ցամաքէն եւ որ իրենց սիրտերուն մէջ կը կրեն անմահական քաղաքները Հայութեան»:


Լեւոն Զաւէն Սիւրմէլեան իր հոգիին մէջ իր հիւժախտաւորի մահիճին մէջ երբ տեսաւ Յիսուսի անմահ պատգամը՝ «Ես եմ Յարութիւն եւ Կեանք», ան այս պատգամը նշանաբան ըրաւ իրեն համար եւ պարեցաւ մինչեւ իր խոր ալեւոյթը: Այդ սրբազան պատգամն էր որ մեզի կը կտակէր ան ամէն նոր տարեմուտներուն:

Յ.Գ. «98.6» գրքի հայերէն հրատարակութիւնը տրամադրելի է հետաքրքրուողներուն:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՋԵՐՄ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՍԻՐԵԼԻՆԵՐՈՒՆ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ՆՈՐԱ ԳԱԼԹԱԳՃԵԱՆ

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՐՆԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ

Ո՞տուր ինձ գծուխն ծխանի եւ զառաւօտս Նաւասարդի

Պանդխտութիւնն ապրող մեր նմանների յարատեւ կարօտն ու իղձն է որ տեւապէս Ղօղանջել է տալիս մեր հոգիներում դարերից եկած այս նուրական խօսքը: Այն էլ արտասանուած Արտաշէս Արքայի հայրցի կողմէ: Դարեր կարօտին խանութեան է նաեւ մերը աշխարհով թափառական մեր ցիր ու ցան ժողովրդի հայրենական կարօտը: Այրող կարօտը որ իրենց հետ գերեզման են տարել մեր պապերը, պապերի պապերը, եւ նրանց հետ երեւի մեզանից շատերը:

Այդ կիզող կարօտն է որ մեր նման աստանդական ժողովրդին ապրել է տալիս նաեւ անփարատելի իղձեր ու բաղձանքներ մեր ազատ ու անկախ հանրապետական Հայրենիքի վերաբերմամբ, տասնհինգ տարիներից ի վեր: Իսկ քանի ժամանակը առաջ է գնում եւ ամրանում է հիմքերը մեր հանրապետական Հայրենիքի, կարծես այնքան էլ աւելի արմատաւորում է մեր ցանկութիւններն ու բաղձանքները ի դէմն մեր պետականութեան: Բաղձանքները սոցիալապէս ներանձնական կարօտից մեզ ծիլ ու հասակ առնում եւ օրօր գալիս մէջդ եւ Աստծուն եւ յայտնի մինչեւ երբ, սոյն պարագայում՝ ներկայ ժամանակներում:

Իմ բաղձանքները անցած տարուայ նշումով՝ եօթն էին, եօթ էլ ոչ միայն իմ, այլեւս ժողովրդի սրտից բխած տենչանքները: Ես չոգնած եմ զգում ինձ եւ տրամադիր չեմ կրկնութիւններով զբաղեցնել, սակայն դրանից մէկը, որը թերեւս կարեւոր է եւ անշրջանցները:

Ին առաջինը որ կայ՝ միասնականութիւնն ասուած ինկաբոյր գաղափարն է: Ղօղանջուն գաղափարը, որից Աստուածահաճոյ մեղեդի է հնչում: Գաղափար՝ որից վաղուց, շատ վաղուց ենք խռովել, ճիշտ՝ խռովեն են տուել եւ դուրս քշել են տուել մեր տնից ու օճախից: Միասնականութիւնն, որից խռովել են տուել մեզ, եւ դուրս վանել մեր տնից, եւ ներքին եւ արտաքին շարագործները: Երեւի սրանից է արմատաւորուել այն մզլոտած խօսքը թէ ամէն մի հայ, մի մատնիչ ունի իր դիմաց:

Միասնականութիւնն ու Միութիւնը, որ ղօղանջունը հնչեցնել տուեց անմահանուն Չարենցը, եւ իր մահուան պատճառը դարձրեց «Այդ ո՞ր հայրը ականջի տակ չի հնչում»:

Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը Քո հաւաքական ուժի մէջ է»:

Հնադարեան պատգամն ու կտակը, որը աւաղ կոխկրտուել է մեր երկիրը արշաւող, եւ մեր միասնականութեան սկզբունքները պղծող ու ժողովուրդը կեղեքող հորդանների ու թալանչիներ կողմից, «դար դարի վրայ, անհաշտ-ժամանակներում» եւ երկիրը եւ ժողովուրդը պառակտող գողերն ու թալանչիները, որոնց ազդեցութիւնը երկարուած է մինչեւ մեր օրերը, այս անգամ մեր երկրի աստրապների կողմից: Այլապէս դարերով երազած մեր հանրապետութիւնում ինչո՞ւ Հոկտեմբեր 27 ազգի մեծարժոյշ ունթեակի սպանդը, պարզապէս երկիրը տագնապի մատնելու համար: Տագնապի վերածելու եւ իրարու դէմ նիզակ ճօճելու ստորին մտածումով: Այլապէս ինչո՞ւ անարգ սպանդին յաջորդող կուսակցութիւնների գոյաւման պարզան, ոչ թէ հինգ-տասով այլ վաթսուներով ու եօթանասուներով «Ականջը կանչի միութիւնն ու միասնականութիւնն քարոզողները եւ երազի պատրանքը գուրգուրողները»:

Խեղճ ժողովուրդ եւ խեղճ Չարենց...

Ո՞ւմ համար մի բուռ Հայրենիքը ու մի բուռ ժողովուրդ ունենալու հանգամանքում: Բոլորն էլ նորածին, բացի աւանդական երեք հիներից: Տարածախնութիւնների եւ խառնաշփոթութեան դուռ բացողները պարզահոգի մի բուռ ժողովրդի դիմաց, հենց այս եօթանասուներուց բանակն է, որ կայ: Ժողովուրդը պառակտող ու ճամբից հանողները հենց այս գլխազիր եօթանասուներն է...

Չգաստութեան եւ բանակաւորութեան է հարկաւոր, ով հայրենաբնակ հայ ժողովուրդ: Եօթանասուներն ոչ թէ շինիչ դեր է վիճակուած, այլ թէ խելահա դատումով՝ պառակտիչ, աւերիչ, մի բան որ այլեւս ժամանակի հասանութեան թելադրութեամբ պէտք է, արմատախիլ անել եւ հանգստութիւն շնորհել բազում տառապանք ու ցաւ տեսած ժողովրդին:

Ձեր շուրջը նայէք, հայրենաբնակ հայ ժողովուրդ, Ռուսաստանին, Ամերիկային, Անգլիային, Ֆրանսային, բազմամիլիոն համրանք ներկայացնող այս երկիրների ժողովուրդը արդեօք երեք-չորս կուսակցութիւնից աւելի տեղը գիտի՞: Մի հանրապետական, մի դեմոկրատական, մի բանւորական, մի լիբերալ կուսակցութիւնը լիուրի բաւարարութիւն կարող է տալ երկրի վարչիներին: Ո՞ւմ համար է եւ ինչի՞ համար է ձեր 70-ը, ձեր երկու-քէսերեք միլիոնով «Ձեր 70-ը պարզապէս ոչ թէ «հաւաքական ուժի իրողութիւն է ներկայացնում, այլ թէ աչքալուսանքի խնդրութիւնն մեր դարաւոր ոստիկ դատումով, որը ցուրկը դրած մեր Հայրենիքի սահմանահողի վրայ, մեր ներքին պառակտումն է երազում:

Ամանորեան այս խոհական գրոյցը ինչպէ՞ս շնորհաւորանքի վերածել, երբ դեռ ուրիշ-ուրիշ տանջող երեւոյթներ եւս պարզած մտածումներիս, հանգիստ չեն տալիս ինձ: Եւ ոչ միայն ինձ, այլեւս անկեղծութիւնը խոստովանել է տալիս յիշել տալիս շատ ու շատ սփիւռքեան հայրենակիցների դա դաւանական այս եպերելի երեւոյթն է, որը անձանձ գործի վրայ է մեր տառապեալ Հայրենիքին մէկ ծայրից միւսը:

Քի՞չ էր երկփեղկումը մեր մայր հաւատի - Ս. էջմիածնի եւ Անթիլիասի պարգայում, որ գողունի գեռունների պէս ներս սողակցին մեր սուրբ հողից ներս՝ նեխած մորմոնները, խարդախամիտ եհովայականները, բուրձալականներն ու կրիչնայականները, ու դեռ վաղեմի մեր ծանօթ յարանուանական մարմինները: Դաւադիր մարմինները, որոնք անկաշկանդ քառս են յարուցում հասարակական կեանքում: Քրիստոնէութեան համար քիչ գոհեր տուինք, որ հիմա նոր գոհերի

թատերաբեմի են վերածել այդ ցեցերը, մեր բազմազարհար Հայրենիքում: Ինչի՞ն վերագրել մեր Ամենայն Հայոց էջմիածնական գահակալի լուրթիւնը, կամ անտարբերութիւնը այս կապակցութեամբ:

Սակայն մենք եւ մեր սփիւռքը: Անցնող տարում ազգօգուտ գործերի շարանը երկար է ու խօսուն շնորհիւ մեր հասարակական մարմինների: Յուսանք որ այդ աշխատանքը աւելի թափով եւ աւելի ջանադիր կամքով կը շարունակուի, մեզ դիմաւորութեան եկող 2007ին:

Յուսանք որ անդադար չեփորահարուող հայրենիք վերադառնալու կարգախօսը կը շարունակուի նաեւ եկող նոր տարում:

Յուսանք որ անընդմէջ եւ յարատեւօրէն կրկնուող իտէալաշունչ խօսքը թէ մենք սփիւռքում մեր ազգութիւնը կանգուն կը պահենք ի դիմաց ձուլումի մեր աստուածապարզեւ մշակոյթի գորութեամբ հաւատանք եւ օրը հազար բերան աղօթք մըմնջանք, որ ասողների իղձն ու երազը ի կատար ածուի:

Իսկ որ ամէն բանից աւելի կարեւոր, ծունկի գանք եւ աղօթք մըմնջանք որ մեր պաշտելի Հայրենիքը ապահով ձեռքերի մէջ մնայ, դիմադրել կարողանայ ամէն տեսակ փորձանքների եւ առաջնորդուի դէպի պայծառ ու ապահով հանդրուանները:

Ամէն:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՆՈՐԱՆԱԼՈՎ

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Չրաժեշտի ու հանդիպման Երանելի մի ակնթարթ...
Ձրընգ, զրընգ ծոր է տալիս ժամացոյցի գանգը հպարտ: Սեղաների վրայ թողած իր օրհնութիւնն ու իր բարին, Չարագատի յօժարութեամբ Չեռանում էյոգնած տարին: Մանուկ տարին իր սպիտակ հնձարուրից աչքը բանում, Ուրախութիւն, ուրախութիւն, Ուրախութիւն է խոստանում:

Ուրախանք նոր տարու հետ, Նոր տարու հետ նորանալով, Դալարելով մեր կեանքն ապրեցք, Ոչ թէ դանդաղ չորանալով... Խաղաղութիւն մաղթեցք հողին, Մաղթեցք ամէն սար ու ձորում Բողբոջներից բացուելու բախտ եւ ծիւերին հասկաւորում: Ուրախանք նոր տարու հետ, Նոր տարու հետ գորանալով, Շտկեցք սապատն այս աշխարհի թէկուզ մի քիչ կորանալով:

ՏՕՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ

ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Տօնական գիշեր Նոր օր, ամանոր, Ինչ յուշեր, յուշեր, Թողեցի այնտեղ Չեռու մշուշում, Իղձեր, երազներ Մնացին կիսատ... Թերի, անաւարտ... Տօնական գիշեր,

Նոր օր, ամանոր, Անցած յուշերս եմ Փորում, փորփրում, Տեսուր ու մոլոր, Փնտռում այս գիշեր, Անցած, գնացած Օրերս բոլոր՝ Ու նոր ամանոր, Մի նոր ամանոր...

Season's Greetings
Շնորհակալութիւններ
Մոնակամ Օպտիմ Մոնիթոր
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ
ՄԱՐՈՆԵԱՆ
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՆԱԻԱՍԱՐԴ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Արեգակը երկիր մոլորակը ձեռքին որպես ծաղիկ ճախրում է տիեզերքում, աստղերին տանում նրա հրաշափառ սքանչանքը: Աստղերը ժպտում են նրանց երթին, լոյս ցանում նրանց ճանապարհին: Հգոր, գորոգ կայսրն Հոովմի՝ Յուլիոս Կեսարն, հրամայել էր արեւին մի ակնթարթ դադարեցնելու իր վազքը եւ այդ ակնթարթը կոչել էր արարած արեգակնային տարուայ համակարգի նոր տարուայ սկիզբը՝ Նոր Տարի: Նրա առաջին օրը անուանել Յունուար 1, ի պատիւ իրենց «Դարպանների ու Դրնամուտներ»ի աստուած Jenus-ի:

Նոր Տարի, մարդիկ ցնծութեամբ, հազար խրախճանքներով ու գուարճանքով են դիմաւորում այն: Նոր, արեւի տարի, ակնկալիքներ նոր, որ երկիրքից հողին անձրեւ յորդար, արտերում ու այգիներում առատ բերք հասնէր, աշխարհին խաղաղութիւն իջնէր, բարգաւաճութիւն լինէր իրենց աշխատանքներում, մի տարուայ էլ ւաւելի կեանքի վայելք սպրկէին, մանչերն իրենց ոււճանային: Սակայն Կեսարը ինչու այդ ակնթարթը՝ Յունուարի 1-ը, նոր տարուայ սկիզբ հռչակել, երբ արեւը ցուրտ ժպտում էր, նրա ատրուշանում էր փոթորկում տիեզերական հուրը: Յուրտ էր, հիւսիս բուքը գարկում էր շէներին, ամպերը սառած սպիտակ թիթեւներ էին ցանում հողին: Մրսում էր հողը, թոշմել էին արտերի ու լեռնալանջերի ծաղիկները, երկիրքը տխուր էր: Ծառերն էին թօթափել իրենց հանդերձանքը, սարսուռ էին պաղից, դադարել էր անտառների երգը:

Արիացի մեր նախնիները արբեցած տիեզերքի հրայրքից, երկնքում վառուող արեգակի կրակի լոյսի շողերից, իրենց աստուածներին՝ Բագարանի, Բագրեւանդի ու Աշտիշատի մեհեաններում տօնախմբել էին արտերում արեւալոյս ցորեանի, այգիներում ծիածանացած բերքի, որթատունկներից ժպտացող խաղողի հանդէսների խրախճանքը: Նոր բերքի հասունացման տօնը Օգոստոս 11ը, Նաւասարդ, Նովա Սարատա, Նոր Տարի էին կոչել: Երկրի պտոյտի առաջին ամիսը Նաւասարդ էին անուանել, աւետելով այն որպէս նոր տարուայ «Սրբազան Տարեգլուխ»ը: Ամանոր ու Կաղանդ էին նաեւ կոչել նոր տարուայ տօնը, որը հնագոյն ժամանակներում կատարուել էր բնութեան գարթօնքը նշանաւորող Բարեկենդանի տօների հետ:

Միրոյ ու խաղաղութեան տիեզերական ջահը ձեռքին երկիր մոլորակ էր եկել տիեզերածին մարդ որդին՝ Յիսուս: Մոլորակն էր տաւապել իր բնակիչների անբարիշ-

տութեամբ: Նրա ջահի լոյսը մարդկանց սրտերին սիրոյ ու խաղաղութեան իմաստութեան լոյս շաղեց, հազար, հազարների հոգիներում ճառագած այդ լոյսը աշխարհը դէպի նոր դարաշրջան առաջնորդեց: Նրա լոյսը քարոզող այրեր, 325 թուակաւնի Նիկիոյ առաջին տիեզերական ժողովին Յունուարի 1ը համարեցին նրա հրաշափառ գալստեան փառաբանման օր՝ Նոր Տարի:

Հայոց Նաւասարդի առաջին օրերին կատարուել էին համաշխարհական տօնախմբութիւններ: Արքան, իշխանները, ժողովուրդը, գորքը հանդիսաւոր երթով խմբուել էին Տարօն ու Բագրեւանդ գաւառների սահմանագլխի Արածանի գետի ու Նպատ լեռան ստորոտին գտնուող Բագարանի ու Աշտիշատի տաճարներում տօնելու Արամազդի ու նրա դստեր՝ Անահիտ դիցամօր պաշտամունքը: Արքան Հայոց, նախարարները, ժողովուրդը մտել էին իրենց աստուածների մեհեանների, խուրձ, խուրձ ցորեանի հասկեր փռել նրանց արձանների առաջ: Մայրութեան ու բնութեան յաւերժութեան աստուած՝ դիցամայր Անահիտի բազիլինն ցուլեր մորթել, կարմիր կրակ արիւնը շաղ տուել նրա ոսկեծոյլ արձանին, իրենց ճակատները նրա կարմիրով օծել: Արեւի աստուած Միհրի բազիլին, իր կրակը ու լոյսը հոսած զամբիւղներով խաղող ու մրգեր շաղ տուել: Փառաբանել էին աստուածներին իրենց երկրում բերքի հասունացման համար, նուիրել որ այն առաջ լինէր: Գնացել էին Աշտիշատ աւանի Վահագնի մեհեան, նրա «Հայցեաց Դրախտ»ի հացեւու պուրակի յորդահոս սաւնորակ աղբիւրի սրբազան ջուրը ըմպելու:

Բերքի տօնը հայերի խրախճանքի օրերն էին եղել: Մեհեանների հրապրակներում խաղեր էին անցկացրել, Նաւասարդեան խաղեր, որ հազարաւոր տարիներ յետոյ էլ հայերը նոյն ամսում այն պիտի կատարէին, ափսոս սակայն ոչ Աշտիշատում ու Բագարանում: Խաղերին մասնակցել էին արքաներ, նախարարներ, բոլորը՝ ում սրտում քաջի հուր էր կաթել: Արբեւում էին իրենց աստուածների ըմպելիք գինիով, արբեւում էին աստուածների տիեզերական ոգիով: Պարմանուհիները խենթացած քաջերի յաղթանակներով, Աստղիկի բազիլինի առաջ իրենց հեթանոսական հոգիները, սրտերը, մարմինները նուիրում էին նրանց: Պատմիչները վկայել են, որ խաղերի ժամանակ աստուածները իրենց երկնային տաճարներից իջնում էին Արարատի գագաթին՝ տիեզերական սպիտակ լոյսով վառ-

ուած ձիւն մաղել յաղթանակած քաջերի վարսերին:

Գողթան երգիչներն էին աստուածների գովքը փառաբանում, բանբիւններն էին հնչում, թմբուկներ էին գարկում: Մեհեանների հրապարակներն էին բացւում, շուրջ պար էին բռնում, ծիրանի արքան էր նրա գլխին, կարմիր թաշկինակը շարժելով կրակ էր ցանում ժողովուրդի վրայ: Մեհեանը եզերած նուննիներ ի պայթած նունները որպէս ջահեր բռնած գարկում էին նրա պատերին: Դարպասից դուրս էր վազում ոսկեշաղ պարմանուհին, Անահիտը լինէր կարծես, արքան նրա մատները ազուցած շուրջ պարով մեհեանին էին ծնրադրում: Իր հեթանոս աստուածներին դաւաճանած հայը, դարեր շարունակ հեթանոս նախնիներ ի շուրջ պարերը պարեց: Հայերի բոլոր շուրջ պարերը հեթանոս աստուածների ոգին, նրանց պաշտամունքի խորհուրդն են երկնում: Հարիւր հազարաւոր հայեր, հեթանոսական շուրջ պար բռնեցին իրենց մեհեանացած քառագագաթ Արագածի շուրջ: Հայ, ովկիանոսներից այս կողմն էլ ես բերել քու նախնիների շուրջ պարը, նրա հմայքով ապշեցրել օտարներին: Հայոց շուրջ պարերը, հեթանոս նախնիների յուշն են, հայոց ոգու կրակը կայ այնտեղ:

Մեհեանների շքամուտքերի առաջ թատերախաղեր էին: Իրենց նահապետ Հայկի մեհամարտն էր Բաբելացի Բէլի դէմ: Որոտում էր հրապարակը, նրանց վահանների հպումի արձագանգները հասնում էին Բաբելոն, նրանց թուրերի գարկերի կայծերը մեհեանների վրայ ոսկի էին ցանում: Ջահեր էին վառւում, լոյսի հեղեղից վահագն էր յառնում, ձիւնափայլ Աստղիկն էր դուրս վազում մեհեանից աւետելու նրա ծնունդը, յաւերժ սիրոյ ուխտի նարօտ կապում ճակատներին: Խոցուած Արա Գեղեցիկ, Շամիրամն էր ողբում նրա վրայ: Ժողովուրդը կանչում էր յարալէզներին որ շունչ փչէին արքային, կենդանանում էր Արան, Նուարդն էր վազում գրկելու ամուսնոյն, հրճուանքից թնդում էր հրապարակը: Ազնուազարմ Արտաշէսը նժոյգի վրայ, պարան էր նետում, Սաթենիկին մեհեան բերում: Միաբերան երգում էին՝

Ո տայր ինձ գծուին ծիրանի եւ գառաւօտն Նաւասարդի Արիացիներին Նաւասարդը խորհրդանշել էր նաեւ ջրհեղեղի արհաւիրքի յիշատակը ու ջրերի դիցուհու պաշտամունքը: Այն տօն է եղել նաեւ ջրախաղի: Արքան, նախարարները, թագուհին, փափկասուն տիկնայք հայոց աշխարհի, պարման-պարմանուհիներ նետուել

էին ջրախաղերի, ջուրն էր վտակ, վտակ վազել նրանց վարսերից, իրաններից եւ պարմանները վազել էին այն ըմպելու: Ով հայ տղայ, քունոր տարում անէացիր մի պահ, գնայ քու հին աստուածների մեհեաններ, գրկիր քու ծիրանափայլ արքաներին, արբեցիր բերքի տօնի փառաբանման հեթանոսական հրճուանքից, մտիր ջրախաղեր, ջրի դուատրերին, դու էլ խմիր նրանց ձիւնտտ իրաններից հոսած ջուրը, տես ինչքան պիտի հայանաս:

Հայոց Տրդատ արքան, իր երկրի քաղաքական ինքնուրոյնութիւնը պահպանելու համար հաւատքի նոր լոյսի ջահեր վառեց հայոց աշխարհում: Ասում ենք առաջինը, այն այրեց արմէնների հազարամեակների իմաստութիւնը: Թող երկրորդը լինէր, Բիւզանդիոնի նման նախ նոր հաւատքի պաշտամունքին ազատութիւն շնորհէին, երբ այն ընդունելի լինէր հանդուրժէին նաեւ իրենց հին աստուածների տիեզերական խորհուրդը, մշակոյթը ու մեհեանները: Մարել էր լոյսը բերքի փառաբանման Նաւասարդեան տօների եւ արեւմուտքի հետ նոր տարուայ սկիզբը փոխադրել Յունուարի մէկին, որին կոչեցին՝ Նոր Տարի, Ամանոր, Կաղանդ:

Հին տարուայ վերջին օրը ոտքի էր իմ հայրենի Եօղուուօլուգ գիւղը, նրա մայր ճանապարհի հրապարակում խարոյկ էր բոցափառւում, կարծես իրենց նախնիների կրակի պաշտամունքն էր եկել Մուսա Լեռ: Նրա բոցերի կարմիր սիւները բարձրանում էին վերեւ՝ արեւին ջերմացնելու: Նոր տարուայ տօնախմբութիւն էր, մանչերը, պարմանները իրենց պարտէզներից բերած դաբնու կանաչ ճիւղերը որպէս տօնական դրօշ վեր պարզած գալիս էին հրապարակ, նետում այն խարոյկի բոցերին, ճարճատում էին, պայթում էին սեւ պտուղները, կայծեր թռչում վերեւ՝ վահագն Համաստեղութեան Յարդազողի ճանապարհին աստղեր վառելու: Տարուայ առաջին օրուայ արեւազային Մուրբ Աստուածածին եկեղեցու կոչնակն էր գարկում, գնում էին աղօթելու, որ գալիք տարում առատ բերք յորդէր իրենց արտերում ու այգիներում: Հրապարակում էին այրերը գիւղի, «Տամա» (Մուսա Լեռան ճատրակ) խաղի բազում տախտակներ, Նաւասարդեան խաղերի յուշն էր եկել իրենց շէն: Մրցումներ, գինուորներ արքաներ էին դառնում եւ հրաշունչ բացականչութիւններից թնդում էր գիւղը, որին գիւղամիջեան անդնդախոր ձորը ահագնացած արձագանգում էր:

Հայրենադարձ եղանք, այնտեղ խառոյկներ չէին վառւում, դաբնի



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՄԿՐԵԱՆ

ՆԱԻԱՍԱՐԳ

չկար, Նաւասարդ չկար, Նոր Տարին սօճում էին իրենց աներում եղենիները բերած, որոնք նոր տարուայ խորհրդանիշն էին դարձել: Ասում են հեռու Գերմանների երկրի աւանդութիւնն էր հասել Քրիստոնեայ Նայիրեան երկիր: Երբ արեգակը արդէն իր վերջին ժպիտի համբոյրն էր ցօղում հայոց մայր ոստանին, իրենց կրակ լոյսերով վառում էին այն, վառում էին վարդ քարերը իրենց կառավարական տան պատերի, վառում էին ցրտից տերեւաթափ եղած մայր ոստանի սօսիները: Չէին խշխշում նրանք, որ իրենց հին աստուածների տիեզերական պատգամը հաղորդէին հայերին, սակայն նրանց լոյսերի մէջ երկնային հրեշտակների ժպիտը չէր իջել արդեօք, որ այդ զիշեր գուարթութիւն յորդէր հայոց աներին: Ոստանի բոլոր տների պատահանները կրակ լոյս էր թափուում, այլուտ էին սրտերը հայոց, խինդն էր պոռթկում իրենց օճախներում: Տօնական եղենիները լոյս էին հագել, իրենց թեւերից կախուել էին հաւքերը իրենց հանդերի, արջուկները, աղուէնները իրենց անտառների եւ այդ լոյսերի մէջ չէին վառում արդեօք լոյս դարձած հոգիները իրենց նախնիների:

Ճոնչում էին դռները օճախների, գալիս էր հիւսիսային ցուրտ երկրներից ժամանած Ձմեռ Պապը: Մարդ արարած, քեզ շնորհուած իմաստութեամբ դրախտ ստեղծեցիր, հոգու անմահութիւն յղացար քեզ համար, թուշում ես տիեզերական անհունների աստեղեր, քու երեւակայութեան սլացքով արարում ես անհաւատալիւն, որպէսզի քեզ շնորհուած կեանքը գուարթընթանայ: Ձմեռ Պապի ստեղծեցիր, որ քու մանչերը հրճուէն նուէրներ ստանալիս: Քու մանչերը հաւատացին Ձմեռ Պապի իրողութեան ճշմարտութեանը:

1897 թուականն էր, Նոր Տարի էին սօճելու Նիւ Եորք քաղաքում: Ութ տարեկան Վրճինիա անունով մի աղջնակ, հաւատացել էր որ այդ զիշեր իրենց տուն այցելութեան էր գալու Սանդա Գլոգը, նոյն ինքը մեր Ձմեռ Պապը: Սակայն նրա խաղընկեր աղջնակներ ու տղաներ ասել էին իրեն, որ Սանդա Գլոգ չկայ: Տարակուսել էր, հարցում առել հայրիկին, որ արդեօք կայ այն: Իրենց ընտանիքում սովորութիւն էր եղել որեւէ կասկածելի իրողութեան իսկութեան համար հարցում անել New York Sun լրագրին, որի պատասխանը ընդունել էին որպէս ճշմարտութիւն: Եւ Վրճինիան որոշել էր գրել լրագրին՝ Սանդա Գլոգի գոյութեան մասին: Հայրիկն էլ յորդորել էր գրել, լրագիրը ստոյգ պատաս-

խան կը տան նաեւ իր այս հարցումին:

Եւ Վրճինիան նամակ էր գրել լրագրին.

«Ես ութ տարեկան եմ: Իմ փոքրիկ ընկերներից ոմանք ասում են Սանդա Գլոգ չկայ: Հայրիկս ասում է եթէ դու այն տեսնում ես The Sun լրագրում, ապա այն այդպէս է: Խնդրում են ասէք ինձ կա՞ց Սանդա Գլոգ»: Վրճինեայի նամակը հասել էր լրագրի՝ Francis P. Church անունով մի երկարամեայ խմբագրի, որը հետեւեալ պատասխանէր հրատարակել:

«Վրճինիա քու փոքրիկ ընկերները սխալ են: Նրանք ազդուած են իրենց տարիքի թերահաւատութիւնից, նրանք չեն հաւատում բացի նրանից ինչ որ տեսնում են: Նրանք մտածում են ոչինչ կարող է լինել, որը հասկանալի չէ իրենց փոքրիկ ուղեղներով: Վրճինիա, բոլոր մտքերը՝ թէկուզ լինեն մարդկանց կամ երեխաների, փոքր են: Մեր այս անհուն տիեզերքում, մարդը համեմատուած անեզր աշխարհի հետ պարպէս մի միջատ, մըջոյն է իր ինտելեկտը եւ ինչպէս կարող էր իր մտածողութեամբ ըմբռնել ամբողջ ճշմարտութիւնը եւ բոլոր գիտելիքները:

«Այո Վրճինեա, կայ Սանդա Գլոգ»:

«Նա անտարակոյս գոյութիւն ունի, այնպէս ինչպէս սէրը, ազնուութիւնը, բարեպաշտութիւնը գոյութիւն ունեն եւ դու գիտես արդեօք որ նրանք յորդում են քու կեանքում՝ որպէս վեմագոյն գեղեցկութիւն եւ հրճուանք: Աւաղ: Ինչպէս սրտում պիտի լինէր աշխարհը եթէ չլինէր Սանդա Գլոգը: Աշխարհը նաեւ նոյնքան տխուր պիտի լինէր եթէ չլինէին Վրճինիաներ: Այն աստի պիտի չլինէին ոչ մանկական հաւատք, ոչ բանաստեղծութիւն, ոչ սիրերգ, եւ ինչպէս հանդուրժելի պիտի լինէր այս կեանքը: Իմացականութիւնից ու տեսանելիութիւնից բացի մենք ուրիշ վայելք պիտի չունենայինք: Այն արտաքին լոյսը որով մանկութիւնը լցնում է աշխարհը պիտի մարէր:

«Չհաւատալ Սանդա Գլոգին: Դու նոյնպէս կարող էին չհաւատալ պարիկներին: Դու կարող էիր նոյնպէս ինդրել քու հայրիկին, որ Միսոնդի նախօրեակին մարդիկ վարձէր, որպէսզի հակէին բոլոր ծինելոյցները՝ հանդիպելու համար Սանդա Գլոգին, սակայն եթէ դու նոյնիսկ չէիր տեսնի Սանդա Գլոգին վայր իջնելիս, ինչ պիտի ապացուցէր այն: Ոչ ոք չի տեսնում Սանդա Գլոգին, բայց այն իրականութիւն է որ չկայ չկայ Սանդա Գլոգը: Աշխարհում ամենաշատ իրա-

կան բաները այն են, որ ոչ երեխաները եւ ոչ էլ մարդիկ կարող են տեսնել: Դու երբեքից տեսնել ես պարիկներին մարգագետիններում պարելիս: Անշուշտ ոչ, սակայն այդ ապացոյց չէ որ նրանք այնտեղ չեն: Ոչ ոք կարող է ըմբռնել կամ երեւակայել չտեսնուած ու չնշմարուելիք բոլոր այն հրաշքները որոնք կան աշխարհում:

«Դու մաս, մաս պատուիր պուպրիկները, տես ներսում ինչն է աղմուկի շառաչման պատճառը: Սակայն կայ մի վարագոյր, որը ծածկում է անտեսանելի աշխարհը, որը ոչ ամենահզօր մարդը եւ ոչ էլ որեւէ ժամանկ ապրած ամենահզօր մարդկանց միացեալ ուժը կարող էին այն պատուել: Միայն հաւատքը, բանաստեղծութիւնը, սէրը երեւակայութեան սիրերգութիւնը կարող են մի կողմ հրել այդ վարագոյրը եւ տեսնել, եւ նկարահանել այդ երկնային գեղեցկութիւնը եւ նրա այն կողմի երկնային փառքը: Այդ բոլոր ճիշտ են: Ահ, Վրճինիա, այս ամբողջ աշխարհում չկայ ուրիշ ոչինչ իսկական ու հաստատուն:

«Ո՞չ Սանդա Գլոգ: Փառք Աստծուն, նա ապրում է եւ ապրելու

է յաւիտեան: Վրճինիա, հիմակուանից հազար տարիներ առաջ, դրանից բացի տասը անգամ տասը հազար տարիներ յետոյ էլ նա պիտի շարունակի մանկութեան սրտերը գուարթ պահել:

«Բերկրայի Միսոնդը եւ ուրախ Նոր Տարի»:

Վերոյիշեալ յօդուածը անմիջական զգայալուզում էր պատճառել եւ այն համարուել էր երբեքից գրուած ամենահազարկաւոր խմբագրականներից մէկը: 1897 թուականից մինչեւ լրագրի 1949ի լուծարումը, այն ամէն Նոր Տարի հրատարակուել էր նոյն լրագրում եւ նաեւ մինչեւ հիմա էլ նաեւ այլ լրագրերում: Մանկական երազանքի այդ նամակի հրատարակումը թող գուարթութիւն բերի նաեւ հայ մանուկներին, որ այդ կայ՝ «Ձմեռ Պապի»:

Գալիք Նոր Տարին, հայոց աշխարհին, հայոց սրտերին Նաւասարդեան բարիք յորդի, հայրենի արտերում, այգիներում առատ բերք լինի: Նոր Տարի, հայոց հոգիներին համերաշխութիւն անձրեւիր:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ՈՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԳԻՇԵՐ

ՄԵՏԱՔՍԷ

Թէ աշխարհում փակ դռներ կան, թող որ բացուեն այս գիշեր Ու նոր տարին նոր խնդութեամբ թող ներս մտնի այս գիշեր, Թէ կան դատարկ, համր տներ՝ մանկան ճիշով թող լցուեն, Ով փնտռում է սրտանց մէկին յանկարծ գտնի այս գիշեր: Թէ կան լացող, տխուր աչքեր, թող ծիծաղեն այս գիշեր, Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր: Թէ կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,

Եւ ուրիշ իւրաքանչեւ կեանքով խանդավառուեն այս գիշեր: Թէ մոլորուած անցորդներ կան, դարձի թող գան այս գիշեր, Սրբագործուած սիրով մտնեն իրենց օճախն այս գիշեր, Թէ կան բախտի փշոտ ճամբէք, թող ծաղկուցով կանաչեն Ու երջանիկ սպասումով բոլորն արբեն այս գիշեր... Թէ աշխարհում պանդուխտներ կան, թող տուն դառնան այս գիշեր, Յայրենական յաւերժութեամբ ողջագուրուեն այս գիշեր:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՏԱՂԵՐ

ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐԵԱՆ

Այս տարին էլ թողիր ետեւ, Մտար մի նոր ոսկեշրջան, Եւ քայլերով խիզախ, թեթեւ, Մտար մի նոր ոսկեշրջան. Քո հայրենի հողի վրայ, Քայլիր հաստատ, վստահ քայլիր, Պարտքը մեծ է, որովհետեւ Մտար մի նոր ոսկեշրջան:

Արդ թող ուղիղ լինի պայծառ՝ Յայրենիքի սիրով լեցուն, Երգը հնչի հազարաձայն՝ Յայրենիքի սիրով լեցուն,

Անշէջ հուրը թող ջրվեժի Քո երգերի, ոգու վրայ, Մութ ջմնայ ոչ մի կածան՝ Յայրենիքի սիրով լեցուն:

Շնորհաւոր լինի, երկիր, Քո նոր տարին յաղթանակի, Շնորհաւոր լինի կրկին Քո նոր տարին յաղթանակի. Ախ, ինչ յոյսդ որ ունեն ցանցած, Ադամանդէ ինչքան խոհեր, Թող բոլորը սիրով գրկի Քո նոր տարին յաղթանակի:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

Լաւագոյն մաղթանքներ «Մասիս» շաբաթաթերթին

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱԿՈՒ ԽՊՈՅԵԱՆ

ԸԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Վաղուց արդէն աւանդույթ է դարձել Հայաստանում «Մէկ ազգ, մէկ մշակույթ» խորագրի շրջանակներում փառատօներ կազմակերպել, որոնք տարեց տարի աւելի մեծ թափով ծաւալուած է հայրենիքում, որին համերաշխ արձագանքում են աշխարհասփիւռ հայ համայնքներում, եւ յատկապէս՝ Լոս Անճելոսում:

Յայտնի է որ անկախութեան 15 տարիներին զգալիորէն տուժել է հայ մշակույթի եւ արուեստի երբեմնի բարձր մակարդակը՝ յատկապէս թատերական, օպերային եւ կինօ արուեստը:

Զրկուելով պետական հովանաւորութիւնից, համապատասխան միջոցների բացակայութեան հետեւանքով շատ մշակութային կոլեկտիւններ ի վիճակի չեն նոր ներկայացումներ ստեղծել, իսկ այնուհետեւ, թատերաշրջանի ընթացքում դրանք ներկայացնել հանդիսատեսին եւ Հայաստանում այսօր, մշտապէս գործող թատրոնը Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական թատրոնի կոլեկտիւլը, որի դահլիճը մշտապէս լեփ-լեցուն է հանդիսականներով, նույնպէս չկարողացաւ դիմանալ եղանակին, եւ թէպէտ ձմեռը դեռ նոր է սկսուել, արդէն դադարեցուել են ներկայացումները, դահլիճը, ջեռուցման բացակայութեան պատճառով ինչպէս վերը նշուեց, տարիներ շարունակ տեւող անգործութիւնից յետոյ, նաեւ բարերարների շուրջ օգնութեան ու խոշոր ներդրումների շնորհիւ մեծ վերանորոգման ու շինարարական աշխատանքների կատարուեցին Հայաստանի մշակույթի բոլոր մեծ ու փոքր օբեկտներում: Ի՞նչ է չէնքերի դահլիճների ջեռուցումը մոռացուած էր...

Այս տիտղոս փաստերը ամենեւին էլ չեն նշանակում թէ հայ արուեստը դադարել է մեր ժողովրդի ապերիակերպ լինելուց:

Փորձեմ համառօտ ներկայացնել մշակութային կեանքը հայաշատ Լոս Անճելոսում:

Անցնող տարուայ ընթացքում քանակապէս մօտ 2 անգամ աւելի շատ են եղել մշակութային միջոցառումները քան անցեալ ու նախանցեալ տարիներին:

Հիմնականում համայնքի արուեստագէտների ուժերով, ինչպէս աւանդույթ դարձած մայր Հայրենիքից ժամանած երգիչ-երգչուհիների, երաժիշտների ելույթներով:

2006 թ. համերգային սեզոնը Լոս Անճելոսում սկսուեց Ալլա Լեւոնեանի 2 մենահամերգներով (Յունուարի 13 եւ 28ին) որոնք անցան յաջողութեամբ: Փետրուարի 5ին «Ալեքսում» Լէյլա Մարիբեկեանի

մենահամերգը մեծ ոգեւորութիւն առաջացրեց եւ բարձր գնահատուեց համայնքում: Փետրուարի 12ին Ռ. Քոթանջեանը ելույթ ունեցաւ «Սրապա»ի դահլիճում, Փետրուարի 9ին համերգ «Ալեքսում», «Մեր շուր» շրջ տարեդարձի առթիւ:

Անհրաժեշտ եմ համարում նշել որ համայնքում մշակույթի գեղարուեստական խորհուրդի կամ միջոցառումները համակարգող որեւէ օրկանի բացակայութիւնը խառնաշփոթ է ստեղծում եւ լինում է այնպէս, երբ միժամանակ նոյն ամսում, նոյնիսկ նոյն օրը, նոյն ժամին կայանում 2-3 համերգ-միջոցառումներ, որոնք անշուշտ, տոմսերի վաճառքի եւ դահլիճները լցնելու եւ այլ դժուարութիւններ են ստեղծում: Օրինակ միայն Մարտ ամսին կազմակերպուել են բազմաթիւ համերգներ: Մարտի 5ին Մարգարիտ Շահինեան «Վերածնունդ Անուրջներ», Մարտի 11ին սիմֆոնիկ համերգ ՀՕՄ-ի 50 ամեակի առթիւ, Մարտի 12ին Վարդան եւ Սիրանուշ Գէորգեանի դպրոցի աննկարագելի համերգը «Կողակի» դահլիճում, Մարտի 15ին «Լարք» կազմակերպած տաղանդաշատ երիտասարդ երաժիշտներ ջութակահար Սերգեյ եւ դաշնակահար Լուսինէ խաչարուեստների հոյակապ երեկոն, Մարտի 19 Գիւմրիի պատանի տաղանդաների համերգը, Մարտի 26ին 2 համերգ, ցերեկը՝ 6-14 տարեկանների, իսկ երեկոյեան՝ 15-20 տարեկան տաղանդների համերգը, «Ստարում» ինչպէս նաեւ բազմաթիւ տեղական նշանակութեան միջոցառումներ - ընդամէնը 1 ամսում, որոնք խառնաշփոթ են ստեղծում մշակութասէրների շրջանում առաջնութիւն տալ, քանզի բոլորին մասնակցելը դառնում է անհնարին:

Ապրիլ ամիսը, նոյնպէս ծանրաբեռնուած էր բազմաթիւ մշակութային միջոցառումներով: Դրանից նշանակալից էր հանրայայտ երգչուհի Էլլա Չախոյեանի սան 15-ամեայ տաղանդաշատ սուպրանօ Մելինէ Համբարձումեանի համերգը: Ի դէպ Մելինէն մասնակցելու է նաեւ Գալիֆորնիայի իր հասակակիցների սուպրանոյի շատ հեղինակաւոր մրցույթին, (Նոյեմբեր 1ից մինչեւ Դեկտեմբերի 17ը) անցել է երկրորդ փուլ եւ յուսանք, որ մեր տաղանդաւոր հայուհին կը յայտնուի մրցույթի յաղթողների շարքում:

Յաջող էր նաեւ է. Չախոյեանի մէկ ուրիշ ասնի՝ Լիլի Գէորգեանի, Ապրիլի 20ի մենահամերգը: Մայիսի 21ին հայ համայնքը մի առանձնալատուկ ջերմութեամբ ընդունեց Ինգա եւ Անուշ Արշակեանների այցե-

լութիւնը Լոս Անճելոս եւ համերգը «Ալեքս» դահլիճում: Յունիսի 2ին հերթական իր յաջող մենահամերգը ունեցաւ Միստեր X-ը:

Օգոստոս 12ին հայաքուլի լեփ-լեցուն դահլիճում կայացաւ տարուայ բացառիկ համերգներից մէկը, մի երիտասարդ հայուհու՝ Նելլի Մարիրոսեանի նախաձեռնութեամբ, որը ճոխ համերգից, չիրաւի, վերածուեց հայրենասիրական խանդավառ տօնի:

Մեծ յաջողութեամբ անցան նաեւ Սեպտեմբերի 9 եւ 10 Քաջ Նազարի կազմակերպած Համլէտ Գէորգեանի սքանչելի համերգը, որը իրաւամբ արժանացաւ հանդիսականների ջերմ ընդունելութեանը:

Տաղանդաւոր դերասանուհի Տաթևիկ Լափլանեանը, երկար լուսթիւնից յետոյ համայնքը ցնցեց իր «Իմ Անոշ Տղայ» պիէտով, որը իմ կարծիքով նրա ստեղծագործական, նաեւ հոգեբանական պոթիկումն ու արուեստագէտի ժամանակն ճիշդ ըմբռնելու համարձակ ու զարմանալի դրսեւորման փայլուն օրինակն էր:

Ներկայացման նկատմամբ հասարակութեան հետաքրքրութիւնը վերը նշուածի վկայութիւնն է:

Մշակութային տարուայ բացառիկներից էր Նոյեմբեր 5ի «Ալեքսում» գուսանական ու ժողովրդական երգերի անզուգական կատարող՝ ՀՀ ժողովրդական արտիստ Վաղարշակ Սահակեանի ծննդեան 100ամեակին նուիրուած շքեղ երեկոն, որը միժամանակ, մոռացումից փրկելու եւ վերակենդանացման անգնահատելի օրինակ էր: Դեկտեմբերի 2ին համերգ Նու Եորքի «Շուշի» պարախումբը, Դեկտեմբերի 3ին երգչուհի Հերմինէ Ամիրեանի համերգը, Պապին Պողոսեանի եւ Նունէ Աւետիսեանի մասնակցութեամբ: Դեկտեմբերի 10ին կայացաւ Գալիֆորնիայի Պարարուեստի Միութեան 5րդ փառատօնը, որը իմ կարծիքով տարուայ մշակութային կեանքում անվիճելի երեւոյթ էր, որտեղ 15 համոյթներ 3 ժամ շարունակ, դահլիճը լարուած ու չիրաւի սքանչելի արուեստի վայելքի պահեր նուիրեցին ներկաներին: Դեկտեմբերի 22ին նախատեսուած է «Մեծ Համերգ» մասնակից Ալլա Լեւոնեանի խօսքերով՝ «Մեծ Աստղեր»ի մասնակցութեամբ: Պէտք է ենթադրել, որ համերգում «Միջին» կամ «Փոքր աստղեր» չեն լինելու...

2006 թուականին բազմաթիւ այլ մշակութային միջոցառումների մասին հնարաւոր չէ թուարկել մէկ յօդուածում, որի համար հայցում եմ նրանց ներողամտութիւնը:

Համայնքում հաճելի նորութիւն է Գազիկ խաչադրեանի «Սիլուետ»ով «Սիրուած Երգեր» հաղորդումը, ինչպէս նաեւ Ռոդրիկ Յովսէփեանի «Դիմագիծ» մշակութային պրոֆեսիոնալ հաղորդումը:

Ճանաչուած մտաւորական, բանաստեղծ «Համայնապատկերի» գլխաւոր խմբագիր Սարո Գէորգիկեանին շնորհուել է Գիւմրիի «Տարուայ Մարզ» տիտղոսը, նրան մեր ջերմ ամանորեայ շնորհաւարանքները:


Այժմ օտգակար մտքեր, դարձեալ մշակույթի ասպարէզից:

Հայաստանում շատ է խօսուում Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի միասնութեան մասին, նոյնիսկ՝ երկքաղաքացիութեան միջոցով Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները սկզբունքորէն բարելաւելու ուղղութեամբ եւ այլն...: Բաւական է նշել, որ 2006 թ. վերջին եռամսեակում Ամերիկեան հայմանքում արդէն կազմակերպուել է 4 անգամ դրամահաւաք-թեյեթոն: Այն պէտքէ շարունակուի քանի Մայր Հայրենիքը դրա կարիքը ունի:

Ասելիքս պարզեմ.

Վերջերս, Հայաստանում բարձր հանդիսաւորութեամբ տօնուեց Ռատիոյի 80, իսկ հեռուստատեսութեան 50 ամեակները, ըստ արժանաւորին նշուեցին այդ բնագաւառի նուիրեալները, ստացան պարգևատրութիւններ... կոչումներ: Այստեղ սփիւռքում դրամահաւաքների գործում մեծ գործ են կատարում հեռուստատեսութեան ու ռատիոյի երկարամեայ նուիրեալներ, Տիգրան Փենեսեանը, Արտյոմ Լազարեանը, Գազիկ Համբարձումեանը եւ շատ արուեստի եւ մշակույթի վաստակաշատ աշխատողների, որոնց մոռանալը արդար չէ, Հայաստան-Սփիւռք համահայկական համագործակցութեան ենթատէքստում: Այսքան որպէս յիշեցում...:

Շատ այլ բնագաւառներում առաջարկութիւններ, տասակէտներից, առաւել անուններից հրաժարուում եմ, քանզի առջեւում նոր տարի է որի առիթով բոլոր հայրենակիցներին իմ անկեղծ բարեմաղթութիւններն ու լաւագոյն, բարի ցանկութիւնները:



Կը մաղթեմք Հնչակեան գաղափարախօսութեան ոգին կրող «Մասիս» շաբաթաթերթին յարատեւութիւն

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Մնորհաւոր նոր Տարի եւ Ա. Ծնունդ մեր հայ ժողովուրդին եւ ամբողջ աշխարհին

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎՍԷՓ ԵՒ ՄԱՐԻ ԺԻՃԻՅԵԱՆ

ԸԱՅԱՍՏԱՆ ԸՆԹԱԿԱՅՐԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Միջազգային հանքաքանութեան յատուկ Անգլիոյ պաշտօնաթերթը «Մայնինկ ձրուները» իր 2005 Նոյեմբեր 5ի համարը ամբողջովին յատկացուցած էր Հայաստանի հանքային հարստութեանց ուսումնասիրութեան: «Արմենիա» խորագրով կողքին վրայ կ'երեւի Գառնիի տաճարը՝ կառուցուած Տրդատ I թագաւորին կողմէ, Ա. դարուն: Պաշտօնաթերթը կը բացուի Հայաստանի Առեւտրուի եւ Տնտեսութեան նախարար Կարէն Ճշմարիտեանի ներածականով, որ Հայաստանի հանքային հարստութեանց վրայ համապարփակ ակնարկ մը եւ շահագործման հրապուրիչ պայմաններու ներկայացումէն յետոյ համաշխարհային ընտանիքը կը հրաւիրէ նախաձեռնութիւններ ստանձնելու Հայաստանի հանքերու շահագործման նպատակով:

Տաներկու էջերու վրայ պատկերազարդ եւ ընդարձակ ուսումնասիրութեամբ մը թերթը նախ կը ներկայացնէ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական դիրքը, ապա պատմական ակնարկով մը կ'ամբողջացնէր ծանօթացումը՝ ամփոփ կերպով յիշելով պատմութեան թատերաբեմին վրայ անոր երեւումը ք.ա. 800 թուականէն սկսեալ, իբրեւ Վանի Ուրարտական թագաւորութիւն եւ Մեծն Տիգրանի կայսրութիւնը, որ կը ներգրաւէր ամբողջ կովկասն ու Արեւելեան Թուրքիան, իջնելով Հարաւ մինչեւ Սուրիա ու Լիբանան, եւ վերջապէս, հասնելով արդի ժամանակները:

Հայաստանի հանքային հարստութեան մաս կը կազմեն ալիւմին, երկաթ, մոլիբդէն, ոսկի, պղինձ, արծաթ, կապար, կաս եւ տուֆ, ինչպէս նաեւ, թանկագին ու գոհարեղէնի յատուկ քարեր: Երկիրը հարուստ է նաեւ հանքային ջուրերով եւ անուշ ջուրի աղբիւրներով ու լիճերով, որոնց մեծագոյնը՝ Սեւանայ լիճը իր 1400 քմ. քլմ. տարածութեամբ աշխարհի լեռնային լիճերու մեծագոյնն է: Հանքերը տարածուած են երկրին գրեթէ բոլոր կողմերը: Պղինձով հարուստ շրջաններ են Հիւսիսը՝ Ալլավերդին եւ Հարաւը՝ Քաջարանն ու Ղափանը: Ներկայիս Հայաստանի պղինձով ու մոլիբդէնով խառն ոսկիի պահեստները կը գնահատուին շուրջ 400 թոն, որոնք կը գտնուին գլխաւորաբար Շահումեանի, Զոդի եւ Մեղրաձորի մէջ: Հանքաքարի գանգուածը գտելէ յետոյ, ստացուած ոսկին հետեւեալ համեմատութիւնը կը ներկայացնէ մէկ թոն հանքաքարի վրայ. Մեղրաձոր՝ 15,9 կրամ, Զոդ՝ 8 կրամ, Շահումեան՝ 2,5 կրամ: Ըստ երկրաբանական տուեալներու վրայ հիմնուած տեղեկութեանց, քիչ հաւանական է որ Հայաստանի մէջ աւելի մեծ ոսկիի հանքեր գտնուին,

թէեւ միշտ ալ պէտք է ի մտի ունենալ որ Սոփիէթ շրջանի փնտռութիւնները ուղղուած էին մեծ չափի հանքավայրերու վրայ, եւ միջին չափի հանքավայրերն իսկ արժանի չեն նկատուած շահագործման: Հայաստանի ոսկին արտադրող գլխաւոր ընկերութիւններն են global gold-ը որ ամերիկեան ընկերութիւն մըն է, եւ A.G.R.C.ն ստանձնած է Զոդի եւ Մեղրաձորի հանքավայրերը եւ Արարատի գտումի գործարանը: 12 միլիոննոց այս ձեռնարկութիւնը սկսաւ 1996ին, տարեկան 30,000 տոննա (առնար 37 կրամ) ոսկի արտադրելու նախատեսութեամբ, առնար 200 տոնարէն: Գործարանին արտադրութիւնը 2002ին հասաւ 102,960 տոննա, իսկ 2003ին՝ 59,345 տոննա:

Global Gold-ը ստանձնած է Թուրքիան ու Հանքաւանի պահեստներուն շահագործումը, որոնք Հայաստանի ոսկիի, պղինձի եւ Մոլիբդէնի հանքերուն գլխաւոր շրջանները կը նկատուին սովետական ժամանակաշրջանէն ի վեր:

Զոդի հանքավայրը կը գտնուի Սեւանայ լիճին Արեւելքը, 180 քլմ. հեռու Երեւանէն, 2200-2500 բարձրութեան վրայ, Վարդենիսի շրջանին մէջ, ուր շուրջ 550 մարդ կ'աշխատի Զոդի հանքավայրը բանիլ սկսած է 1976ին, սակայն դադարած է 1996ին, նախքան վերոյիշեալ ընկերութիւններուն կողմէ շահագործման վերսկսումը: Մեղրաձորը Հրազդանի շրջանին մէջ է, շուրջ 50 քլմ. Երեւանէն: Շահագործումը սկսած է 1986ին ու դադարած՝ 1997ին, մինչեւ նոյն ընկերութիւններուն կողմէ վերսկսումը:

Բոլոր ուսումնասիրութիւնները ցոյց կու տան որ Հայաստան հարուստ հանքավայր մըն է, դարեւոր դիմացող պաշարներով: Մաղթենք որ անոնց շահագործումը ծառայէ հայրենի ժողովուրդին բարօրութեան:

Հայաստանի հանքային հարստութեանց շահագործումը կը թուի, թէ ախորժակը գրգռած է մեր հարեւան Ազրպէյճանին: Մտածել տուող գուզադիպութեամբ ու բովանդակութեամբ՝ համաշխարհային ուրիշ հանքաբանական օրկան մը՝ «Ուրլա Մայնին Աթօքս» գրեթէ միաժամանակ, 2005ի Սեպտեմբերին տեղեկագիր մը հրատարակած է Անկլօ-էյմըն Մայնինկի եւ Ազրպէյճանի միջեւ կնքուած պայմանագրի մը մասին, ըստ որուն վերոյիշեալ ընկերութիւնը 30 տարուան արտոնութիւն ձեռք ձգած է Ազրպէյճանի հանքերը շահագործելու: Այս գործին գլուխն են նախին նախագահ ձորձ Պուշի վարչակազմի պետ ձոն

Սունունու եւ Իրանի նախկին Շահին նախարար Ռեզա Վեզիրի: Ըստ այդ տեղեկագրին, Ազրպէյճանի ոսկիի պահեստը կը համապատասխանէ 7.2 միլիոն տոննա, 28.1 միլիոն տոննա արծաթի եւ 2.4 միլիոն թոն պղինձի: Ընկերութիւնը անմիջական հետաքրքրութիւն ներկայացնող երեք համաձայնագիր կնքած է 1062 քառ. քլմ. հանքավայրերու վրայ, որոնց երկուքը Ազրպէյճանի Հիւսիս Արեւմուտքը՝ Հայաստանի սահմանին մօտ կը գտնուին, մինչ երրորդը Նախիջեւանի մէջ, որ Ազրպէյճանի շրջան մըն է Հայաստանի Արեւմուտքը, եւ որուն ոսկիի արտադրութիւնը 2007ի համար նախատեսուած է 250,000 տոննա՝ 100 միլ. տոլար փոխարժէքով: Մեզի համար յատուկ մտահոգութեան առարկայ է Նախիջեւանի հանքերուն շահագործումը, քանի որ, Ղարաբաղի նման անոր ալ ազատագրումէն յետոյ, հանքային հարստութեան գրկուած հողամաս մը պիտի ստանանք:

«Ընկերութիւնը երեք համաձայնագիր ունի նաեւ Հայաստանի կողմէ գրաւուած ազրպէյճանական շրջաններուն մէջ, որոնց շահագործման պիտի կարենայ ձեռնարկել միայն այն ատեն, երբ համաձայնութիւն գոյանայ Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ: Կը յուսացուի որ հայկական ուժերը քաշուին յա-

ջորդ քանի մը տարիներուն»:
Ուրեմն, այդպէս «կը յուսացուի որ հայկական ուժերը քաշուին յաջորդ քանի մը տարիներուն»:
Արեւմուտքի հանքային ընկերութիւններուն շահերը այդպէս կը պահանջեն եւ այդպէս ալ կրնայ ըլլալ, եթէ Հայաստանի շահերն ալ այդպէս պահանջեն: Հայաստանի գուզահեռ՝ եթէ Ռուսաստանի շահերն ալ այդպէս պահանջեն:

Այս բոլորէն վեր հաշուի պէտք է առնել, մանաւանդ, Ղարաբաղի ժողովուրդին շահերը, որ հազարաւոր նահատակներու կեանքի գնով նուաճեց իր ազատութիւնն ու անկախ Հայրենիքը: Եւ այդ թանկարժէք ազատութիւնը պահպանելու միշտ պատրաստ են Ղարաբաղի արի բանակն ու ժողովուրդը՝ բոլոր բռնագրաւիչներուն դէմ:

Եւ տակաւին այդ բռնագրաւիչները պէտք է մտածեն Նախիջեւանի մասին, «որ ազրպէյճանական գրպան մըն է», Ազրպէյճանի գրպանը դրուած նուէր մը, որուն ընդերքը պեղելով հարստութիւնը կը կողոպտեն, իրենց համար անպէտք սրբութիւնները փծացնելով: Բայց որքան ալ քանդեն տապա-նաքար, խաչքար ու եկեղեցի, որքան ալ կողոպտեն ընդերկրեայ հարստութիւնները՝ հողը կը մնայ տեղը հազարամեայ այդ հայկական հողը, ի վերջոյ, իր տիրոջ վերադարձուելու համար:

ԹԱՆԿԱԳԻՆ ՅՈՒՇ ՍԸ

ԱՐՄԷՆ ՏԱՏՈՒՐ

Միբելի կաղանդ պապի, նոր հասեր էինք վարին Եգիպտոսի Զակարիք գիւղաքաղաքը: Հայութիւնը հաւաքուեր էր ակումբ՝ քեզ դիմաւորելու: Օշական մանկապարտէզ-նախակրթարանի երեխաներս ալ Օր. Շուշանի դաշնակին ընկերակցութեամբ կ'ընդգնէր քեզին: Առաջին անգամ պիտի տեսնէի քեզ՝ անհամբեր բամպակ մօրուքով, ժպիտը դէմքիդ: Ինծի նուիրեցիր գոյն գոյն մատիտ եւ գրչատուփ: Յուզուած էի հրճուանքս:

Մանուկ մարդկութիւնը կը հաւատայ ու պիտի հաւատայ միշտ Կաղանդ Պապիին, անոր բարի հրաշագործութեան:

Թոյլ տուր քանի մը տողով ներկայացնեմ ինդրանքս՝ իբր լիշեցում:

Մեծագոյն նուէրը՝ խաղաղութիւն աշխարհիս: Վերջ՝ մահասփիւռ մարտերու, որ կը հրկիզեն ամէնուր, կը իլլեն կեանքեր անմեղ, անհամար:

Խնդրանք մը ունիմ մասնաւոր՝ նաեւ Հայաստանի համար, հրաշքի համագոր...: Միակամ, միաձոյլ ժողովուրդ: Վերջ՝ անթիւ, անհամար

խմբակներու, հատուածիկներու որ կ'անտեսեն հաւաքական ոյժին դերն ու հմայքը, դիմագրաւելու համար ազգին գոյութեան իսկ սպառնացող վտանգը:

Եղունին մէկ տարբերակն է այսօր տեղի ունեցածը, կը լքենք, կը հեռանանք Արագածէն, Սեւանէն Մայր Հողէն: Ձենք մնար ամուր կառչած անոր, որ հրաշագործ է եթէ սիրենք գայն ամէն բանէ վեր:

Անգութ է պատմութեան մեր շղթան, դիւրաբեկ, տկար: Ախ, Կաղանդ Պապի, կասեցուր արտահոսքը հայութեան՝ Մայր Հայրենիքէն՝ քու ուժիդ հմայքով: Այս թուղթս՝ մասնաւոր մեր երեխաներուն համար՝ մեծ ու պզտիկ...:

Մէկ օր կը հրճուինք քու պարգեւած նուէրներուդ համար:

Ախ որքան տխուր պիտի ըլլար աշխարհ, եթէ գոյութիւն չունենայիր դուն, սիրելի Կապանդ Պապի: Գալուստդ նոր յոյսերով կը լեցնէ մեր սիրտերը, մարդկութիւնը համակ՝ որ ամէն Ամանորի կ'ակնկալէ նոր Արշալոյսներ, երջանկաբեր օրեր: Շնորհաւոր Ամանոր:

Մի՛շտ քեզ յարգով ու սիրով՝

Յաջողութեան մաղթանքներ
Շնորհաւոր Ամանոր
եւ Ա. Ծնունդ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ՊԵՏՐՈՍ ԹՈՄԱՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՈՒ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ

«ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՍԸ»

ԼԻԼԻԹ ՔԷԶԵԱՆ

- Արփի՞ քնած չե՞ս:

- Չէ: Տղայիդ հարսանիքի նուէրներն էինք դասաւորում:

- Բան-ման կա՞ր:

- Հա: Եօթ մատանի:

- Մեզ մի հարսանիք էլ չարինք:

- Ո՞նչ անէինք, երբ դու ինձ փախցրիր:

- Մզոյնս աղջիկ, քո ոտքով չեկա՞ր:

- Սարեր խոստացար՝ եկայ:

- Բա որ հիմա էլ եմ խոստանում, ինչո՞ւ չես հաւատում:

- Խեղքս հացի հետ չեմ կերել: Չէք ճանաչում՝ հաւատում էք, - հոգոց քաշեց Արփին:

- «Խեղքս հացի հետ չեմ կերել», ուր է քեզ խելք, որ ուտես էլ:

- Քնիր, քնիր, խօսելու ժամանակ չէ, - ասաց կինը ու բարձրաձայն մտածեց. «Քո պատճառով անմատանի մնացի: Հա ուզում էք՝ երեխեքս էին ծնւում: Հա ուզում էք՝ երեխեքս դպրոց էն գնում: Քո երեսից չէ՞ր, որ հիւանդացայ: Հիմա մատանին էլ ինչիս է պէտք»:

- Էդ ի՞նչ ես քեզ ու քեզ փնթփնթում, կնիկ:

- Ի՞նչ մատանի:

- Էն չառածը մատանին: Էն, որ գիշեր-ցերեկ ասում ես, էն աշխարհում էլ կ'ստես:

- Առաջինը դու ես մեռնելու:

- Էդ ինչո՞ւ ես ուզում էրքան ապրել:

- Որ չուզողի աչքը հանեմ:

- Առաջինը ես եմ մեռնելու, որ անտէր մնաս: Քո հետ ապրելը մեռնելուց վատ է:

- Որ լաւը լինէիր, հերդ քեզ կը պահէր: Տասնըչորս տարեկան չկայիր՝ լաց եղար, որ քեզ փախցնեմ: Քեզ կնիկ սարքողը ես եմ:

- Հա, որ Աթանեսնց Ղազարը չլիներ, Արփին կնիկ սարքողն ո՞վ էր:

Արփին շուռ եկաւ դէպի պատը, երեսը թեքեց միշտ յարբած Ղազարից, որ հիմա մի կարմիր ու տաճեւ մասգունդ էր: Խմիչքի թթուած ու ծանր հոտ էր, որ քառասուն տարի գլխապտոյտ էր առաջացնում Արփիի աշխարհում:

«Տեսնես ուրիշ աշխարհներում էլ են էսքան խմում: Էս հողը ո՞նց է պահում էսքան յանցաւորներին»:

Արփին՝ դէմքը պատին, աչքերը փակել էր բոլոր բաների վրայ: Բնութիւնը զարմանալիօրէն կէս դարից աւելի զբաղուել էր աւերելու ու աւերելու, եւ այնուամենայնիւ Արփին երեխայի տեսքով էր մնացել: Չորս աղջիկ ու մի տղայ էր բերել աշխարհ ու լոյսեր վատել նրանց աշխարհներում: Լոյսերը տուել էր, տառապանքները պահել: Ղազարի միակ ու հիմնական զբաղմունքը վերջին տարիներին թունելի շինարարութեան հնոցը վառելուց բացի խմելն էր, խմում էր՝ հակառակ բժիշկների յորդորների:

Չէր հիւանդանում ու ծիծաղում էր բժշկութեան վրայ: Կամ որեւէ բան էր ջարդում: Նրանց տանը ջարդելու բան չկար. Արփին էր ջարդուել, մոմուել: Հայերէն տառերը ռուսերէնից չէր տարբերում, բայց երբ խմում էր, դառնում էր ճարտար, հնարամիտ: Պատերազմից յետոյ, դժուար տարիներին անգամ Ղազարի խմիչքը, նաեւ ուտելիքը անպակաս էին: Ողջ աշխարհը դարդից մեռնէր, Ղազարի ուրախութիւնը հետն էլ հայհոյանքը անպակաս էին: Աշխարհը ըստ նրա հիմնուած է կոկորդի

վրայ: Աշխարհի կեդրոնն էլ կոկորդին է: Ում կոկորդով շատ բան է անցնում, նա շատ մեծ է, ում կոկորդով քիչ բան է անցնում նա հեշ մարդ է:

Լուսադէմին յանկարծակի Արփիի հագը բռնեց: Ղազարը բոլորվին փոխուեց, քնքշացաւ:

- Արփի ջան, ի՞նչ պատահեց քեզ: Ջուր բերել տա՞մ, - Ղազարը անսքող յուզմունք էր, գուրգուրանք: Ջարմանալ կարելի էր նա այդքան կտրուկ փոփոխութեան վրայ: Բայց Արփին չզարմացաւ: Նա յորանջելով շուռ եկաւ միւս կողքին:

- «Ջուր բերել տա՞մ», մի անգամ չեղաւ ասելիք «բերե՞մ»:

- Ուզում ես երեք տեղ աշխատեմ, յետոյ էլ դառնամ կնկայ ջուր տուող հա՞ - ձայնը խստացրեց Ղազարը:

- Դու մի տեղ ես աշխատում, էլ էլ քեզ համար, քարածուխը մի տեղից միւս տեղն ես լցնում: Արածդ էդ չի՞:

- Ամէն մարդ մի բան մի տեղից տանի մէկ ուրիշ տեղ հերիք է, - փրկափայեց Ղազարը:

Յաջորդ օրը աշխատանքից շուտ վերադարձաւ, ձայն տուեց կնիքը.

- Արփի:

- Ասա

- Էս անտէր արկի բեկորները մէջս ման են գալիս, որտեղ ուզում են, աչքտեղ են հանգստանում: Ես հանգստավայր եմ դարձե՞լ:

- Քանի՞ տարի է, ասում եմ գնանք հանե՞ք:

Պարզուեց, որ իսկապէս Ղազարի մարմնի մէջ գերմանական արկի բեկորներ կան: Երկու անգամ վիրահատեցին: Երկու անգամ բժիշկները խիստ պատուիրեցին չիմել: «Խմելը մահ է» ասացին, եւ Ղազար վախեցաւ: Այնքան վախեցաւ, որ մի շաբաթ բոլորովին չիմեց:

Մի օր էլ առանց որեւէ մէկին բան ասելու գնաց անտառ: Գնաց գտաւ այն ծառերը, որոնց վրայ խաչեր էր փորել ու խաչերի տակ գրել էր պատերազմում ընկած իր ընկերների անունները՝ Արամ, Բեկո, Սարգիս, Մակիչ: Փորել էր, կարծելով յաւերժանում է՝ ինչ իմանաս ինչը...

Խաչերը ծառերի բնիկ վրայ լայնացել էին, ծոմուել, բայց դեռ կային: Ձեռքով շօշափեց խաչերը, շօշափեց բնիկին քանդակուած ընկերների անունները ու տխուր ասաց. «Է, փուռ աշխարհ»: Ուզեց լաց լինել, բայց խմած չէր, այդ պատճառով էլ չկարողացաւ լալ: Եւ քանի որ չկարողացաւ լալ, հոգում եղած ծանրութիւնը աւելի ծանրացաւ, իսկ թիկունքին դող զգաց: Տխուր վերադարձաւ տուն, տխուր ասաց:

- Արփի մեռնում եմ: Եւ իսկապէս մեռաւ:

Փեսաները գումար հաւաքեցին, կոշիկ ու շոր առան, հոգեհացի ծախս արին: Դազաղը շրջապատեցին հարազատները: Ղազարը կարծես քնած լինէր: (Քնածի ու մեռածի մէջ տարբերութիւնը մի կեանք է, էլի):

Գլխավերելը նստեց սզաւոր Արփին ու ողբաց:

Գերեզմանոցում, երբ լացը վերջացրին եւ յուղարկաւորները «ողորմի քեզ, Ղազար» ասացին ու դազաղի կափարիչը վրայ բերին, Ղազարը ձեռքերով դազաղի կափարիչը վեր հանեց: Մարդիկ սար-

սափահար մի կողմ փախան, իսկ Ղազարը զարմացած շուրջը նայելով գոռաց.

- Ե՛ս, էս ինչ էք անում, շունշան որդիք կենդանի-կենդանի թաղում էք, հա՞:

Ղազարը դազաղից դուրս եկաւ եւ տխուր նայեց յուղարկաւորներին: Իսկ յուղարկաւորները գարմանքից քարացել էին: Ոմանք խաչ էին հանում երեսներին, ոմանք ապշանքից, թէ վախից գրեթէ չէին շնչում: Ոչ ոք չզիտեր իր անելիքը: Այնժամ Ղազարը քայլեց դէպի գիւղը: Գնում էր, բոբոկի՝ կոշիկները թեւի տակ դրած:

- Հազար եմ ասել, մեռելի կոշիկները մեծ առէք, շունշան որդիք: Բա ես սրա՞ն եմ արժանի: Վրաս մարդավարի լաց եղող էլ չկար: Անունն էլ դրել են, թէ Աթանեսնց Ղազարոսը չորս աղջիկ ունի: Սրանից յետոյ որ մեռնելս գայ, գնալու եմ ճահճում խեղդուեմ, որ դիակս չգանեք, շունշան որդիք:

Գնում էր Ղազարը, եւ յուղարկաւորները գնում էին նրա ետեւից: Եւ երբ հասան տուն Ղազարի բաժակակից ընկեր, ուտող-խմող, կատակչի վազոն ասաց.

- Ղազար, մի լաւ լուացուիր, որ ջուրը քշի տանի:

- Ի՞նչը քշի տանի:

- Մեղքերդ, Ղազար մեղքերդ:

- Իմ մեղքերդ: Ես ի՞նչ մեղք ունեմ, ծակ Պոլոզի տղայ:

Դու քո մեղքերից խօսիր, որ լցնենք ծովը՝ ծովը կը ցամաքի: Հոգեհացի սեղանը արդէն պատրաստ էր, եւ յուղարկաւորները տեղ գրաւեցին նրա շուրջը:

- Դու էն ասա, Ղազար, - պոկ չէր գալիս վազոն, - էն աշխարհում ի՞նչ կար:

- Էն աշխարհում ծակ Պոլոզ կար: Ասում էր, վազոնն եմ սպասում, էսօր, վաղը գալու է: Դու բաժակները լցրու:

Վազոն լցրեց բաժակն ու ոտքի ելաւ:

- Ժողովուրդ, - ասաց նա լրջացած, - հիմա մենք ինչ ենք, յուղարկաւոր, թէ՞ աչքալուսանք տուող: Մենք լալով գնացինք գերեզմանոց որպէս յուղարկաւոր, բայց գերեզմանոցից դարձանք որպէս աչքալուսանք տուող, եւ մենք ուրախ ենք: Մենք ուրախ ենք, որ մեր սիրելի Ղազարը էլի մեզ հետ է: Ղազար ջան, կենացդ: Էլ քեզ մահ չկայ: Արփի քոյրիկ, աղջիկներ, փեսաներ, ձեր աչքն էլ, մեր աչքն էլ լոյս լինի:

- Աչքներդ լոյս, - գոռգոռացին տարբեր կողմերց:

Բոլորը ուրախ էին, բայց

ամէնից շատ ուրախ էր Ղազարը: Մի երկու բաժակ դատարկելուց յետոյ նա իրեն հռչակեց սեղանի թամադա ու ոտքի ելաւ:

- Քրիստոսի ծննդից մինչեւ հիմա աշխարհում երկու մարդ են մեռնելուց յետոյ դազաղի մէջ յարութիւն առել, - ասաց նա, - մէկը Սուրբ Ղազարոսն էր, մէկն էլ Աթանեսնց տղայ Ղազարը: Հոգիդ լոյս դառնայ, հայրիկ, էլի օղորմաթասս խմենք, - ասաց Ղազարն ու քիթը ձայնաւով վեր քաշեց:

Բոլորը ծիծաղում էին: Ծիծաղների ու գոռգոռոցի միջից Ղազարի աչքը յանկարծ Արփիին ընկաւ՝ կուչ եկած էր, փոքր: Երեւի մանկութեան տարիների անտառի մէջ էր, ծաղիկների: Ծաղուր ծաղիկներ էին, շաղոց արեւների համար արծաթ-շաղերից թագ էր հիւսում:

Ղազարը տխրեց, աչքերն լցուցին արցունքներով եւ առանց տեղի վեր կենալու ասաց.

- Արփի ջան, ախ, Արփի ջան, երանի այն օրը, որ փախար եկար ինձ մօտ: Ախ, երանի այն օրը: Իմ նազանի, իմ տանջուած Արփի ջան, իմ միակ Արփի ջան, իմ թագուհի, - ու լաց եղաւ՝ անքրտոցով, մեծաւարի, եւ լացի միջից ասաց, - ես քո հոգին կերայ, Արփի ջան, ես քո կեանքը կերայ: Էդպէս, որ մի բուռ ես դարձել՝ ես եմ մեղաւոր Արփի ջան, ներող եղիր:

Ուրախութիւնը սառեց սեղանի շուրջը, Վազոն դադարեց կատակելուց, իսկ Արփին փղձկաց:

- Ես եմ կերել քո կեանքը, ես եմ կերել քո հոգին, իմ գլխաւոր, իմ միտուածար: Դու, որ մեռար, նոր հասկացայ, թէ ինչքան վատն եմ եղել ես, իմ սուրբ Ղազարոս ջան: Սուրբ ես, սուրբ չես, բա ինչ ես: Որ սուրբ չլինէիր, էդ խմելը է, Ղազար ջան, որ մեր տունը քանդում է: Խմելը որ չլինի...

- Մեր տունը քանդո՞ւմ, յանկարծ բաժակը սեղանին զարկեց Ղազարը, - մեր տունը նոր է քանդուե՞լ... Էն օրը, որ հերդ քեզ տնից դուրս գցեց, էդ օրը քանդուեց, Մզոյնս աղջիկ: Հլա ո՞ւր ես... մինչեւ էսօր խմածս հեշ: Պիտի խմել, որ ամբողջ աշխարհը լի չի էսօրը, սուրբ Ղազարոսի օրը պտի միշտ տօնուի: Դու ո՞վ ես, որ սրբի դէմ խօսես: Ճիշդ չեմ ասո՞ւմ, ժողովուրդ: Ես ապրողների մէջ միակ սուրբը լինեմ՝ կնիկ Արփին դեռ բան ասի՞:

Փութկալն անյարմար էր, բայց եղան մարդիկ որ չկարողացան գսպել իրենց եւ փութկացին:

Դրանից յետոյ ամբողջ գիւղում, ամբողջ շրջանում Աթանեսնց Ղազարին կոչում էին, «Սուրբ Ղազարոս»:

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵԼԵՊԵԱՆ**

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը

Կը շնորհաւորէ իր բոլոր ընկեր-ընկերուհիներուն,
հայ ժողովուրդի եւ իր զոյգ հանրապետութիւններուն՝
Հայաստանի եւ Արցախի Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Այս բարեբաստիկ առիթով ան բոլորին կը մաղթէ, որ
2007 տարին ըլլայ քաջառողջութեան, արելաւորութեան եւ
յաջողութեան, ինչպէս նաեւ ազգային ձգտումներու
նուիրագործման, Հայրենիքէն ներս բարօր կեանքի ստեղծման,
Սփիւռք-Հայրենիք կապերու առաւել սերտացման, ազգային
միասնութեան ձեռքբերման եւ աշխարհի խաղաղութեան
բախտորոշ տարի:



Wahib

Wahib's
MIDDLE EAST RESTAURANT
الشرق مطعم
MEDITERRANEAN
LEBANESE FOOD

COME IN AND
ENJOY
OUR PATIO
AND THE
FINEST
SHISA
"HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT
BANQUET HALL
EVERY
FRIDAY ~ & ~ SATURDAY
NIGHT
INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST,ALHAMBRA,CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493